

ԹԵՐԵՉԸ ՅԻՍՈՒՍ ՄԱՆԿԱՆ

ԵՐԴԵԼ ՏԻՐՈՉ ՈՂՈՐԾՈՒԹԻՒՆԸ

(Ի նիւթն անուանուող անուանուող անուանուող)

ՄԱՍՆ Դ.



Թարգմանեց՝

ՄԱՇՏՈՅ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

gradaran@mashtoz.org

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խընդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Մաշտոց Վահէ Ղազարեան

6. ԳԷՊԻ ՀՌՈՄ (1887)

Ուխտագնացութիւնը Հոռոմ հօր եւ Սելիմի հետ – Փարիզի «Յաղթանակների Տիրամօր» եկեղեցին – Ծուէչցարիան – Միլանում, Վենետիկում, Փաղովաչում եւ Բոլոնիայում – Լօրէթոյի Սուրբ Տան մօտ – Ժամանումը Հոռոմ – Այցելութիւնը Հոռոմի Սրբազան Քահանայապետ Լեոն ԺԳ-ին – Դառնութիւն եւ վստահութիւն – Վերադարձի ճանապարհին. Պոմպէյ, Նապոլի, Ասսիզի, Ֆիրենցէ, Ջէնովա – Նամակներ Բէլէոյի Եպիսկոպոսին – Սպասման երեք ամիսները

156. Բէյէոյի ճամփորդութիւնից երեք օր անց, պարտաւոր էի մի շատ աւելի երկար ուղեւորութիւն կատարել, այն է՝ դէպի Յաւիտենական Քաղաք¹: Ա՛հ, ինչպիսի ճամփորդութիւն: Ինձ աւելի կը թեց՝ քան ուսման երկար տարիները. աչքերիս առջեւ յայտնի կերպով ցուցադրեց՝ թէ որքան ունայն է այն ամէնը, որ անցնում է, եւ թէ ինչպէս է այս արեւի տակ ամէն բան հոգու տուայտանք²: Բայց այնուամենայնիւ, շատ գեղեցիկութիւններ տեսայ, դիտեցի քրիստոնէական արուեստի ու ճարտարապետութեան հրաշք գլուխգործոցները, եւ յատկապէս քայլեցի Սուրբ Առաքեալների հետքերով դրոշմուած հողի վրայով, հող՝ որ ներկուած է մարտիրոսների արեամբ: Այո՛, հոգիս ընդարձակուած էր սրբազան իրերին հպուելիս:

Ուրախ եմ Հոռոմը այցելած լինելու համար, բայց եւ լաւ եմ ըմբռնում այն աշխարհիկ անձանց ենթադրութիւնները, ըստ որոնց՝ հայրիկն ինձ մասնակից էր դարձնում այս մեծ ճամփորդութեանը՝ վանական կեանքի հանդէպ ունեցած գաղափարներս փոխելու համար: Եւ իրօք, բազում առիթներ կային, որոնք կարող էին սասանել անհաստատ կոչման խարխուլ հիմքերը: Երբեք ապրած չլինելով բարձր դասակարգի մարդկանց շրջանակում, ես ու Սելինը յայտնուել էինք ազնուականներից բաղկացած խմբի մէջ (ուխտագնացների մեծամասնութիւնը ազնուականներ էին): Բաւական հեռու լինելով մեզ շփացնել կարողանալուց, ազնուական այդ բոլոր տիտղոսները մեր աչքին երեւացին ծուխ եւ միմիայն ծուխ: Հեռուից, երբեմն, փոշի էին փչել աչքերիս մէջ, բայց մօտիկից տեսայ՝ որ «ամէն փայլող բան ոսկի չէ», եւ հասկացայ Նմանութեան գրքի հետեւեալ խօսքերը. «Մի՛ վազիր այն ստուերի ետեւից, որ կոչուած է ՄԵԾ ԱՆՈՒՆ, մի՛ փափաքիր բազմաթիւ ծանօթութիւններ ունենալ մարդկանց հետ եւ մի՛ ջանա իւրայատուկ բարեկամութիւններ մշակել»³:

Հասկացայ, որ ճշմարիտ մեծութիւնը հոգու մէջ է, ո՛չ թէ անուան, քանի որ, ինչպէս ասում է Եսային, «Աստուած մի այլ անուն է տալու Իր ընտրեալներին»⁴. Նաեւ Յովհաննէս Առաքեալն ասում է, որ «յաղթողը մի սպիտակ խիճ է ստանալու, որի վրայ գրուած է լինելու մի նոր անուն, որը ոչ ոք չի իմանալու, բացի նրանից՝ ով ստանալու է այն»⁵: Հետեւաբար, միայն Երկնքում կ'իմանանք մեր ազնուական տիտղոսները: Այնժամ ամէն ոք կը ստանայ այն գովասանքը, որին արժանացել է⁶, եւ նա՛ ով ընտրեց ամենաաղքատն ու բոլորից մոռացուածը լինել երկրի վրայ՝ ի սէր Յիսուսի, հէնց նա է՝ որ կը լինի առաջինը, ամենանշանաւորը, աստուածային շնորհներով ամէնից աւելի ճոխացածը:

¹ Ուխտագնացութիւնը կազմակերպուել էր Քուլթանսի թեմի կողմից, Սրբազան Քահանայապետ Լեոն ԺԳ-ի քահանայական օժման 50ամեակի կապակցութեամբ: Բէյէոյի թեմը նոյնպէս մասնակցեց յարգանքի այս արտայայտութեանը:

² Ժող 2, 11

³ Նմանութիւն Յիսուս Քրիստոսի, Գ, ԻԳ 2

⁴ Ես 65, 15

⁵ Յյտ 2, 17

⁶ 1Կր 4, 5

157. Միւս փորձառութիւնս, որ ունեցայ, քահանաների վերաբերեալ էր: Նրանց ընկերակցութեան մէջ ապրած չլինելով, չէի կարողանում լաւ ըմբռնել Կարմեղոսի բարենորոգման գլխաւոր նպատակը: Մեղաւորների համար աղօթելն ինձ հմայում էր, բայց աղօթել քահանաների հոգիների համար, որոնք բիւրեղից աւելի մաքուր էի կարծում, միայն զարմանք էր պատճառում ինձ:

Ա՛հ, կոչումս իտալիայում հասկացայ, եւ հարկ չեղաւ այդքան կարեւոր ճանաչողութիւնը ձեռքբերելու համար շատ հեռուները գնալ:

Մէկ ամիս ապրեցի շատ սուրբ քահանաների հետ եւ տեսայ, որ թէեւ իրենց վեհ արժանապատուութիւնը բարձրացնում է իրենց հրեշտակներից է՛լ աւելի վեր, այնուամենայնիւ չեն դադարում տկար ու դիւրաբեկ մարդիկ լինելուց ... : Եւ եթէ սուրբ քահանաները, որոնց Յիսուս Աւետարանում անուանում է «երկիրը համեմող աղ», ցուցադրում են՝ թէ որքա՛ն կարիքն ունեն աղօթքի օգնութեան, ի՞նչ պիտի ասենք, ուրեմն, գաղջերի մասին: Մի՞թէ Յիսուս չասաց նաեւ. «Եթէ աղն անհամանայ, այլեւս ինչո՞վ պիտի աղուի»¹:

Ա՛հ, Մայր իմ, քանիցս գեղեցիկ է այն կոչումը, որն իբրեւ նպատակ ունի հոգիների համար սահմանուած աղի պահպանումը: Կարմեղոսի կոչումն է դա, քանզի մեր աղօթքների ու զոհողութիւնների միակ նպատակը առաքեալների առաքեալներ լինելն է, աղօթելով նրանց համար, մինչ իրենք աւետարանում են հոգիներին խօսքով, բայց յատկապէս՝ գործով ու օրինակներով ... : Կանգ եմ առնում այստեղ, որովհետեւ եթէ շարունակեմ այս նիւթի շուրջ խօսել, չեմ վերջացնի երբեք:

158. Մայր իմ, կը պատմեմ ճամփորդութիւնս զանազան մանրամասներով. ներողութիւն եմ խնդրում, եթէ դրանք ձեզ շատ կը թուան, գրելուց առաջ չեմ մտածում եւ թերեւս ձանձրալի կը լինի պատմութիւնս: Մխիթարում եմ այն մտածումով, որ Երկնքում ձեր հետ կրկին կը խօսեմ ընդունածս շնորհների մասին եւ դա կը կարողանամ անել, այնտեղ, հաճելի ու գեղեցիկ բառերով: Այլեւս ոչինչ չի կարողանայ խանգարել մեր մտերիմ զբօսանքներին եւ միայն մի հայեացքով նոյնիսկ կը կարողանաք հասկանալ ամէն բան: Աւա՛ղ, քանի որ դեռ ստիպուած եմ օգտագործել այս տխուր երկրի բարբառը, կը ջանամ անել դա փոքրիկ մանկան պարզութեամբ, որը լաւ է ճանաչում իր մայրիկի սէրը:

7 Նոյեմբեր. ուխտագնացները մեկնում են Փարիզից, բայց հայրիկը մեզ այնտեղ տարել էր մի քանի օր առաջ, որպէսզի հնարաւորութիւնն ունենայինք այցելելու քաղաքը:

Մի գիշեր, ժամը 3ին², կտրում անցնում էինք դեռեւս քնած Լիզէոն. բազում տպաւորութիւններ ու մտքեր անցան հոգուս միջով: Գնում էի դէպի անյայտը եւ մեծամեծ բաներ էին ինձ այնտեղ սպասում ... : Հայրիկն ուրախ էր. երբ գնացքը շարժուեց, սկսեց մի հին կրկնեղբ երգել. «Թաւալուիր, թաւալուիր, իմ կառք: Ահա մենք մեծ ճանապարհի վրայ ենք»: Հասնելով Փարիզ, իսկոյն սկսեցինք մեր այցելութիւնները: Միրելի հայրիկս շատ յոգնեց մեզ հաճոյք պատճառելու համար: Մայրաքաղաքի այդ բոլոր հրաշակերտների մէջ միայն մէկն ինձ հիացրեց, այն է՝ «Յաղթանակների Տիրամայրը»: Այն՝ ինչ զգացի նրա ոտքերի առաջ, չեմ կարող խօսքերով արտայայտել: Շնորհները, որ հեղեց հոգուս վրայ, այնքան խոր կերպով յուզեցին սիրտս, որ միայն արցունքներս կարողացան արտայայտել երջանկութիւնս. ինչպէս Առաջին Հաղորդութեան օրը: Սուրբ Կոյսն ինձ զգացրեց, որ հէնց ինքն էր ժպտացել ու բժշկել ինձ մանկութեան օրերին: Հասկացայ, որ հսկում էր վրաս, որ

¹ Մտթ 5, 13

² 1887ի Նոյ. 4ին, ուրբաթ:

իր դուստրն էի, որով եւ կարող էի իրեն միմիայն «Մայրիկ» կոչել, որովհետեւ այս անունն ինձ ակելի քնքուշ էր թւում՝ քան «Մայր» տիտղոսը: Խնդրեցի պաշտպանել ինձ միշտ եւ շուտով իրականացնել երազանքս, թաքցնելով ինձ իր կուսական թիկնոցի հովանու տակ: Սա էր մանկութեանս իղձերից մէկը: Տարիքի մէջ աճելով հասկացել էի, որ Կարմեղոսում իրօք կարող էի գտնել Սուրբ Կոյսի թիկնոցը, եւ դա պատճառ էր հանդիսացել, որպէսզի դէպի այդ բարեբեր լեռն ուղղուէին բոլոր փափաքներս:

Ինչպէս նաեւ խնդրեցի Յաղթանակների Տիրամօրը հեռացնել ինձնից այն ամէնը, որ կարող էր նսեմացնել մաքրութիւնս. չէի անգիտանում, որ այնպիսի ճամփորդութեան ընթացքում, ինչպիսին է դէպի Իտալիա կատարուողը, կարող էին վրդովեցուցիչ շատ դէպքեր պատահել: յատկապէս որովհետեւ չէի ճանաչում չարը, վախենում էի այն բացայայտելուց, քանզի մինչ այդ չէի փորձարկել այլ բան, եթէ ոչ՝ որ «ամէն բան մաքուր է մաքուրների համար»¹ եւ որ ուղիղ ու պարզ հոգին չար չի տեսնում ոչնչի մէջ. եւ իրօք, չարը գոյութիւն ունի անմաքուր սրտերում, եւ ո՛չ թէ անկենդան առարկաների մէջ:

Աղօթեցի նաեւ Սուրբ Յովսէփին, որպէսզի հսկէր վրաս: Մանկութեանս օրերից ի վեր նրա հանդէպ մի ջերմեռանդութիւն ունէի, որ խառնուում էր Աստուածամօր հանդէպ ունեցած սիրոյս հետ: Ամէն օր «Սուրբ Յովսէփ, հայր եւ պաշտպան կուսանաց» աղօթքն էի ասում: Այսպիսով, հեռաւոր ճամփորդութիւնս ձեռնարկեցի առանց որեւէ վախի. այնքան լաւ էի պաշտպանուած, որ անհնարին էր թւում ինչ որ մի բանից երկնչելը:

159. Մոնմառթրի եկեղեցիում Սուրբ Սրտին նուիրուելուց յետոյ², Փարիզից մեկնեցինք երկուշաբթի օրը առաւօտեան ժամը 7ին³. շատ շուտով արդէն ծանօթացել էինք ուխտագնացութեանը մասնակցող անձանց հետ: Ես, որ այնքան երկչոտ էի՝ որ հազիւ էի համարձակուում խօսել, ինձ կատարելապէս ազատուած գտայ այդ նեղացուցիչ թերութիւնից. զարմանքով նկատեցի, որ անկաշկանդ խօսում էի բոլոր մեծահասակ պարոնների ու տիկիւնների, քահանաների եւ, վերջապէս, նաեւ իր՝ Քուլթանսի գերապայծառ Եպիսկոպոսի հետ: Կարծես ամբողջ կեանքս այդ միջավայրում անցկացրած լինէի: Կարծում եմ՝ թէ տհաճ չէինք ոչ ոքի եւ հայրիկը հպարտ էր թւում իր երկու դուստրերի համար. բայց եթէ նա հպարտ էր մեզնով, մենք նոյնպէս նմանօրինակ զգացումներ էինք փայփայում իր նկատմամբ, քանզի բոլոր ուխտագնացների մէջ չկար ակելի գեղեցիկ տղամարդ՝ քան իմ սիրելի թագաւորը: Միշտ մեր կողքին էր. յաճախ, երբ մեր բաժանմունքում չէինք լինում կամ մի քանի ըոպէով հեռանում էինք իրենից, կանչում էր՝ որպէսզի հեռանալուց առաջ համբուրէինք իրեն ... ինչպէս Լիզէոյում ... : Գերյարգելի Ռէվլեոնին աչքի պոչով հետեւում էր բոլոր շարժումներին, ստէպ ստէպ զգում էի՝ որ մեզ էր դիտում հեռուից: Սեղանի շուրջ, երբ իր առջեւ չէի լինում նստած, շրջում էր դէպի մեզ եւ ունկնդրում այն ամէնն՝ ինչ ասում էի: Անկասկած կամենում էր ակելի լաւ ճանաչել ինձ, որպէսզի տեսնէր՝ թէ արդեօք կարո՞ղ էի իրական կարմեղական լինել. կարծում եմ՝ թէ գոհ մնաց իր հետախուզական պրպտումներից, որովհետեւ ճամփորդութեան վերջում բաւական բարետրամադիր գտնուեց իմ հանդէպ, մինչ Հռոմում այնքան էլ խաղաղաշունչ չէին մեր յարաբերութիւնները, ինչի մասին քիչ յետոյ կը խօսեմ:

¹ Տիտ 1, 15

² Ուխտագնացութեան պաշտօնական բացման արարողութիւնը տեղի ունեցաւ Նոյ. 6ին, կիրակի, Մոնմառթրի «Սուրբ Սիրտ Յիսուսի» եկեղեցում:

³ Գնացքը մեկնեց "de l'Est" կայարանից ժամը 6³⁵ին: Պրն. Մարթինին ի պատիւ, գերապայծառ Լըգոն պատուիրել էր գնացքի իրենց բաժանմունքը կոչել «Սուրբ Մարթին»:

160. «Յաւիտենական Քաղաք» հասնելուց առաջ, որ մեր ուխտագնացութեան նպատակակէտն էր, հնարաւորութիւնն ունեցանք տեսնելու մեծ հրաշքեր: Նախեւառաջ Շուէյցարիան, ամպերի մէջ կորած լեռնագագաթներով, վեհ ջրվէժներով, որ փայլում էին մէկը միւսից տարբեր հազարաւոր գոյներով, ընդարձակ հովիտներով, որ լի էին փառաւոր պտերներով ու վարդագոյն փայտով: Ա՛հ, Մայր իմ սիրելի, բնութեան այդ այդքան շռայլօրէն սփռուած գեղեցկութիւնները այնքա՛ն լաւ ազդեցութիւն թողեցին հոգուս խորքում: Բարձրացրին ինձ դէպի Նա՛ ում հաճելի եղաւ այդպիսի գլուխգործոցներով զարդարել աքսորի այս երկիրը, որ տեսում է միայն մի օր: Երկու աչքերս բաւական չէին դիտելու համար: Պատուհանի մօտ, ոտքի վրայ մնում էի գրեթէ առանց շնչելու. կ'ուզէի գնացքի միաժամանակ երկու կողմում լինել, քանի որ շրջուելով տեսնում էի անպատմելի տեսարաններ, որոնք յիշաւի տարբեր էին առջեւումս տարածուողներից:

Երբեմն ինչ որ մի լեռան ծայրին էինք յայտնուում, ոտքերիս տակ այնպիսի անդունդներ տեսնելով, որոնց խորքն անհնարին էր լինում դիտել անգէն աչքով. թւում էր՝ թէ ցանկանում էին կլանել մեզ: Մի քիչ աւելի բարձրում, աննկարագրելի գեղեցկութեամբ ճոխացած մի գիւղակ էր երեւում, իր փայտաչէն տնակներով ու եկեղեցու զանգակատնով, որից աւելի վեր այլեւս սպիտակափայլ ամպերն էին միայն օրօրւում: Հեռւում, արեւի վերջին ճառագայթներով ոսկեգօծուած մի ընդարձակ լիճ կար. վճիտ ու հանդարտ կապոյտ ալիքները խառնում էին մայրամուտի կրակների հետ եւ մեր ապշած հայեացքներին էին ներկայացնում այն ամենաբանաստեղծական ու ամենահմայիչ թատերգական բեմադրութիւնը, որ հնարաւոր է երբեւէ տեսնել: Հորիզոնի անսահմանափակ խորութեան մէջ գծագրւում էին լեռներ, որոնց անորոշ տեսքը թերեւս կը փախչէր մեր հայեացքից, եթէ նրանց լոյսերով ողողուած ձիւնապատ կատարները է՛լ աւելի դիւթիչ չգարձնէին այն գեղատեսիլ լճակը, որ հիացնում էր մեզ:

161. Այս բոլոր գեղեցկութիւններին ի տես, խորին մտածումներ էին արթնանում հոգուս մէջ: Թւում էր ինձ՝ թէ արդէն իսկ հասկանում էի Աստծոյ մեծութիւնն ու Երկնքի հրաշալիքները: Վանական կեանքը աչքերիս առջեւ ուրուագծւում էր ճիշտ այնպէս՝ ինչպէս որ է, իր բոլոր ենթարկումներով եւ ծածուկ կատարուող իր փոքր գոհողութիւններով: Լաւ էի հասկանում թէ որքան հեշտ է սեփական անձով զբաղուելը, կոչման վեհ նպատակների մոռացութեան մատնումը. այդպիսի պահերին քաջալերում էի ինքս ինձ, ասելով. «Աւելի ուշ, դժուարութեան ժամին, երբ կարմեղոսում բանտուած չեմ կարողանայ տեսնել ա՛յլ բան՝ եթէ ոչ միայն աստղազարդ երկնքի մի փոքրիկ անկիւնը, կը յիշեմ այն ամէնն՝ ինչ տեսնում եմ այսօր. այս մտածումներն ինձ կը զօրացնեն, առանց որեւէ դժուարութեան կը մոռանամ իմ խղճուկ շահերը, որովհետեւ կը տեսնեմ մեծութիւնն ու կարողութիւնը Աստծոյ, որին եմ միայն կամենում սիրել: Չնչին իրերին կապուելու թշուառութիւնը չեմ ունենայ այլեւս, որովհետեւ ”սիրտս արդէն իսկ համն առել է այն ամէնի՝ ինչ Յիսուս պատրաստել է Իրեն սիրողներին”¹»:

162. Աստծոյ ամենակարողութեամբ զմայլուելուց յետոյ, հնարաւորութիւնն ունեցայ զմայլուելու նաեւ մարդկանց ստեղծագործութիւններով: Իտալիայի առաջին քաղաքը, որ այցելեցիինք, եղաւ Միլանը: Մեր մանրամասն ուսումնասիրութեան առարկան դարձաւ նրա ամբողջովին սպիտակ մարմարով կառուցուած Մայր Տաճարը, որի արձանները գրեթէ անթիւ են: Սելինն ու ես անվեհեր էինք, միշտ առաջինները,

¹ 14ր 2, 9

քայլում էինք ուղղակի գերապայծառ Եպիսկոպոսի¹ ետեւից, աւելի լաւ տեսնելու եւ բացատրութիւնները ուշադիր լսելու համար: Այսպիսով, մինչ նա Պատարագի Սուրբ Զոհն էր մատուցում Սուրբ Կառլո Բոռոմէոյի դամբանի վրայ, մենք հայրիկի հետ միասին խորանի ետեւում էինք, գլուխներս յենած այն ածիւնակալին, որն իր մէջ էր ամփոփում Սրբի հայրապետական զգեստներ հագած մարմինը: Թողնելով, որ վախկոտ տիկիները շէնքի առաջին աստիճանների վրայ հագիւ բարձրացած՝ ձեռքերով փակեն իրենց սարսափահար դէմքերը, մենք հետեւեցինք աւելի համարձակ ուխտաւորներին եւ հասանք մարմարեայ զանգակատան վերջին կէտին, որտեղից հաճոյքն ունեցանք մեր ոտքերի առջեւ սփռուած տեսնելու ամբողջ քաղաքը. Ժողովուրդը ներքեւում փոքրիկ մրջնանոցի էր նմանում: Մեր դիտակէտից վար իջնելով, շարունակեցինք շրջագայութիւնը կառքով, շրջագայութիւն՝ որ տեսելու էր մէկ ամիս եւ ցմիշտ յագեցնելու էր առանց յոգնութեան ընթանալու փափաքս:

163. Գերեզմանատունն աւելի հիացրեց մեզ՝ քան եկեղեցին: Սպիտակ մարմարեայ արձանները, որոնց թւում է թէ հանճարներից մէկի ձեռքը կենդանութիւն է հաղորդել, ննջեցեալների այդ ընդարձակ հողի վրայ տարածուել էին մի տեսակ անհոգութեամբ, ինչն, իմ կարծիքով, աւելացնում էր նրանց հմայքը: Այնքան կենդանի էին թւում, որ կամենում էի մխիթարական խօսքեր ուղղել այդ «անձանց», որոնք շրջապատում էին մեզ չորս կողմից: Նրանց դիմագծերի արտայայտութիւններն այնքան իրական էին, վիշտը՝ այնքան խաղաղ ու համակամ, որ անհնարին էր չընդունումն այն անմահ խորհրդածումների, որոնցով յուզւում էին վարպետների սրտերը, մինչ քանդակում էին այդ գլուխգործոցները: Ահա մի մանուկ ծաղիկներ է նետում ծնողների գերեզմանին, թւում է՝ թէ մարմարը կորցրել է իր ծանրութիւնը: Անկշիռ թերթիկները սահում ընկնում են մանկական փերից, քամին ահա ցիրուցան է անում դրանք, ինչպէս նաեւ ծածանում այրիների աղքատիկ քօղերն ու օրիորդների վարսերը զարդարող ժապակէնները: Հայրիկը հիացած էր ինչպէս մենք. Շուէյցարիայում մի քիչ յոգնած էր զգում իրեն, բայց այժմ, կրկին զուարթանալով, վայելում էր այն գեղեցիկ տեսարանը, որը դիտելու հնարաւորութիւնն էր ստացել: Նրա արուեստագէտ հոգին բացայայտում էր հաւատքի ու հիացման արտայայտութիւններով, որոնք նշմարւում էին իր գեղեցիկ դէմքին:

164. Մի ծերունի պարոն (Փրանսացի), որն անկասկած նման բանաստեղծական հոգի չունէր, ծուռ աչքով էր մեզ նայում եւ ասում որոշակի կծու տրամադրութեամբ, գրեթէ ասել ուզելով՝ որ ցաւում է մեր հիացումներին մասնակցել չկարողանալու համար. «Ա՛հ, քանիցս հեշտութեամբ են խանդավառւում Փրանսացիները»: Կարծում եմ, որ այդ խեղճ պարոնն աւելի լաւ կ'անէր՝ եթէ իր տանը մնար, քանզի դժգոհ էր թւում ճամփորդութիւնից. յաճախ էր մեր մօտակայքում յայտնւում ու շարունակ տրտնջում. դժգոհ էր կառքերից, հիւրանոցներից, անձերից, քաղաքներից, մի խօսքով՝ ամէն ինչից: Հայրիկն, իր հոգու սովորական մեծութեան համաձայն, ջանում էր մխիթարել նրան, որովհետեւ ինքը գոհ էր միշտ եւ ամէնուր, քանի որ իր դժգոհ հարեւանի ճիշտ հակառակ բնաւորութիւնն ունէր: Ա՛հ, որքան զանազան մարդկանց հանդիպեցինք, մէկը միւսից տարբեր. աշխարհը հետաքրքրաշարժ ուսման դաշտ է իրենից ներկայացնում ... երբ պատրաստւում ես այն լքել:

165. Վենետիկում տեսարանն ամբողջովին փոխուեց. մեծ քաղաքներին յատուկ աղմուկի փոխարէն, կատարեալ լուռութեան մէջ, գոնդոլավարների աղաղակներն ու

¹ Գերապայծառ Ժէռմէնը, Քուլթանսի եպիսկոպոսը:

Թիերից ծեծուած ալիքների ծփանքն էր միայն լսուում: Վենետիկն իր իւրօրինակ հմայքն ունի, բայց ինձ այն շատ տխուր թուաց: Դոժական պալատը սքանչելի է, բայց չնայած ոսկիով, փայտով, թանկարժէք մարմարներով ու ամենահռչակաւոր նկարիչների գործերով ճոխացած իր ընդարձակ դահլիճներին, սրանցով հանդերձ՝ այն նոյնպէս տխուր է: Երկար ժամանակից ի վեր նրա քաղցրահնչուն կամարներն այլեւս չեն արձագանքում դուքսերի ձայնը, որոնք կեանքի ու մահուան դատավճիռներ էին արձակում այն դահլիճներում, որոնցով այժմ անցնում էինք մենք: Դադարել են տառապելուց այդ նոյն դուքսերի կողմից բանտերում եւ ստորերկրեայ գնդաններում արգելափակուած թշուառ կալանաւորները: Այդ սարսափազուր բանտերն այցելելիս ինձ թւում էր՝ թէ մարտիրոսների ժամանակներում էի ապրում, եւ շա՛տ էի կամենում այնտեղ մնալ, նրանց նմանուելու համար: Սակայն անհրաժեշտ եղաւ պատրաստակամօրէն հեռանալ եւ ճանապարհին անցնել «Հառաչանքների» կամուրջով, որն այդպէս է կոչուում այն միսիթարական հառաչանքների պատճառով, որ դուրս էին գալիս մահապատժի ենթարկուած բանտարկեալների բերանից, որովհետեւ այս վերջիններն աւելի մահն էին գերադասում՝ քան ստորերկրեայ գնդանների սարսափելի խոշտանգումները:

166. Վենետիկից յետոյ մեկնեցինք դէպի Փաղովա եւ մեր յարգանքը մատուցեցինք Սուրբ Անտոն Փաղովացու անփուտ մնացած լեզուին: Ապա ուղեւորուեցինք դէպի Բոլոնիա եւ տեսանք Սրբուհի Կատարինէ Սենացու նմանապէս անփուտ մարմինը, որը դեռ պահպանում է Մանուկ Յիսուսի կողմից տեսիլքի ժամանակ իրեն տրուած համբոյրի լուսեղէն հետքը: Քանի՛ քանի՛ հետաքրքրաշարժ մանրամասներ կարող էի պատմել իւրաքանչիւր քաղաքի եւ մեր ճամփորդութեան ընթացքում կատարուած հազարաւոր դէպքերի մասին: Բայց այդպէս վարուելով երբեք չէի վերջացնի:

Մեծագոյն ուրախութեամբ հեռացայ Բոլոնիայից, որն իմ համար անտանելի էր դարձել ուսանողների պատճառով, որոնցով լի էր եւ որոնք անթափանցելի ցանկապատ էին գոյացնում մեր առջեւ, երբ ոտքով փողոց ելնելու դժբախտութիւնն էինք ունենում: Եւ յատկապէս այն փոքրիկ միջադէպի պատճառով, որ ունեցայ նրանցից մէկի հետ¹, երջանիկ եղայ՝ երբ ճանապարհ ընկանք դէպի Լօրէթո: Չեմ գարմանում՝ թէ ինչու է Սուրբ Կոյսն այդ վայրն ընտրել, այդտեղ փոխադրելու համար իր օրհնեալ տունը²: չորսբոլորդ խաղաղութիւնը, ուրախութիւնն ու համեստութիւնն է, որ թագաւորում են անսահմանափակ իշխանութեամբ: ամէն բան պարզ է ու նախնական, կանայք պահպանել են իրենց իտալական գեղեցիկ տարազը

¹ Այս առթիւ քոյր Ժընըվիեւը (Սելինը) հետագայում պատմում է. «Գնացքից իջնելով Բոլոնիայում, յայտնուեցինք ուսանողներից բաղկացած յորձանքում. խառնաշփոթութեան մէջ, նրանցից մէկը Թերեզային յանկարծ իր գիրկն առաւ, այնպիսի ակնթարթային արագութեամբ, որ մենք չկարողացանք արգելել: Բայց Թերեզան իսկոյն ինքն իրեն Սուրբ Կոյսին յանձնեց ու այնպիսի ասարկու հայեացք սեւեռեց երիտասարդի վրայ, որ խեղճը վախից գունատուեց ու անյապաղ ազատ արձակեց որսը» (Տէս՝ Բէյէոյի Առաքելական Դատավարման Ընթացքը, հտր. Բ, էջ 470):

² Ըստ աւանդութեան, Լօրէթոյում է այժմ գտնուում այն տունը, ուր ապրել է Սուրբ Կոյսը: Պատմում է, որ այն այդտեղ է փոխադրուել հրեշտակների կողմից: Հնարաւոր ենթադրութիւնն այն է, որ վերոյիշեալ փոխադրումը իրագործուել է "Angeli" տոհմանունը կրող իտալական մի ընտանիքի կողմից կամ միջոցներով (angeli = հրեշտակներ): Վերակառուցման ընթացքում տունը (կամ աւելի ճիշտ՝ տնակը) պատուել է մարմարեայ ձիւնափայլ հրաշագեղ քանդակներով: Աւելի ուշ կառուցուել է հսկայաչէն եկեղեցին (ադամանդի պատեանը), եւ այժմ Սուրբ Տունը գտնուում է եկեղեցու ներսում, կենտրոնից դէպի արեւելք ձգտող մասում, տաճարի շինութիւններից անջատ:

եւ չեն ներմուծել Փարիզի նորաձեւութիւնը, ինչպէս միւս բոլոր քաղաքները: Մի խօսքով, Լօրէթոն ինձ հմայեց:

167. Ի՞նչ կարող եմ ասել արդեօք Սուրբ Տան մասին: Յուզումս մեծ եղաւ, երբ ինձ գտայ այն նոյն յարկի տակ, ուր ապրել էր Սուրբ Ընտանիքը՝ աչքերս դիտում էին այն նոյն պատերը, որոնց վրայ էր հանգչել Յիսուսի աստուածային հայեացքը, մինչ քայլում էր այն հողի վրայով, որ ուռուցում էր Սուրբ Յովսէփի քրտինքով, ուր Մարիամն իր ձեռքերի մէջ էր առել Յիսուսին, Նրան իր կուսական որովայնում կրելուց յետոյ: Տեսայ այն փոքրիկ սենեակը, ուր Սուրբ Կոյսին յայտնուել էր հրեշտակապետը եւ աւետել բարի լուրը: Վարդարանս հպեցի Յիսուս Մանկան ափսէին: Ա՛հ, քանիցս անպատմելի են այդ յիշատակները:

Բայց մեր ամենամեծ մխիթարութիւնը Իրեն իսկ Յիսուսին ընդունելը եղաւ Իր իսկ տան մէջ եւ Նրա կենդանի տաճարները լինել այն վայրում, որը վիթխարի պատուի էր արժանացել Յիսուսի ներկայութեամբ: Իտալական սովորութեան համաձայն, Ամենասուրբ Հաղորդութիւնը պահուում էր եկեղեցու խորաններից միայն մէկի վրայ եւ միայն այնտեղ էր հնարաւոր հաղորդուել: Այդ խորանը, սակայն, Սուրբ Տան մէջ չէր, այլ այն եկեղեցու՝ որն իր մէջ է պարունակում Սուրբ Տունը, այդ աղամանդը՝ պարփակուած սպիտակ մարմարից պատրաստուած արկղի մէջ: Բայց դա չէր գոհացնում մեր փափաքները:

Կամենում էինք Հաղորդութիւնն ընդունել աղամանդի մէջ, եւ ոչ թէ արկղի: Հայրիկն, իր սովորական քաղցրութեան համաձայն, վարուեց ինչպէս միւսները, բայց ես ու Սելինը գնացինք գտնելու այն քահանային¹, որ մեր խմբից էր եւ որ պատրաստուում էր մասնաւոր առանձնաշնորհմամբ Պատարագ մատուցել Սուրբ Տան մէջ: Նա իսկոյն երկու փոքրիկ նշխարներ վերցրեց եւ մաղցմայի վրայ դրեց իր մեծ նշխարի հետ միասին. եւ դուք հասկանում էք, Մայր իմ սիրելի, թէ ինչպիսին եղաւ մեր յափշտակութիւնը, երբ երկուսս էլ Ամենասուրբ Հաղորդութիւնն ընդունեցինք օրհնեալ Տան մէջ: Դա երկնային երանութիւն էր, որ բաւերով անհնարին է թարգմանել: Ուրեմն ի՞նչ կը լինենք, երբ Հաղորդութիւնն ընդունենք Երկնային Թագաւորի յաւերժական բնակարանում: Այնժամ այլեւս երբեք չի վերջանայ մեր ուրախութիւնը, գոյութիւն չի ունենայ մեկնելու եւ բաժանուելու տրամուծութիւնը, եւ մի յիշատակ ունենալու համար անհրաժեշտ չի լինի գաղտնագողի քերել աստուածային ներկայութեամբ սրբագործուած պատերը, որովհետեւ Իր տունը նաեւ մերն է լինելու, յաւիտեան: Նա չի կամենում մեզ մնայուն բնակարաններ տալ այստեղ՝ երկրի վրայ, այլ միայն գոհանում է դրանք ցոյց տալով, որպէսզի մեր համար սիրելի դարձնի աղքատութիւնն ու թաքնուած կեանքը. այն մէկը, որ վերապահել է մեզ, Իր փառքի Պալատն է, ուր Իրեն այլեւս չենք տեսնի իբրեւ մանուկ կամ սպիտակ նշխար, այլ այնպէս՝ ինչպէս որ է, Իր անսահման գեղեցկութեամբ:

168. Այժմ ինձ մնում է խօսել Հռոմի մասին, Հռոմի՝ որ մեր ճամփորդութեան նպատակակէտն էր, ուր յոյսն ունէի մխիթարութիւններ գտնել վշտերիս մէջ եւ գտայ, մինչդեռ, խաչը: Երբ քաղաք հասանք, գիշեր էր եւ մենք քնած էինք. արթնացանք կայարանի պաշտօնեաների աղաղակից միայն. «Հո՛ո՛մ ... Հո՛ո՛մ ...»: Ո՛չ, երազում չէի, իրօք Հռոմն էր¹:

Առաջին օրն անցկացրինք քաղաքային պարիսպներից դուրս, բայց թերեւս հէնց դա եղաւ ամենագեղեցիկը, որովհետեւ այդ շրջանի բոլոր յուշարձանները պահպանել

¹ Տէր Լըքոնթը, Լիզէոյի «Սուրբ Պետրոս» եկեղեցու ժողովրդապետը:

էին իրենց հնագոյն կերպարանքը, մինչդեռ քաղաքի կենտրոնում թւում էր՝ թէ դեռեւս Փարիզում էի, այնքան նորածեւ էին բոլոր հիւրանոցներն ու խանութները: Հռոմէական դաշտերում կատարուած այդ զբօսանքը թովիչ տպաւորութիւններ դրոշմեց հոգուս խորքում: Չեմ խօսի այն վայրերի շուրջ, որոնք այցելեցինք (դրանց մասին նկարագրական բազում ընդարձակ աշխատութիւններ կան), այլ կը շարադրեմ այն գլխաւոր ապրումները միայն, որ ունեցայ դրանց ի տես: Եւ որոնցից մէկը Քոլոզէոն էր: Վերջիվերջոյ տեսնելու էի այն բեմահարթակը, ուր այնքա՛ն մարտիրոսներ իրենց արիւնն էին հեղել ի վկայութիւն Յիսուսի Անուան, եւ արդէն երազում էի նուիրական համբոյրով շուրթերս մօտեցնել նրանց արեամբ սրբագործուած հողին ... բայց ինչպիսի՛ պատրանք: Կենտրոնն ուրիշ բան չէր, եթէ ոչ՝ աւերակների կոյտ, որն ուխտաւորները հեռուից միայն կարող էին դիտել եւ վերջ, որովհետեւ երկաթեայ վանդակապատը արգելում էր մուտք գործել այնտեղ, չեմ ասում արդէն՝ որ ոչ ոքի մտքով էլ չէր անցնում քայլել ամէն պահ փլուելու վտանգին ենթակայ աւերակների միջով: Ուրեմն ի՞նչ, Հռոմ էինք եկել Քոլոզէո չիջնելո՞ւ համար: Դա իմ համար անընդունելի էր, չէի կարողանում ուշադրութիւն դարձնել խմբավարի բացատրութիւններին, միայն մի միտք էր գրաւում ինձ. իջնել բեմահարթակ: Տեսնելով, որ փայտէ աստիճաններով բեռնաւորուած մի բանուոր էր անցնում մեզնից քիչ հեռու, մեծապէս կամեցայ նրանից օգնութիւն խնդրել, բայց բարեբախտաբար չիրագործեցի գաղափարս, որովհետեւ այդպիսի դէպքում կը նայեր ինձ ինչպէս մի խենթի: Աւետարանում պատմում է, որ Մագդաղենացին Յիսուսի գերեզմանի մօտ մնալով եւ դէպի այն շարունակաբար կռանալով, վերջացրեց երկու հրեշտակներ տեսնելով¹: Ինչպէս նա, այնպէս էլ ես, փափաքներիս իրագործման անկարելիութիւնը ճանաչելով հանդերձ, շարունակեցի դիտել դէպի այն աւերակները, որոնց մօտ կամենում էի իջնել: Վերջապէս, հրեշտակներ չտեսայ, բայց գտայ այն՝ ինչ փնտռում էի: Ուրախութիւնս մեծ էր, Սելինին դարձայ, ասելով. «Արթնացի՛ր, գնա՛նք, այստեղով կարող ենք անցնել»: Մի քանի ակնթարթ անց, ցանկապատի միւս կողմում էինք արդէն եւ քայլում էինք մեր ոտքերի տակ քանդուող աւերակների վրայով:

Հայրիկն ապշած մնաց մեր համարձակութեան առաջ, հրամայեց ետ վերադառնալ ... բայց երկու փախտականները չէին լսում այլեւս ոչինչ: Ինչպէս պատերազմող մարտիկների քաջութիւնն է աճում վտանգների մէջ, այնպէս էր յորդում նաեւ մեր ուրախութիւնը, ուղիղ համեմատուելով այն դժուարութեանը՝ որ զգում էինք դէպի մեր իղձերի նպատակակէտը հասնելու ճանապարհին: Սելինը, ինձնից աւելի ուշադիր, լսել էր բացատրութիւններից մի քանիսը, որոնք վերաբերում էին յատակի այն խաչանիչ մասին, որի վրայ էին իրենց արիւնը հեղել սուրբ մարտիրոսները: Փնտռեց այդ մասը եւ շուտով գտաւ, միասին ծունկի եկանք այդ սրբազան հողի վրայ եւ մեր հոգիներն իրար խառնուեցին միեւնոյն աղօթքում: Միրտս արագօրէն բաբախել սկսեց, երբ շուրթերս մօտեցրի առաջին քրիստոնեաների արեամբ ներկուած հողին. խնդրեցի նրանց ինձ նոյնպէս պարգեւել Յիսուսի Անուան համար մարտիրոսանալու շնորհը, եւ սրտիս խորքում զգացի՝ որ աղօթքս ընդունելի եղաւ: Այս ամբողջը կատարուեց մի քանի կարճատեւ ըրոպաների ընթացքում. յիշատակի համար մէկ երկու քար հաւաքելուց յետոյ, վերադարձանք դէպի աւերակների պատերը, ուր վերսկսեցինք մեր վտանգալի արկածախնդրութիւնը: Հայրիկը, մեզ այդքան երջանիկ տեսնելով, չկարողացաւ յանդիմանել, ինչպէս նաեւ զգացի, որ հպարտ էր մեր քաջասրտութեան համար: Մարդասէրն Աստուած պաշտպանեց մեզ զգալի կերպով, որովհետեւ ուխտաւորները, մի քիչ աւելի հեռու

¹ Նոյ. 13ին:

գտնուելով եւ գբաղուած լինելով շքեղ կամարների դիտմամբ, ուր առաջնորդը նրանց ուշադրութիւնը հրաւիրում էր փոքր ցցուածքների եւ դրանց վրայ գետեղուած արձանիկների վրայ, չանդրադարձան մեր բացակայութեանը: Այսպիսով ո՛չ բացատրող խմբավարը, եւ ո՛չ էլ վարդապետ եկեղեցականները չկարողացան հաղորդակից լինել այն երջանկութեանը, որով լի էին մեր սրտերը:

169. Յիշողութեանս մէջ քաղցրիկ տպաւորութիւններ թողեցին նաեւ ստորերկրեայ դամբանները². Ճիշտ այնպիսին էին՝ ինչպիսին պատկերացնում էի, կարդալով մարտիրոսների կենսագրութիւններում տրուող նկարագրութիւնները: Օրուայ մի մասն այնտեղ անցկացնելուց յետոյ անգամ թւում էր ինձ՝ թէ այնտեղ էի մի քանի ըոպէ միայն, այնքան թարմ ու բուրումնաւէտ էր օդը, որ շնչում էի: Եւ քանի որ հարկաւոր էր տուն տանել ինչ որ մի յիշատակ, Սելինն ու Թերեզան սպասեցին, որպէսզի խումբը մի քիչ հեռանար իրենցից, ապա միասին դէպի աւելի խորքերը թափանցեցին, հասնելով Սրբուհի Չէչիլիայի բազմադարեայ դամբանին, որտեղից էլ Սրբուհու ներկայութեամբ սրբացուած հողից վերցրին իրենց հետ: Մինչ այդ, իւրայատուկ ջերմեռանդութիւն չունէի այս Սրբուհու հանդէպ, բայց եկեղեցու վերածուած իր տունն այցելելուց յետոյ³, որն իր մարտիրոսութեան վայրն է նաեւ, եւ տեղեկանալով՝ որ նա հուշակուած է եղել «Ներդաշնակութեան Թագուհի» ո՛չ թէ իր գեղեցիկ ձայնի կամ երաժշտական հանձարի, այլ այն կուսական երգի համար, որը հնչեցրեց իր սրտի խորքում թաքնուած երկնային Փեսային ի լուր, զգացի աւելի՛ քան պարզ ջերմեռանդութիւն. զգացի իրական ընկերային գորով: Նա իմ նախասիրած Սրբուհին դարձաւ եւ հաւատարիմ խորհրդակիցս: Նրանում ամէն բան հիացնում էր ինձ, յատկապէս իր ինքնայանձնումը Աստուծոյ ձեռքերին, իր անսահմանափակ վստահութիւնը, որոնք իրեն ի վիճակի դարձրին կուսական մաքրութեան հասցնելու այն հոգիներին, որոնք մինչ իրեն հանդիպելը չունէին ա՛յլ բերկրանք, եթէ ոչ միայն՝ այս ներկայ կեանքի հաճոյքները:

Սրբուհի Չէչիլիան նման է Երգ Երգոցի հարսնացուին, նրանում տեսնում եմ «խմբերգ՝ զինուորների բանակի մէջ»⁴: Նրա կեանքը ա՛յլ բան չի եղել, եթէ ոչ միայն՝ ներդաշնակ երգ, նոյնիսկ մեծագոյն տառապանքների պահին. սա ինձ չի ապշեցնում, քանի որ «Սուրբ Աւետարանը հանգչում էր նրա սրտի վրայ», իսկ այդ սրտի ներսում հանգչում էր Կոյսերի Փեսան:

170. «Սրբուհի Ազնէս» եկեղեցու այցելութիւնը նոյնպէս ինձ մեծ ուրախութիւն պատճառեց, քանզի մանկութեանս օրերի ընկերուհիներից մէկն էր. շատ երկար խօսեցի նրա հետ այն մէկի մասին, որ կրում է իր նոյն անունը: Ամէն ջանք գործադրեցի սիրելի Մօրս հրեշտակային Պաշտպան Սրբուհու մասունքներից ձեռքբերելու համար, ցանկանում էի հաճելի նուէր մատուցել ձեզ, բայց ի գուր: Քարի մի կարմրաուռն կտոր միայն ընդունեցի, որը պոկուելով ոտքերիս առաջ ընկաւ մի ճոխ խճանկարից, որի պատմութիւնը ձգտում է մինչեւ նոյն իր՝ Սրբուհի Ազնէսի ժամանակները եւ որին նա նոյնպէս թերեւս յաճախ է դիտել ու զմայլուել: Մի՞թէ գեղեցիկ չէ սա, որ Սրբուհին ինքը տուեց ինձ այն՝ ինչ փնտռում էի եւ որն արգելուած էր ինձ վերցնել: Սա իմ համար ապացոյց է՝ թէ ինչպիսի սիրով է Սրբուհի Ազնէսը հովանաւորում ու պաշտպանում իմ այնքա՛ն սիրելի Մօրը:

¹ Հմմտ. ՅՎՏ 20, 11-12

² Այս ստորերկրեայ դամբանները կամ գետնադամբանները սովորաբար յայտնի են իրենց «կատակոմբներ» անուամբ:

³ «Սրբուհի Չէչիլիա» եկեղեցին Հռոմի Թռասթէվերէ թաղամասում:

⁴ Երգ 7, 1

171. Վեց օր շարունակ այցելեցինք Հռոմի հրաշալիքները, եւ եօթներորդ օրը տեսայ դրանցից ամենամեծը. «Լեւոն ԺԳ»ը: Փափաքում էի այդ օրուան, բայց նաեւ վախենում. նրանից էր կախուած կոչումս, որովհետեւ պատասխանը, որ ստանալու էի Գերապայծառից, դեռեւս չէր հասել եւ գիտէի նաեւ ձեր նամակներից մէկից, Մայր իմ, որ նա այլեւս այնքան էլ բարետրամադիր չէր իմ հանդէպ, այնպէս որ փրկութեանս միակ միջոցը Հռոմի Սրբազան Հօր թոյլտուութիւնն էր ... բայց այն ստանալու համար հարկաւոր էր նաեւ խնդրել, հարկաւոր էր համարձակուել խօսել Քահանայապետի հետ բոլորի ներկայութեամբ, իսկ այս միտքը սարսափ էր ազդում վրաս: Թէ որքան տառապեցի ընդունելութիւնից առաջ, դա միայն Աստուած գիտէ, Սելինի հետ միասին: Երբեք չեմ մոռանայ, թէ ինչպէս սիրելի քոյրս մասնակցեց բոլոր տուայտանքներիս, կարծես թէ կոչումս իրենը լինէր: Երկուսիս փոխադարձ սէրը մեր խմբի քահանաներից ոմանց ուշադրութիւնն էր նաեւ գրաւում: Մի երեկոյ, այնքան շատ անձինք խմբուեցին սրահում, որ աթոռները պակասեցին. այնժամ Սելինը ինձ իր ծնկներին առաւ եւ երկու քոյրեր այնպիսի սիրալի հայեացքով նայեցինք միմեանց, որ քահանաներից մէկը բացականչեց. «Որքա՛ն են սիրում իրար: Այս երկու քոյրերը երբեք չեն կարող միմեանցից բաժանուել»: Այո՛, ճիշտ է, սիրում էինք իրար, բայց մեր հոգիների յարաբերութիւնն այնքան մաքուր էր ու հզօր, որ բաժանուելու միտքը մեզ չէր անհանգստացնում, քանզի զգում էինք, որ ոչինչ, եւ ո՛չ իսկ օվկիանոսը, չէր կարող հեռացնել մեզ իրարից: Սրտի խաղաղութեամբ էր Սելինը դիտում թէ ինչպէս էր իմ նաւակը խարխիս գցում Կարմեղոսի ափին. նա համակերպուում էր մնալու աշխարհի փոթորկայոյզ ծովում դեռ այնքան ժամանակ՝ որքան Աստուած կը կամենար, բայց միշտ վստահ՝ որ ինքը նոյնպէս հասնելու էր փափաքած ափին:

172. Նոյեմբերի 20ին, կիրակի, հագնուեցինք Վատիկանի ծիսական սովորութեան համաձայն (սեւ զգեստներ եւ գլուխներս ծածկող ժանեակաւոր քօղեր), եւ կապոյտ ու սպիտակ ժապաւէնների վրայ ամրացուած Լեւոն ԺԳ-ը պատկերող շքանշաններով զարդարուած, մուտք գործեցինք Վատիկան եւ հասանք Գերագոյն Քահանայապետի մատուռ: Ժամը Տին հանդիսաւոր կերպով ժամանեց ինքը Լեւոն ԺԳ-ը, Սուրբ Պատարագը մատուցելու համար: Օրհնեց իր շուրջը խմբուած բազմաթիւ ուխտաւորներին, ապա խորանի աստիճաններով վեր բարձրացաւ եւ ցոյց տուեց – Քրիստոսի Փոխանորդին արժանավայել բարեպաշտութեամբ – թէ իրօք «Հռոմի Սրբազան Հայրն» էր: Սիրտս բաբախում էր արագ արագ եւ աղօթում էի մեծ ջերմեռանդութեամբ, մինչ Յիսուս իջնում էր իր Քահանայապետի ձեռքերի մէջ: Լի էի վստահութեամբ, Աւետարանի այդ օրն ընթերցուած հատուածը պարունակում էր հետեւեալ յափշտակիչ խօսքերը. «Մի՛ վախեցիր, հօտ փոքրիկ, որովհետեւ ձեր Հայրը կամեցաւ ձեզ տալ Արքայութիւնը»¹: Ո՛չ, ես չէի վախենում, յոյսն ունէի՝ թէ Կարմեղոսի արքայութիւնը շուտով ինձ էր պատկանելու, չէի մտածում Յիսուսի միւս խօսքի վրայ. «Ձեր համար պատրաստում եմ Արքայութիւնը ինչպէս Հայրը պատրաստեց այն իմ համար»², այսինքն՝ վերապահում եմ ձեզ խաչեր ու փորձութիւններ, որոնցով միայն կարող էք արժանի դառնալ Արքայութեանը, որին դուք անձկագին ձգտում էք. քանի որ Քրիստոս պէտք է այդ շարժարանքները կրէր եւ այնպէս մտնէր իր փառքի մէջ³, եթէ կամենում էք տեղ գրաւել իր կողքին, իմէք այն բաժակը՝ որից Նա ինքը խմեց⁴: Այդ բաժակն ինձ ներկայացրեց Սրբազան

¹ Ղկս 12, 32
² Հմմտ. Ղկս 22, 29
³ Ղկս 24, 26
⁴ Հմմտ. Մտթ 20, 20-23

Քահանայապետն ինքը, եւ իմ արցունքները խառնուեցին այն դառն ըմպելիին, որ առաջարկոււմ էր ինձ:

173. Գոհութեան աղօթքից յետոյ սկսուեց ընդունելութիւնը: Լեւոն ԺԳ.ը մեծ բազկաթուռի վրայ էր նստել, պարզ սպիտակ կապայ հագած: Շրջապատուած էր ծիրանաւորներով, արքեպիսկոպոսներով ու եպիսկոպոսներով, որոնց, սակայն, ես խմբովին էի միայն տեսնում, որովհետեւ մտասեւեռմանս միակ կէտը Սրբազան Քահանայապետն էր: Շարքով անցնում էինք նրա առջեւով, իւրաքանչիւր ուխտաւոր ծնրադրում էր իր հերթին, համբուրում Քահանայապետի աջն ու մուճակը¹, ընդունում նրա օրհնութիւնը. ապա երկու ազնուատոհմ թիկնապահներ ձեռքի քաղաքավար ու յարգալի հպումով ուխտաւորին հասկացնում էին, որ պէտք է ոտքի ելնէր եւ անցնէր մի այլ սրահ: Քահանայապետական յարկի տակ մուտք գործելուց առաջ հաստատօրէն որոշել էի խօսել, բայց արդ զգացի, որ քաջութիւնս պակասում էր, որովհետեւ Սրբազան Քահանայապետի աջ կողմում կանգնած տեսայ գերյարգելի Ռէվէոնին: Գրեթէ միեւնոյն պահին մեզ զգուշացուեց, նրա կողմից, որ խստօրէն արգելուած էր խօսել Լեւոն ԺԳ.ի հետ, որովհետեւ այդպիսի դէպքում ընդունելութիւնը չափազանց երկար կը տեւէր: Շրջուեցի դէպի Սելինը, իր կարծիքն իմանալու համար: «Խօսի՛ր», – պատասխանեց: Եւս մի ակնթարթ եւ ահա Սրբազան Հօր առջեւ էի. համբուրեցի մուճակը, նա դէպի ինձ երկարեց աջը, բայց ես այն համբուրելու փոխարէն՝ միացրի ձեռքերս եւ դէպի իր դէմքը բարձրացնելով արտասուաթոր աչքերս, գոչեցի. «Սրբազան Հայր, մեծ շնորհ եմ Ձեզնից խնդրում»: Նա իսկոյն դէպի իմ կողմ կուացաւ, այնպէս՝ որ երեսս գրեթէ իր դէմքին էր հպուում. ապա իր մութ ու խոր աչքերի վրաս սեւեռուելը տեսայ, կարծես թէ կամենում էր հոգուս խորքերը թափանցել: «Սրբազան Հայր, – ասացի, – ի պատիւ Ձեր յրբեւանի, թոյլատրէ՛ք ինձ Կարմեղոս մտնել տասնհինգ տարեկան հասակում»:

174. Յուզումս անշուշտ դողացրեց ձայնս, այնպէս՝ որ Սրբազան Քահանայապետը, դէպի գերյարգելի Ռէվէոնին շրջուելով, որն ինձ էր նայում ապշած ու դժգոհ հայեացքով, ասաց. «Շատ լաւ չեմ հասկանում»: Եթէ մարդասէրն Աստուած թոյլատրէր, գերյարգելի Ռէվէոնին այդ պահին շատ հեշտօրէն կը կարողանար ստանալ այն՝ ինչ խնդրում էի. բայց կամեցաւ ներկայացնել ինձ խաչը եւ ոչ դեռեւս միտիթարութիւններ: «Երանաշնորհ Հայր, – պատասխանեց Ընդհանրական Աթոռակալը, – մի երեխայ է, որ փափաքում է Կարմեղոս մտնել տասնհինգամեայ հասակում, բայց մեծաւորները դեռ քննում են հարցը»:

«Շատ լաւ, դուստր իմ, – անչափ բարութեամբ պատասխանեց Նորին Սրբութիւնը, – արէ՛ք այն՝ ինչ կը պատուիրեն ձեզ ձեր մեծաւորները»: Այնժամ ձեռքերս իր ծնկներին յենելով, վերջին ճիգս գործադրեցի ու աղաչական ձայնով ասացի. «Ա՛հ, Երանաշնորհ Հայր, եթէ Դուք ասէ՛ք ”այո՛”, բոլորն այլեւս համաձայն կը լինեն»: Ինձ նայեց սեւեռուն հայեացքով եւ իւրաքանչիւր վանկի վրայ շեշտելով, արտասանեց հետեւեալ խօսքերը. «Յառա՛ջ, յառա՛ջ: Կը մտնէ՛ք, եթէ Աստուած դա կամենայ»: Նրա ձայներանգն այնքան հոգեթափանց էր ու համոզիչ, որ ականջներիս մէջ գրնգում է մինչեւ այսօր: Քանի որ Սրբազան Հօր բարութիւնն ինձ ոգեւորում էր, կամեցայ շարունակել խօսակցութիւնը, բայց երկու թիկնապահները քաղաքավարի հպումով հրաւիրեցին ինձ ոտքի կանգնելու, եւ տեսնելով՝ որ այդքանը բաւական չէր, բազուկներիցս բռնեցին եւ գերյարգելի Ռէվէոնին նոյնպէս օգնեց նրանց վեր բարձրացնել ինձ: Քանզի շարունակում էի ձեռքերս իրար միացած Լեւոն ԺԳ.ի

¹ Այս սովորութիւնը, որ ներմուծել էին գերմանացի կայսրերը, այժմ գոյութիւն չունի. համբուրում են Սրբազան Քահանայապետի միայն աջը:

ծնկներին յենած պահել, բռնի ուժով պոկեցին ինձ Սրբազան Քահանայապետի ոտքերից: Մինչ այսպէս ինձ փոխադրում էին, Նորին Սրբութիւնը իր աջը նախ հպեց շուրթերիս, ապա այն վեր բարձրացրեց եւ օրհնեց ինձ. այնժամ աչքերս արցունքներով լցուեցին եւ գերյարգելի Ռէվէոտնին կարողացաւ նոյնքան աղամանդներ տեսնել, որքան տեսել էր Բէյէոյում:

175. Երկու թիկնապահներն ուղեկցեցին ինձ մինչեւ դուռը, ուր մի ուրիշը Լեւոն ԺԳ-ը պատկերող յուշամեդալ նուիրեց ինձ: Սելինը, որ գալիս էր իմ ետեւից, ափանատես էր եղել ամբողջ ներկայացմանը. յուզուած գրեթէ նոյնքան՝ որքան ես, այնուամենայնիւ քաջութիւնն էր ունեցել Սրբազան Հօրից օրհնութիւն խնդրելու կարմեղոսի համար: Գերյարգելի Ռէվէոտնին դժգոհ ձայներանգով միջամտել էր. «Կարմեղոսն արդէն իսկ օրհնուած է»: Բարեհոգի Քահանայապետը կրկնել էր քաղցրութեամբ. «Ա՛հ այո՛, արդէն իսկ օրհնուած է»: Հայրիկը մեզնից առաջ էր ներկայացել Լեւոն ԺԳ-ին (միւս բոլոր տղամարդկանց հետ միասին): Գերյարգելի Ռէվէոտնին բաւական բարեացակամ էր գտնուել նրա նկատմամբ, ներկայացրել էր նրան որպէս հայրը երկու կարմեղականների: Նորին Սրբութիւնը, ի նշան իւրապատուկ բարեհաճութեան, իր երկու ձեռքերը դրել էր իմ սիրելի թագաւորի ալեգարդ գլխին, այսպիսով կարծես խորհրդաւոր կնիք դնելով այդ ծերունու գլխին յանուն Նրա՝ ում իրական ներկայացուցիչն է ինքը երկրի վրայ: Ա՛հ այժմ, երբ նա Երկնքում է, այդ հայրը չորս կարմեղականների, այլեւս Քահանայապետի աջը չէ՝ որ հանգչում է իր ճակատին, մարգարէանալով գալիք մարտիրոսութիւնը: Աջն է կոյսերի Փեսայի, փառքի Թագաւորի, որը կրկնակի շող է հաղորդում Իր հաւատարիմ ծառայի դէմքին, եւ ընդմիջտ այլեւս այդ պաշտելի Աջը կը մնայ որպէս հովանի այն գլխին, որին փառաւորեց:

176. Սիրելի հայրիկս վշտացաւ՝ ունկնդրութեան աւարտին ինձ ամբողջովին արցունքների մէջ տեսնելով, ամէն ջանք գործադրեց մխիթարելու համար, բայց ի գուր: Սրտիս խորքում մեծ խաղաղութիւն էի գգում, քանի որ արել էի հնարաւոր ամէն բան, համապատասխանելու համար Աստուծոյ կամքին, բայց այդ խաղաղութիւնը խորքում էր միայն, իսկ դառնութիւնը լցնում էր հոգիս, որովհետեւ Յիսուս լուծ էր: Թւում էր հեռու, շա՛տ հեռու, չունէի Իր ներկայութիւնը յայտնող եւ ոչ իսկ մի նշան: Այդ օրը արեւը նոյնպէս չհամարձակուեց փայլել եւ Խաղաղի գեղեցիկ երկինքը, մթին ամպերով ծանրաբեռնուած, արտասուեց իմ հետ ժամեր շարունակ: Ա՛հ, վերջացած էր, ճամփորդութիւնս այլեւս անհրապոյր էր, որովհետեւ ձախողուել էր նպատակը: Եւ սակայն, Հռոմի Սրբազան Հօր վերջին խօսքերը պէտք է որ մխիթարէին ինձ. իրօք, մի՞թէ իրական մարգարէութիւն չէին դրանք: Չնայած բոլոր խոչընդոտներին, այն՝ ինչ ողորմածն Աստուած կամեցաւ, կատարուած է: Թոյլատրեց արարածներին կատարելու ո՛չ այն՝ ինչ ցանկանում էին, այլ՝ ինչ կամենում էր Ինքը:

177. Որոշ ժամանակից ի վեր, անձս Յիսուս Մանկանն էի նուիրել, Իր փոքրիկ խաղալիքը լինելու համար: Խնդրել էի Նրան հետս չվարուել իբրեւ արժէքաւոր խաղալիքի (մանուկները գոհանում են նրանց դիտելով միայն, առանց ձեռք տալ համարձակուելու), այլ ինչպէս հնամաշ գնդակի, որը Նա կարող էր գետինն նետել, ոտքով հարուածել, պատռել, մոռանալ մի մութ անկիւնում, կամ՝ սրտին սեղմել, ըստ Իր հաճոյքի: Մի խօսքով, կամենում էի զուարճացնել Յիսուս Մանկանը, ուրախութիւն պատճառել Նրան, կամենում էի անձնատուր լինել Իր մանկական քմահաճոյքին: ... Լսել էր աղօթքս:

Հռոմում Յիսուս պատռեց Իր խաղալիքը, կամեցաւ տեսնել՝ թէ ինչ կար ներսում, եւ տեսնելուց յետոյ, գոհ Իր նոր գիւտով, մի կողմ նետեց գնդակն ու գնաց

ննջեց: Ի՞նչ արեց արդեօք Իր քաղցրիկ քնի ժամանակ, կամ ի՞նչ եղաւ թողլըուած գնդակի վախճանը: Յիսուս երագեց՝ թէ դեռ խաղում է Իր գնդակով, երբեմն վերցնում, երբեմն թողնում, ապա հեռո՛ւ հեռո՛ւ գլորում եւ վերջում սեղմում Իր կրծքին, առանց այդուհետեւ թոյլատրելու, որ հեռանայ Իրենից:

178. Հասկանում էք, Մայր իմ սիրելի, թէ որքան տխուր էր գնդակը, իրեն յատակին նետուած տեսնելով: Եւ սակայն, չէի դադարում յուսալ ընդդէմ ամէն յոյսի¹: Սրբազան Քահանայապետի ընդունելութիւնից մի քանի օր անց, Հայրիկն այցելութեան էր գնացել շատ բարեհոգի եղբայր Սիմէոնին², եւ նրա մօտ գտել էր նաեւ գերյարգելի Ռէվէռոնիին: Հայրիկն անուշուովեամբ յանդիմանել էր նրան, դժուար ձեռնարկիս մէջ ինձ օգնած չլինելու համար, ապա իր փոքրիկ թագուհու պատմութիւնը պատմել էր նաեւ եղբայր Սիմէոնին: Յարգարժան ծերունին պատմութիւնն ունկնդրել էր կենդանի հետաքրքրութեամբ, վերջում նշումներ էր կատարել իր տետրակում եւ յուզուած ասել. «Այսպիսի բաներ իտալիայում չեն պատահում»: Կարծում եմ, թէ գրոյցը բաւական տպաւորիչ է եղել նաեւ գերյարգելի Ռէվէռոնիի համար, որովհետեւ հետագայում ամէն բան ապացուցում էր, որ վերջապէս համոզուել էր կոչմանս իրականութեանը:

179. Վերոյիշեալ օրուայ յաջորդ օրը, Հռոմից մեկնեցինք դէպի Նապոլի³ եւ Պոմպէյ: Ի պատիւ մեր, Վեգոլվին ամբողջ օրն անդադար որոտաց, խառնարանից ծխի թանձր սիւն ժայթքելով: Հետքերը, որ նա թողել է Պոմպէյի աւերակների վրայ, յիրաւի սարսափելի են, յայտնում են Աստծոյ զօրութիւնը, «որ դիտում է երկիրը եւ դողացնում այն, մօտենում է լեռներին եւ ծխացնում դրանք»⁴:

Իմ համար մեծագոյն հաճոյք էր այդ աւերակների մէջ միայնակ զբօսնելը, խորհրդածելով մարդկային շինութիւնների դիւրաբեկութեան շուրջ, բայց զբօսաշրջիկների բազմութիւնը բաւական անհամ էր դարձնում կործանուած քաղաքի մեղմաղձոտ հմայքը: Նապոլիում տեսարանն ամբողջովին փոխուեց, ձիակառքերի մեծ քանակը գեղեցկութեամբ պսակեց Սուրբ Մարթինի վանքին տուած մեր այցելութիւնը. այդ վանքը բարձր բլրան վրայ էր գտնուում, որտեղից իշխում էր ամբողջ քաղաքին: Վերադարձի ճանապարհին, սակայն, սանձարձակ վազող ձիերը քիչ մնաց չըջէին կառքը, բայց բարեբախտաբար, մեր պահապան հրեշտակների պաշտպանութեան շնորհիւ, ողջ առողջ հասանք մեր շքեղ հիւրանոց: Ծամփորդութեան ամբողջ ընթացքում բնակուեցինք իշխանական պանդոկներում, երբեք չէի բնակուել այդպիսի ճոխութեան մէջ. իսկ եւ իսկ առիթն է ասելու, որ հարստութիւնն իրօք երջանկութիւնն չի պատճառում, որովհետեւ աւելի երջանիկ կը լինէի յարգաչէն տանիքի տակ՝ Կարմեղոսի յոյսով, քան այդ ոսկեպատ սրահներով, մարմարեայ աստիճաններով ու մետաքսեայ գորգերով շրջապատուած, բայց դառնութեամբ լի սրտով: Շատ լաւ հասկացայ, որ ուրախութիւնը մեզ շրջապատող առարկաներում չէ, այլ՝ հոգու խորքում. այն կարող ենք ունենալ միայն բանտերում արգելափակուած, եւ դե՛ռ աւելի՛ քան շքեղ պալատներում: Ապացոյցն այն է, որ ես այժմ աւելի երջանիկ եմ այստեղ՝ Կարմեղոսում, նոյնիսկ ընդմէջ ներքին ու արտաքին

¹ Հմմտ. Հոմ 4, 18

² Եղբ. Սիմէոնը «Քրիստոնէայ Դպրոցներ» միաբանութեան եղբայրներից էր, «Սուրբ Յովսէփ» վարժարանի տնօրէնը. մեծ համբաւ ու յարգանք էր վայելում հռոմէացիների կողմից:

³ Իտալական այս քաղաքը Հայաստանում սովորաբար յայտնի է իր «Նէպոլի» անուանաձեւով: Գտնուում է Վեգոլվի հրաբխի ստորոտում:

⁴ Սղմ 103, 32

վշտակրուժիւնների, քան աշխարհում, չըջապատուած այս կեանքի ընձեռած բոլոր յարմարաւէտութիւններով, եւ յատկապէս ... հայրական յարկի քաղցրութիւններով:

180. Հոգիս խորասուզուած էր տրտմութեան մէջ, բայց արտաքուստ ինձ նոյնն էի ներկայացնում, որովհետեւ կարծում էի՝ թէ Սրբազան Քահանայապետին ուղղած խնդրանքիս մասին տեղեակ չէր ոչ ոք. շուտով հակառակին համոզուեցի: Սելինի հետ մենակ էի մնացել մեր բաժանմունքում (միւս բոլոր ուխտաւորները սեղանատուն էին գնացել կանգառի սակաւաթիւ ընկերներն այնտեղ անցկացնելու), երբ յանկարծ գերյարգելի Լըգուն, Քուլթանսի Ընդհանրական Աթոռակալը, բացեց մեր դուռը եւ մեզմ ժպիտով ասաց. «Ուրե՛մն ... ինչպէ՞ս է իրեն զգում մեր փոքրիկ կարմեղուհին»:¹ Այնժամ հասկացայ, որ գաղտնիքս յայտնի էր մեր ամբողջ խմբին: Բարեբախտաբար, ոչ ոք իմ հետ չխօսեց այդ նիւթի շուրջ, բայց զգացի, համակրանքով լի հայեացքներից, որ պահանջս այնքան էլ վատ տպաւորութիւն չէր թողել: Աստիճակով¹, այդ փոքրիկ քաղաքում, առիթն ունեցայ գերյարգելի Ռէվէլոնիի կառքով չըջապայելու. շնորհ, որ ոչ մի տիկնոջ չտրուեց ամբողջ ճամփորդութեան ընթացքում: Եւ ահա թէ ինչպէս ընդունեցի այդ առանձնաշնորհումը:

181. Սուրբ Ֆրանչիսկոսի եւ Սրբուհի Քիառայի առաքինութիւններով օծուն վայրերն այցելելուց յետոյ, վերջում այցելել էինք Սրբուհի Ագնէսի՝ Սրբուհի Քիառայի քրոջ անունը կրող վանքը: Սրբուհու գլուխը բաւական երկար դիտելուց յետոյ յանկարծ անդրադարձայ, որ կորցրել էի գօտուս օղակը: Փնտտեցի բազմութեան ոտքերի տակ, մի քահանայ խղճաց ինձ եւ օգնեց, բայց երբ գտաւ՝ հեռացաւ, եւ ես կրկին սկսեցի փնտռել, որովհետեւ եթէ օղակը կար, անհնարին էր այն իր տեղը դնել, քանի որ պակասում էր ճարմանդը: Վերջապէս նրա փայլելը տեսայ մի անկիւնում. վերցնելն ու իր տեղը դնելը մի ակնթարթի գործ էր, բայց փնտռուածքս երկար էր տեւել, եւ ապշած մնացի, երբ ինձ բացարձակապէս միայնակ գտայ եկեղեցու դռան առաջ. բոլոր կառքերն անհետացել էին, մնացել էր միայն գերյարգելի Ռէվէլոնիին: Ի՞նչ անել: Կառքերի ետեւի՞ց վազել, որոնք այլեւս չէի տեսնում, եւ այսպիսով գնացքս կորցնելու վտանգին ենթարկուել, սիրելի հօրս մտատանջութեան մատնելով, կամ արդեօք տե՞ղ խնդրել գերյարգելի Ռէվէլոնիի կառքում: Խնդրի այս վերջին լուծումն ինձ աւելի բանական էր թւում: Ուստի, հակառակ ծայրագոյն շուարումիս, դէպի վար խոնարհած հայեացքով, տազնապս ծածկելու համար, բացատրեցի դժուար իրավիճակը, նրան նոյնպէս դժուարութեան մէջ դնելով, որովհետեւ իր կառքը լի էր ուխտագնացութեան ամենանշանաւոր պարոններով, մի փոքրիկ անկիւն անգամ ազատ չէր: Բայց բարեբախտաբար, մի բարեհամբոյր պարոն շտապեց զիջել ինձ իր տեղը, իսկ ինքը տեղաւորուեց կառապանի կողքին: Թակարդի մէջ բռնուած սկիւռի էի նմանում եւ բաւական հեռու էի ինձ յարմարաւէտ վիճակում զգալուց: Մեծագոյն անձնաւորութիւններով էի չըջապատուած, յատկապէս այն ահագողուով, որի ճիշտ դիմացն էի նստել: Եւ որը, սակայն, շատ բարեացակամ գտնուեց իմ հանդէպ, զանազան անգամներ ընդմիջելով իր խօսակցութիւնը վերոյիշեալ պարոնների հետ, իմ հետ կարմեղոսի մասին խօսելու համար: Կայարան հասնելուց առաջ, բոլոր մեծ անձնաւորութիւնները գրպաններից դուրս էին հանում իրենց հսկայ դրամապանակները, կառապանին ձեռածիր տալու համար (որն արդէն վճարուած էր). ես նոյնպէս նրանց պէս վարուեցի, դուրս քաշելով իմ փոքրիկ դրամապանակը, բայց գերյարգելի Ռէվէլոնին արգելեց, նախընտրելով ինքը վճարել իմ ու իր փոխարէն:

¹ Նոյ. 24ին, հինգշաբթի:

182. Մի ուրիշ անգամ նրա կողքին յայտնուեցի գնացքում. դե՛ռ աւելի բարեհամբոյր գտնուեց եւ խոստացաւ անել հնարաւոր ամէն բան, կարմեղոս մտնելու փափաքս իրականութեան վերածելու համար: Վէրքերիս մի քիչ սպեղանի դնելով հանդերձ, այդ փոքրիկ հանդիպումները չէին խանգարում, որ վերադարձի ճանապարհը նուազ հաճելի լինէր իմ համար՝ քան դէպի Հռոմ կատարածը, որովհետեւ այլեւս չունէի «Սրբազան Քահանայապետի յոյսը»: ոչ մի օգնութիւն չէի կարողանում գտնել երկրի վրայ, որն ինձ ցամաք անապատ էր թւում, առանց մի կաթիլ ջրի¹. ամբողջ յոյսս ու վստահութիւնս մարդասէրն Աստուած էր միայն: Աւելի փորձառու էի դառնում այն բանում, որ նախընտրելի է Աստծուն դիմել՝ քան իր արարածներին:

183. Հոգուս տրտմութիւնը, սակայն, ինձ չէր խանգարում հետաքրքրուելու մեր այցելած սրբավայրերով: Ֆիրենցիում², կարմեղական մայրապետների եկեղեցիում, երջանկութիւնն ունեցայ տեսնելու Սրբուհի Մագդաղինէ դե՛Փացցիին: Բոլորն էլ փափաքում էին իրենց վարդարանները Սրբուհու գերեզմանին հպել, բայց միայն ես կարողացայ ձեռքս վանդակապատի միջով ներս մտցնել. այսպիսով, բոլորը ինձ էին տալիս իրենց վարդարանները եւ ես ինձ բաւական հպարտ էի զգում կատարածս ծառայութեան համար: Գրեթէ անհրաժեշտութիւն էր, որ ամէն ինչին ձեռքս հասցնելու ձեւը գտնէի: Այսպէս պատահեց նաեւ Հռոմի «Երուսաղէմի Սուրբ Խաչ» կոչուող եկեղեցիում, ուր հնարաւորութիւնն ունեցանք տեսնելու իրական խաչափայտի մի քանի կտորներ, փշէ պսակից երկու փշեր եւ գամերից մէկը, որոնք բոլորն էլ ամփոփուած էին գեղեցիկ քանդակներով զարդարուած ոսկեայ սքանչելի մասնատուփի մէջ, բայց առանց ապակու, որով եւ ձեւը գտայ, թանկագին մասունքները յարգելով հանդերձ, մատս մասնատուփի անցքերից մէկով ներս մտցնելու համար. այդպիսով, կարողացայ ձեռքով դպչել Յիսուսի արեամբ ներկուած գամին: Իսկապէս չափազանց համարձակ գտնուեցի: Բայց Տէրը տեսնում է սրտերի խորքը, գիտէ՝ որ դիտաւորութիւնս ուղիղ էր եւ որ չէի կամենում իրեն տհաճութիւն պատճառել, այլ վարում էի իր հետ ինչպէս մի մանուկ, որն ամէն բան թոյլատրուած է կարծում եւ իրենն է համարում իր Հօր գանձերը:

184. Չեմ կարողանում հասկանալ, թէ ինչու են իտալիայում կանայք այնքա՛ն հեշտօրէն արտաքսուում հասարակութիւնից³. մեր ամէն քայլափոխին զգուշացումներ էինք ստանում. «Մի՛ մտէք այստեղ ... մի՛ մտէք այնտեղ, ձեզ դուրս կը վտարեն»: Ահ ինե՛ղձ կանայք, որքան արհամարհուած էք: Եւ սակայն, աստուածասէր կանայք աւելի շատ են՝ քան սղամարդիկ, եւ մեր Տիրոջ խաչելութեան օրը կանայք աւելի քաջարի եղան՝ քան Առաքեալները, որովհետեւ համարձակուեցին մօտենալ եւ սրբել Նրա պաշտելի Դէմքը: Անկասկած սա է պատճառը, որի համար Նա թոյլատրում է նրանց թերագնահատումը երկրի վրայ, որովհետեւ երկնային փառքն է նրանց խոստացել իբրեւ ժառանգութիւն: Այնտեղ՝ Երկնքում կը տեսնենք, որ իր մտածելակերպը նման չէ մարդկանց աշխարհայեացքին⁴, քանի որ այնժամ վերջինները առաջիններ կը լինեն⁵: Բայց ճամփորդութեան ընթացքում մէկից աւելի անգամներ չկարողացայ

¹ Մղմ 62, 2-3

² Այս քաղաքը Հայաստանում սովորաբար յայտնի է իր «Ֆիրենցիա» անուանաձեւով: Ուխտաւորները Ֆիրենցիում մնացին Նոյ. 24ի երեկոյից մինչեւ 26ի կէսօրը:

³ Չմոռանանք, որ Սրբուհին գրում է 19րդ դարի վերջում: Այժմ, 21րդ դարում, իրողութիւնները բոլորովին տարբեր են:

⁴ Ես 55, 8-9

⁵ Հմմտ. Մտթ 20, 16

համբերութեամբ սպասել Երկնքին, առաջին լինելու համար: Մի օր, կարմեղական վանականների վանքերից մէկի այցելութեան ժամանակ, չգոհացայ ուխտաւորներին արտաքին պատկերազարդ սրահներում հետեւելով, առաջացայ մինչեւ ներքին մենաստանները: Յանկարծ մի տարեց ու բարեղէմ վանական տեսայ, որը հեռուից հեռանալու նշաններ էր ինձ տալիս, մինչ ես, ետ դառնալու փոխարէն, է՛լ աւելի էի մօտենում իրեն եւ պատին կախուած նկարները մատնանշելով՝ նոյնպէս նշաններով ջանում էի հասկացնել՝ թէ գեղեցիկ էին: Երիտասարդ դիմագծերիցս ու արձակ մագերիցս անշուշտ հասկացաւ, որ մի մանուկ էի, մեծ բարութեամբ ժպտաց ու հեռացաւ, տեսնելով՝ որ թշնամու առաջ չէր գտնուում: Եթէ կարողանայի իտալերէն խօսել, կ'ասէի՝ որ ես նոյնպէս ապագայ կարմեղական եմ, բայց Բաբելոնի աշտարակը շինողների պատճառով¹ այս վերջինն անհնարին եղաւ:

185. Պիզան ու Ջենովան այցելելուց յետոյ², վերադարձանք Ֆրանսա: Ճանապարհին՝ սքանչելի տեսարաններ. ահա ընթանում ենք ծովափով եւ երկաթգիծն այնքան մօտ է ջրին, որ ալիքները թռում է թէ մեզ են հասնում (այս խաբկանքը արդիւնքն էր թափուող անձրեւի, ինչպէս նաեւ երեկոյ էր եւ տեսարանն աւելի վեհ կերպարանք էր ստանում): Քիչ անց, անցնում ենք հասուն պտուղներով ծանրաբեռնուած նարնջենիների լայնատարած այգիներով, ճանապարհը չքեղօրէն զարդարուած է կանաչ ձիթենիներով ու երկնասլաց արմաւենիներով: Օրուայ աւարտին, սկսեցին նշմարուել բազում փոքրիկ նաւահանգիստներ, որոնք փայլիլում էին հազարագոյն լոյսերով, մինչ երկնակամարի անհունութեան մէջ առկայծել էին սկսում առաջին աստղերը: Ա՛հ, ինչպիսի անարտայայտելի զգացումներով էր լցւում հոգիս, երբ տեսնում էի այդ բոլորը առաջին ու վերջին անգամ: Առանց որեւէ վշտի էի ընդունում դրանց ակնթարթային երեւումն ու անէացումը կայծակնային արագութեամբ, հոգիս այլօրինակ հրաշալիքների էր փափաքում հասնել: Բաւական դիտել էր երկրի գեղեցկութիւնները, արդ ծարաւի էր զմայլուելու երկնայիններով: Եւ ես, այդ վերին գեղեցկութիւնները միւս բոլոր հոգիներին նոյնպէս տալու համար, կամենում էի բանտարկուել: Բայց օրհնեալ արգելավայրի դռների իմ առջեւ բացուելը տեսնելուց առաջ, դեռ պարտաւոր էի շարունակել պայքարս ու տառապանքս: Այդ զգում էի՝ մինչ վերադառնում էի Ֆրանսա. եւ սակայն, վստահութիւնս այնքան վիթխարի էր, որ դեռ յոյսն ունէի կարմեղոս մտնել Դեկտ. 25ին³:

186. Հազիւ հասանք Լիզէոյ, շտապեցի առաջին այցելութիւնս տալ կարմեղոսին⁴: Ինչպիսի քաղցր տեսակցութիւն էր դա: Բաժանման մի ամսից յետոյ, ասելու շատ բաներ կային, մի ամիս՝ որն ինձ այնքա՛ն երկար էր թուացել ... եւ որի ընթացքում աւելի շատ բան սովորեցի՝ քան բազում տարիների ընթացքում ... :

Մայր իմ սիրելի, որքան ուրախ էի ձեզ կրկին տեսնելու եւ խոցուած փոքրիկ հոգիս ձեր առջեւ բացելու համար: Այնքա՛ն լաւ էիք հասկանում ինձ. մի խօսք կամ մի հայեացք բաւական էին ձեզ՝ ամէն բան կռահելու համար: Այլեւս Աստծոյ կամքին էի միայն յանձնուել. արել էի ինձնից կախում ունեցող հնարաւոր ամէն բան, ամէ՛ն բան, մինչեւ իսկ խօսել էի Հոռոմի Սրբազան Քահանայապետի հետ, այնպէս որ չգիտէի՝ թէ աւելի ի՞նչ կարող էի անել: Խորհուրդ տուեցիք նամակ գրել

¹ Հմմտ. Մտգ 11, 1-9

² Նոյ. 26ին ու 27ին:

³ Տե՛ս՝ Հատ. 143, ուր Թերեզան յայտնում է՝ թէ որոշել էր կարմեղոս մտնել Սուրբ Մննդեան տօնին, այսինքն՝ Դեկտ. 25ին, ըստ Արեւմտեան Եկեղեցու տօնացոյցի:

⁴ Ուխտաւորները Լիզէոյ հասան Դեկտ. 2ին, կէսօրից յետոյ: կարմեղոս կատարած այցելութիւնն ամենայն հաւանականութեամբ տեղի է ունեցել յաջորդ օրը:

Գերապայծառ Եպիսկոպոսին եւ յիշեցնել նրան իր խոստումը: Գրեցի իսկոյն, որքան լաւ կարող էի, բայց վերջում մօրեղբայրս այն չափազանց պարզունակ նկատեց: Ապա հէնց ինքը վերաշարադրեց նամակս: Այն պահին, սակայն, երբ պատրաստում էի առաքել այն, մի ուրիշ նամակ ստացայ ձեզնից, որով պատուիրում էիք չգրել, այլ սպասել մի քանի օր: Հնազանդուեցի, որովհետեւ վստահ էի՝ որ հնազանդութիւնն էր ինքս ինձ չխաբելու միակ եւ լաւագոյն միջոցը: Վերջիվերջոյ, Սուրբ Ծննդից տասը օր առաջ նամակս ճանապարհ ընկաւ: Համոզուած, որ պատասխանը չէր ուշանալու, ամէն առաւօտ Պատարագից յետոյ հայրիկի հետ նամակատուն էի գնում, յուսալով ստանալ դէպի Կարմեղոս ճախրելու թոյլտուութիւնը: Բայց ամէն առաւօտ իր հետ նոր յուսախաբուութիւն էր բերում, առանց կարողանալու, սակայն, սասանել հաւատքիս ու վստահութեանս հիմքերը: Խնդրում էի Յիսուսին խորտակել ստրկութեանս շղթաները: Փշրեց ու խորտակեց, այո՛, բայց ամբողջովին ա՛յլ կերպ՝ քան ինչպէս ես էի պատկերացնում: Սուրբ Ծննդեան գեղեցիկ տօնը եկաւ, բայց Յիսուս չարթնացաւ ... : Յատակին նետուած թողեց իր գնդակը, առանց վրան գէթ մի հայեացք միայն նետելու:

187. Կոտորուած սրտով գնացի կէսգիշերի Պատարագին, որին այլեւս Կարմեղոսի վանդակապատից այն կողմ էի ուզում մասնակցել: Իսկապէս, սա հաւատքիս համար մեծ փորձութիւն եղաւ, բայց «Նա՛ ում Սիրտը հսկում է նաեւ իր քնած ժամանակ»¹, հասկացրեց ինձ, որ հրաշքներ է կատարում նրանց համար, որոնց հաւատքը մեծ է մանանեխի հատիկի չափ, եւ որ լեռներ է անգամ տեղափոխում, այդքան փոքրիկ հաւատքը հաստատահիմն դարձնելու համար²: Նաեւ իր մտերիմների, նաեւ իր Մօր համար, մի՞թէ հրաշքներ չգործեց նրանց հաւատքը փորձութեան ենթարկելուց յետոյ միայն: Չթողե՞ց, որ Ղազարոսը մեռնի, թէեւ Մարթան ու Մարիամը նրան յայտնել էին՝ թէ ծանրօրէն հիւանդ էր³: Կանայի հարսանեկան խնջոյքի ժամանակ Սուրբ Կոյսը չխնդրե՞ց Յիսուսին օգնութեան հասնել տանտիրոջը եւ Յիսուս նրան չպատասխանե՞ց, որ իր ժամը դեռ չէր հասել⁴: Իսկ փորձութիւնից յետոյ, ինչպիսի՛ վարձատրում: Ջուրը գինի է դառնում ... Ղազարոսը՝ յարուցիւն առնում¹: Այսպէս վարուեց Յիսուս նաեւ իր Թերեզայի հետ. նրան երկար ժամանակ փորձելուց յետոյ, ի կատար ածեց նրա սրտի բոլոր իղձերը ... :

188. Լուսափայլ տօնի կէսօրից յետոյ, մի տօն՝ որ ես արցունքների մէջ անցկացրի, այցելելու գնացի իմ կարմեղականներին: Մեծագոյն անակնկալի մատնուեցի, երբ դռների իմ առջեւ բացուելու պահին մի աննկարագրելի գեղեցիկութեամբ ճոխացած Յիսուս Մանուկ տեսայ, ձեռքին մի փոքրիկ գնդակ, որի վրայ գրուած էր իմ անունը: Կարմեղականները, Յիսուսի փոխարէն, որը դեռ շատ փոքր էր խօսելու համար, իրենք երգեցին իմ համար մի երգ, որ շարադրել էր սիրելի Մայրս: Այդ երգի իւրաքանչիւր բառը քաղցրագոյն մխիթարանք էր տարածում հոգուս մէջ, երբեք չեմ մոռանայ մայրական սրտի այդ քնքշանքը, սիրտ՝ որ միշտ էլ լիացրեց ինձ իր ամենանուրբ խնամքներով: Հանդարտահոս արցունքների ընկերակցութեամբ երախտագիտութիւնս յայտնելուց յետոյ, նրանց պատմեցի մի այլ անակնկալի մասին, որն ինձ մատուցեց Սելինը, կէսգիշերի Պատարագից վերադարձին: Սենեակիս կենտրոնում, գեղեցիկ աւազանի մէջ լողացող փոքրիկ նաւակ

¹ Երգ 5, 2
² Հմմտ. Մտթ 17, 19
³ Հմմտ. Յվհ 11, 3
⁴ Հմմտ. Յվհ 2, 4

էի գտել, որի մէջ էլ՝ քնած Յիսուս Մանկանը, որն իր կողքին մի գնդակ ունէր: Սպիտակ առագաստի վրայ Սեւինը գրել էր. «Ես այժմ ննջում եմ, բայց սիրտս արթուն է միշտ»², իսկ նաևակի վրայ հետեւեալը. «Յանձնում Աստուծոյ ձեռքերին»: Ա՛հ, եթէ Յիսուս լուծ էր իր փոքրիկ նշանածի առաջ, եթէ իր աստուածային աչքերը շարունակում էին փակ մնալ, գէթ յայտնուծ էր ու քաջալերուծ այնպիսի հոգիների միջոցով, որոնք ի վիճակի էին հասկանալու իր Սրտի սէրն ու նրբութիւնները:

189. 1888 թուականի առաջին օրը Յիսուս կրկին իր խաչը պարզեց ինձ, բայց այս անգամ ստիպուած էի միայնակ կրել այն, հետեւաբար այնքան աւելի ծանր էր՝ որքան անհասկանալի: Մայր Մարիամ Գոնձակայի նամակներից մէկն ինձ տեղեկացրեց, որ Դեկտ. 28ին, Բեթղէհէմի Անմեղ Մանկանց տօնին, ստացել էր Գերապայծառ Եպիսկոպոսի դրական պատասխանը, բայց ինձ չէր յայտնել, որովհետեւ որոշուել էր՝ որ Կարմեղոս կարող էի մտնել Քառասնորդաց Պահօրից յետոյ միայն: Արցունքներս չկարողացայ գսպել. այդպիսի երկարատեւ յետաձգում: Այս վերջին փորձը իմ համար իւրայատուկ բնոյթ ունեցաւ. շղթաներս կործանուած էի տեսնում աշխարհի կողմից, բայց այս անգամ սուրբ տապանն ինքն էր մերժում խոնարհ աղանու մուտքը: Կարծում եմ՝ թէ իրօք անտրամաբան պէտք է թուայի, որովհետեւ չէի կարողանում ուրախութեամբ ընդունել աքսորիս երեք ամիսները, բայց նաեւ կարծում եմ, առանց ինքնախաբուծեան, որ այս փորձը յիրաւի մեծ եղաւ եւ բաւական զարգացրեց ինձ նուիրման եւ այլ առաքինութիւնների ասպարէզում:

190. Ինչպէ՞ս անցան հոգուս համար շնորհներով այդքա՛ն հարուստ երեք ամիսները: Նախեւառաջ մտքովս անցաւ ինքս ինձ չստիպել ապրելու այն խստականոն կեանքը, որին վարժուած էի: Բայց շատ շուտով հասկացայ ժամանակի արժէքը եւ առաջադրեցի աւելի քան երբեք տրուել լուրջ եւ մահացեալ կեանքի: Երբ ասում եմ «մահացեալ», մի՛ կարծէք՝ թէ ապաշխարութիւններով էի հարստացնում ապրածս պահը. աւա՛ղ, երբեք ապաշխարանք չեմ արել: Բաւական հեռու գտնուելով այն գեղեցիկ հոգիներին նմանուելուց, որոնք մանկութիւնից ի վեր գործադրում են ամէն տեսակ ապաշխարանքներ, ոչ մի հրապոյր չէի զգում դրանց հանդէպ: Սա, անկասկած, իմ իսկ վատասրտութիւնից էր բխում, որովհետեւ կարող էի, ինչպէս Սեւինը, տառապանքի հազար ու մի փոքրիկ աւիթներ գտնել, մինչդեռ, դրա փոխարէն, միշտ թողել եմ՝ որ ինձ բամբակի մէջ դրած փայփայեն ու կերակրեն այն փոքրիկ թռչնակների նման, որոնք ճգնութիւնների կարիք չունեն: Իմ ապաշխարանքները կայանում էին ինքս ինձ պարտադրելու մշտապէս պատրաստ կամքս կոտրելու, նեղացուցիչ խօսքերին չպատասխանելու, ծառայութիւններս մատուցելու առանց երախտագիտութիւն պահանջելու, նստած ժամանակ չյենուելու եւ ա՛յլ նմանօրինակ փոքրիկ գործերում: Այս եւ-ոչ-իսկ-ոչինչների միջոցով էր, որ պատրաստուեցի Յիսուսի հարսնացուն լինելուն: Եւ չեմ կարող խօսքերով արտայայտել՝ թէ որքա՛ն գեղեցիկ յուշեր է սրտիս խորքում թողել այդ սպասումը:

Երեք ամիսներն անցան սրընթաց: Վերջապէս հասաւ այնքա՛ն վառ կերպով ցանկացած պահը:

¹ Հմմտ. Յվհ 11, 44

² Երգ 5, 2

7. ԿԱՐՄԵՂՈՍԻ ՆՈՐԸՆԾԱՅՈՒՀԻՆ (1888–1890)

Սրտաճմլիկ բաժանումը ազգականներից – Օրինեալ տապանում – Հոգու խաղաղությունը – Առաջին փորձությունները – Վանական գգեստատությունը – Ձեռն անելը – Հօր հիւանդութեան պատճառով զգացած տրտմությունը – Աղքատութեան եւ ա՛յլ «փոքրիկ» առաքինությունների գործադրումը

191. Ապրիլի 9ը, երկուշաբթի, այն օրը՝ որում Կարմեղոսը ապրելու էր Աւետման սօճը, որը յետաձգուել էր Քառասնորդաց Պահքի պատճառով, որոշուեց որպէս մուտքիս օրը: Նախորդ օրուայ երեկոյեան, ամբողջ ընտանիքը համախմբուել էր սեղանի շուրջ, որի մօտ ես նստում էի վերջին անգամ: Ա՛հ, քանիցս սրտակեղեք են հրաժեշտի ողջոյնները: Երբ աւելի ուզում ես քեզ մոռացուած տեսնել, սկսում են գուրգուրանքներ ու քնքշալի խօսքեր շուայել, որոնք առաւել շօշափելի են դարձնում բաժանման կսկիծը: Հայրիկը գրեթէ չէր խօսում, բայց իր սիրալի հայեացքը յաճախ էր կանգ առնում վրաս: Երբեմն երբեմն արցունքներով էին թրջւում մօրեղբօրս կնոջ այտերը, իսկ ինքը մօրեղբայրս հազարաւոր հոգատար խնամքների էր արժանացնում ինձ: Յովհաննան ու Մարիամը նոյնպէս շատ բարեհաճ էին իմ նկատմամբ, յատկապէս Մարիամը, որն ինձ մի անկիւն քաշելով ներողութիւն խնդրեց այն բոլոր տհաճութիւնների համար, որոնք կարծում էր ինձ պատճառած լինել: Եւ վերջապէս նաեւ իմ թանկագին Լէոնիան, որը մի քանի ամիս առաջ տուն էր վերադարձել վանքից¹, լիացնում էր ինձ իր համբոյրներով ու գրկախառնումներով: Միայն Սելինի մասին չխօսեցի, բայց դուք հասկանում էք, Մայր իմ սիրելի, թէ ինչպիսի հոգեհորոգ գրոյցներով անցկացրինք վերջին գիշերը:

192. Այդ մեծ օրուայ առաւօտեան, վերջին հայեացք տալով Բուխտնէին, մանկութեանս այդ նուիրական օրրանին, որը չէի տեսնելու այլեւս երբեք, մեկնեցի սիրելի թագաւորիս ընկերակցութեամբ Կարմեղոսի լեռը բարձրանալու: Ինչպէս նախորդ օրուայ երեկոյեան, ամբողջ ընտանիքն ի մի հաւաքուած տեսայ, Սուրբ Պատարագին մասնակցելու ու հաղորդուելու համար: Հազիւ Յիսուս իջաւ սիրելիներիս սրտերի մէջ, հեծկտոցներից բացի ուրիշ ոչինչ չլսեցի: Ես չարտասուեցի, բայց սիրտս այնպիսի արագութեամբ էր բաբախում, որ ինձ մի պահ անհնարին թուաց մի քայլ անգամ գցելու կարողութիւնը, երբ դէպի վանական դռները հրաւիրեցին մեզ: Յառաջանում էի, բայց ինքս ինձ հարցնելով՝ թէ արդեօք մեռնելո՞ւ եմ սրտիս զարկերի ուժգնութեան հետեւանքով: Ինչպիսի՞ պահ էր դա: Հարկաւոր է նրանով անցած լինել, նրա ինչ լինելն ըմբռնելու համար:

193. Յուզումս արտաքուստ չերեւաց. բոլոր ազգականներիս հետ գրկախառնուելուց յետոյ, ծունկի եկայ անհամեմատելի հօրս առաջ, խնդրելով իր օրհնութիւնը: Նա նոյնպէս ծնրադրեց եւ տուեց իր օրհնութիւնը, արցունքների հետ միասին: Այդ տեսարանը յուզած պէտք է լինի նաեւ հրեշտակներին. մի ծերունի, որ իր դասերը Տիրոջն է նուիրում կեանքի գարնանամուտին: Քիչ ըոպէներ անց, սրբազնասուրբ տապանի դռները փակուեցին իմ ետեւում եւ այնտեղ ընդունեցի սիրասուն քոյրերիս համբոյրները, նրանց՝ որոնք իմ համար մայրիկներ էին եղել եւ որոնք այդուհետեւ կեանքի օրինակներ դարձան իմ համար: Ահա եւ կատարուած էին բոլոր փափաքներս, հոգիս այնպիսի խոր ու քաղցր խաղաղութեան մէջ էր, որ

¹ Լէոնիան, որ Քայէնի Այցելութեան մայրապետների վանքն էր մտել 1887ի Յուլ. 16ին, առողջական պատճառներով հարկադրուեց այն որոշ ժամանակով թողնել 1888ի Յունուարի 6ին:

անհնարին է խօսքերով արտայայտել: Եթե ու կէս տարիներ են անցել այդ օրից, բայց խաղաղութիւնս դեռ հետս է. ամենածանր վշտակրութիւնների ժամանակ անգամ չլքեց ինձ:

194. Ինչպէս բոլոր նորընծայուհիները, հագիւ վանք մտած՝ առաջնորդուեցի դէպի դաս, որն ամբողջովին մթութեան մէջ էր¹, եւ այն, որ տպաւորեց ինձ ամէնից շատ, եղաւ մեր սուրբ Մայր Զենովէֆֆայի² աչքերի անդորր փայլը, աչքեր՝ որ սեւեռուած էին իմ վրայ: Մի պահ ծունկի մնացի նրա առաջ, շնորհակալութիւն յայտնելով Աստուծոն, որ ինձ հնարաւորութիւնն էր տալիս ճանաչելու մի սրբուհի: Ապա հետեւեցի Մայր Մարիամ Գոնձակային³, որն ինձ ծանօթացրեց վանքի զանազան բաժանմունքներին: Ամէն բան սքանչելի էր թւում, կարծես անապատ փոխադրուած լինէի, եւ յատկապէս փոքրիկ խուցս էր ինձ հիացնում. բայց ուրախութիւնը, որ զգում էի, հանդարտ էր: Եւ ոչ իսկ մի հով, նոյնիսկ թեթեւակի, չէր ալեկոծում խաղաղ մակերեսն այն ջրերի, որոնց վրայ սահում էր իմ փոքրիկ նաւակը: Ամպեր չկային իմ ջինջ երկնքում: Ա՛հ, առատօրէն վարձատրուել էի բոլոր տառապանքներիս փոխարէն: Ինչպիսի հոգեթով զուարթութեամբ էի կրկնում այս խօսքերը. «Ընդմիշտ, այստեղ եմ այլեւս ընդմիշտ»:

195. Երջանկութիւնս վաղանցուկ չէր եւ չէր կարող անէանալ «առաջին օրերի պատրանքների հետ»: Պատրանքներ ... : Աստուածային ողորմութեան շնորհիւ, Կարմեղոս մտնելիս չունեցայ դրանցից եւ ոչ իսկ մէկ հատ: Վանական կեանքը գտայ այնպէս՝ ինչպէս այն պատկերացնում էի, ոչ մի դժուարութիւն ինձ զարմանք չպատճառեց, մինչ դուք, Մայր իմ սիրելի, լաւ գիտէք, որ իմ առաջին քայլերն աւելի փշերի հանդիպեցին՝ քան վարդերի: Այո՛, նեղութիւններն իմ առջեւ բացեցին իրենց գիրկը եւ ես այնտեղ նետուեցի սիրով:

Այն՝ ինչ անելու էի Կարմեղոսում, յայտարարեցի Սուրբ Նշխարի մէջ թաքնուած Յիսուսի առաջ ծունկի եկած. «Եկել եմ հոգիներ փրկելու եւ յատկապէս՝ քահանաների համար աղօթելու»: Երբ կամենում ես մի որեւէ նպատակ հետապնդել, անհրաժեշտ է՝ որ գործադրես համապատասխան միջոցները: Յիսուս հասկացրեց ինձ, որ կամենում էր ինձ հոգիներ տալ խաչի միջոցով, եւ իմ տենչը, որ ունէի վշտակրութեան հանդէպ, աճեց տառապանքների հետ ուղիղ համեմատութեամբ: Հինգ տարի շարունակ դա եղաւ իմ ճանապարհը⁴. Բայց արտաքինից ոչինչ էլ չէր յայտնում հոգուս տուայտալի վիճակը, այս իսկ պատճառով այդ վիճակն աւելի տանջալի էր դառնում, քանի որ տեղեակ էի նրան միայն ես: Ա՛հ, քանի՛ քանի՛ անակնկալների ենք հանդիպելու աշխարհի վերջում, կարդալով հոգիների պատմութիւնը: Քանի՛ քանիներ են ապշելու, տեսնելով թէ ինչպիսի արահետներով է առաջնորդուել իմ հոգին:

¹ Դասը՝ եկեղեցու Աւագ Խորանին ամենամօտ մասը, որն առանձնացած է ընդհանուր աղօթասրահից, կարմեղականները սովորաբար պահում էին մթութեան մէջ, որպէսզի չտեսնուէին աղօթասրահից:

² Մայր Զենովէֆֆայի Լիզեոյի Կարմեղոսի հիմնադրուհին էր (1838ին): Բագում անգամներ վերընտրուեց վանքի մեծաւորուհի: Հիւանդանալով 1884ին, սրբօրէն մահացաւ 1891ի Դեկտ. 5ին:

³ Լիզեոյի Կարմեղոս մտնելով 1860ին, մայր Մարիամ Գոնձակային առաջին անգամ մեծաւորուհի ընտրուեց 1874ի Հոկտ. 28ին: Հետագայում նոյն պաշտօնին վերընտրուեց եւս հինգ անգամ:

⁴ Այս շրջանը համապատասխանում է վանքի մեծաւորութեանը մայր Մարիամ Գոնձակայի երկու յաջորդական վերընտրութիւնների ժամանակամիջոցին:

196. Սա այնքանով է ճիշտ, որ մոլորակները երկու ամիս անց, հայր Փիլոնը, որ Կարմեղոս էր եկել իր կեանքը Յիսուսի Սուրբ Սրտին ձօնած քոյր Մարիայի վանական ուխտադրութեան առթիւ¹, զարմացած մնաց, տեսնելով թէ ինչպէս էր Աստուած գործում հոգու մէջ: Ասաց, որ նախորդ օրն ինձ էր դիտել, մինչ աղօթում էի դասում, եւ եզրակացրել էր, որ ջերմեռանդութիւնս մանկական էր, իսկ ուղիս՝ հարթ ու հանգիստ: Բարի խոստովանահօրս հետ ունեցած այս զրոյցս մեծագոյն մխիթարութիւն պատճառեց ինձ, բայց նաեւ ցօղուեց արցունքներով, այն դժուարութեան պատճառով, որ զգում էի հոգու խորքերը բացայայտելու գործում: Սրանով հանդերձ, սակայն, ընդհանրական խոստովանանք կատարեցի, ինչպիսին չէի կատարել երբեք: Վերջում, քահանան արտասանեց հետեւեալ խօսքերը, որոնք ամենամխիթարականներն են հոգու մէջ երբեւէ արձագանքած խօսքերի մէջ. «Աստուծոյ, Սուրբ Կոյսի եւ բոլոր Սրբերի ներկայութեան յայտարարում եմ, որ չէք գործել ոչ մի մահացու մեղք»: Ապա աւելացրեց. «Երախտագիտութիւն յայտնէք Աստուծոն այն ամէնի համար, որ շնորհել է ձեզ, որովհետեւ եթէ լքի ձեզ, փոքրիկ հրեշտակ լինելու փոխարէն՝ կը դառնաք փոքրիկ սատանայ»: Ա՛հ, մեծագոյն ջանքեր հարկաւոր չէին՝ դրանում համոզուելու համար, շատ լաւ էի զգում թէ որքան էի տկար ու թերի: Բայց երախտագիտութիւնը ողորդում էր հոգիս. այնքան էի վախենում Մկրտութեանս մաքուր պատմութեանը ապականած լինելուց, որ նմանօրինակ վստահացում, այնպիսի հոգեւոր առաջնորդի բերանից ելած՝ ինչպիսին կամենում էր որ լինէին մեր առաջնորդները Կարմեղոսի հիմնադիր-վերանորոգչուհի Սրբուհի Թերեզան, այսինքն այնպիսի մէկը՝ որ առաքինութիւններով էր զարդարում իր գիտութիւնը, ելած էր թլում հէնց իր իսկ Յիսուսի բերանից: Բարեհոգի քահանան ասաց նաեւ հետեւեալ խօսքերը, որոնք քաղցրօրէն տպաւորուեցին սրտիս խորքում. «Որդեակ իմ, թող մեր Տէրն ինքը լինի միշտ քո Մեծաւորն ու նորընծայութեանդ Ուսուցիչը»: Եղաւ, իրօք, ինչպէս նաեւ «Հոգեւոր Առաջնորդս»:

197. Սրանով չեմ կամենում սակայն ասել՝ թէ հոգիս փակ մնաց մեծաւորներիս առաջ. ա՛հ, դրանից բաւական հեռու, շարունակ ջանացի բաց գիրք լինել նրանց առաջ: Բայց մեր Մայրը, որ յաճախ էր հիւանդանում, ինձնով զբաղուելու շատ քիչ ժամանակ էր ունենում: Գիտեմ, որ ինձ շատ էր սիրում եւ ուրիշների հետ լաւ էր խօսում իմ մասին: Սրանով հանդերձ, սակայն, մարդասէրն Աստուած թոյլ էր տալիս, որ առանց անդրադառնալու՝ չափազանց խիստ լինէր. չէի կարողանում հանդիպել նրան առանց յատակն համբուրելու²: Նոյնը պատահում էր նաեւ իր հետ ունեցած հազուադէպ հոգեւոր խօսակցութիւնների ժամանակ: Ինչպիսի՛ անգին պարգեւ: Ինչպէս էր Աստուած տեսանելի կերպով գործում իր ներկայացուցչի միջոցով: Արդեօք ի՞նչ կը դառնայի ես, եթէ, ինչպէս կարծում են աշխարհի մարդիկ, վանական հասարակութեան կողմից սիրուած «տիկնիկ» լինէի: Եթէ մեծաւորներիս մէջ Յիսուսին տեսնելու փոխարէն մարդկային անձեր միայն տեսնէի, սիրտս, որն այնքա՛ն լաւ էր պահպանուել աշխարհում, մարդկային համակրանքներ կ'ապրէր փակարանում: Բարեբախտաբար գերծ մնացի այդպիսի դժբախտութիւնից: Այո՛, շատ էի սիրում մեր Մօրը, բայց այնքան մաքուր գորովով, որն ինձ դէպի հոգու Փեսան էր միայն բարձրացնում:

¹ 1888ի Մայիսի 22ին:

² Կարմեղոսում (ինչպէս նաեւ միւս գրեթէ բոլոր վանական հաստատութիւններում) յատակն համբուրելը օգտագործւում էր որպէս խոնարհութեան նշան (եւ ինչու չէ, որոշ իմաստով նաեւ որպէս պատժի նշան):

198. Մեր վերակացուն իրական սրբուհի էր¹, առաջին կարմեղականների կատարեալ օրինակ: Ամբողջ օրն իր մօտ էի անցկացնում, որովհետեւ ինձ աշխատել էր սովորեցնում: Իր բարութիւնն իմ հանդէպ անսահման էր, եւ սակայն՝ հոգիս դժուարութեամբ էր արտայայտուում: Մեծագոյն ջանքերի գնով էի միայն կարողանում հոգեւոր առաջնորդութիւն ինդրել: Քանի որ վարժ չէի հոգեվիճակիս մասին խօսելու, չգիտէի՝ թէ ինչպէս արտայայտէի հոգուս խորքում տեղի ունեցող անցուդարձերը: Մի տարեց բարի մայրապետ շուտով կուահեց վիճակը, որում գտնուում էի, եւ մի օր, զբօսանքի պահին, ժպտալով ասաց. «Աղջիկս, կարծում եմ՝ թէ մեծաւորներիդ յայտնելիք շատ բան չպէտք է ունենաս»: «Ինչո՞ւ էք, Մայր, այս բանը ասում»: «Որովհետեւ ձեր հոգին ծայրաստիճան պարզ է, բայց երբ կատարեալ դառնաք, է՛լ աւելի կը պարզանաք: Որքան աւելի ենք մօտենում Աստծուն, այնքան աւելի ենք պարզանում»: Բարի մայրապետն իրաւացի էր. եւ սակայն, այդ դժուարութիւնը, որ զգում էի հոգեվիճակս բացայայտելիս, պարզութիւնիցս բխելով հանդերձ, իրական տառապանք էր: Դա գիտակցում եմ այժմ, որովհետեւ, առանց պարզութիւնիցս դադարելու, մտքերս մեծագոյն դիւրութեամբ եմ այլեւս արտայայտում:

199. Արդէն ասացի, որ Յիսուս Ինքն էր «իմ Առաջնորդը»: Կարմեղոս մտնելով, ճանաչեցի նրան՝ ում յանձնուել էր կատարել այդ ծառայութիւնը իմ նկատմամբ, բայց դեռ հագիւ էր ինձ իր որդիների շարքերից ներս ընդունել, երբ օտարութեան մեկնեց²: Այսպիսով, ճանաչեցի նրան՝ նրանից անմիջապէս գրկուելու համար: Տարուայ ընթացքում իրեն ուղղած տասներկու նամակներիս փոխարէն միայն մի պատասխան ստանալով, սիրտս շուտով իր հայեացքն ուղղեց առաջնորդների Առաջնորդին, եւ Նա եղաւ իմ դաստիարակը, հմտացրեց ինձ այն գիտութեան ասպարէզում, որը թաքցուած է գիտուններից ու իմաստուններից եւ որը Նա կամենում է ամենափոքրերին միայն յայտնել³:

200. Կարմեղոսի լեռ փոխադրուած փոքրիկ ծաղիկը պէտք է խաչի ստուերի ներքոյ բացուէր. Յիսուսի արցունքներն ու Արիւնը ցօղը եղան, իսկ արտասուլապատ պաշտելի Դէմքը՝ արեւը: Մինչ այդ, դեռ չէի պեղել Սուրբ Դէմքի մէջ թաքնուած գանձերը⁴. ձեր օգնութեամբ էր, Մայր իմ սիրելի, որ դրանք ճանաչել սովորեցի: Ինչպէս ժամանակին մեզ բոլորիս նախորդեցիք Կարմեղոսում, այնպէս էլ առաջինը եղաք մեր Փեսայի Դէմքում ծածկուած սիրոյ խորհուրդներից ներս թափանցելու գործում: Այնժամ դուք կանչեցիք ինձ եւ ես հասկացայ: Հասկացայ՝ թէ որն է ճշմարիտ փառքը: Նա, ում թագաւորութիւնն այս աշխարհից չէ⁵, յայտնեց ինձ, որ

¹ Քոյր Մարիան նորընծայուհիներին ղեկավարելու պաշտօնը ստանձնել էր 1886ի Հոկտեմբերին: Վանքի փոխմեծաւորուհի ընտրուելով 1893ին, նախկին պաշտօնը յանձնեց մայր Մարիամ Գոնձակային, որին էլ հէնց օգնում էր Յիսուս Մանկան քոյր Թերեզան: Սրբուհու մահից յետոյ, քոյր Մարիան կրկին անցաւ նորընծայուհիների վերակացութեան պաշտօնին:

² Առաքելութեան ուղարկուելով մեծաւորների որոշմամբ, հայր Փիշոնը Կանադա հասաւ 1888ի Նոյ. 3ին:

³ Հմմտ. Մտթ 11, 25

⁴ Սուրբ Դէմքի հանդէպ ջերմեռանդութիւնը առաջացել է 19րդ դարում, մեր Տիրոջ կողմից կատարուած մի քանի յայտնութիւններից անմիջապէս յետոյ: Ինչպէս ընտանեկան շրջանակներում, այնպէս էլ Կարմեղոսում Թերեզան պահպանեց իր այս ջերմեռանդութիւնը: Քաջալերուելով ապա մայր Ագնէս Յիսուսից, է՛լ աւելի խորացրեց այն, հիմնուելով յատկապէս Եսայի Մարգարէի գրութիւնների վրայ: 1889ի Յունուարի 10ին, իր վանական գգեստառութեան օրը, Թերեզան առաջին անգամ լինելով ստորագրեց այսպէս. «Քոյր Թերեզա Յիսուս Մանկան եւ Սուրբ Դէմքի»:

⁵ Հմմտ. Յվհ 18, 36

իրական իմաստութիւնը «մոռացուած եւ ոչինչ համարուած» լինելու մէջ է կայանում¹, ինչպէս նաեւ՝ «երջանկութեան աղբիւրը սեփական անձի ուրացման մէջ փնտուելու»²: Ա՛հ, ինչպէս Յիսուսի Դէմքը, ես նոյնպէս կամենում էի, «որ իմ փառքն իրապէս ծածկուած լինէր, որ երկրի վրայ ոչ ոք ինձ չճանաչէր»³: Ծարաւի էի տառապանքի ու մոռացուելու:

Քանիցս լի է ողորմութեամբ այն ճանապարհը, որով մարդասէրն Աստուած առաջնորդեց ինձ միշտ, բաղձանքներս երբեք անպատասխան չթողեց, այնպէս՝ որ իր դառն բաժակն ինձ այլեւս քաղցր թուաց:

201. Մայիս ամսուայ պայծառափայլ տօներին⁴ եւ մեր թանկագին քրոջ՝ Մարիայի վանական ուխտադրութեան եւ քօղարկման արարողութիւնից յետոյ պատշաճ էր, որ տառապանքներն այցելէին մեզ: Ճիշտ մի տարի առաջ, մայիս ամսին, հայրիկը ոտքերի անդամալուծութեան էր ենթարկուել, ծանր տիրութեան մէջ թողնելով բոլորիս⁵, բայց սիրասուն թագաւորիս ամուր կազմուածքը շուտով յաղթել էր հիւանդութեանը, հետեւանքով ցրելով նաեւ մեր բոլոր վախերը: Եւ սակայն, դէպի Հոռոմ ճամփորդութեան ընթացքում մէկից աւելի անգամներ նկատել էինք, որ շատ հեշտօրէն էր յոգնում եւ իր սովորական ժպիտը չունէր դէմքին: Այն՝ ինչ ուշադրութիւնս գրաւեց իւրայատուկ կերպով, առաջադիմութիւնն էր, որ հայրիկը կատարում էր սրբութեան ճանապարհում: Ըստ Սուրբ Ֆրանչիսկոս Սալեզացու օրինակի, կարողացաւ այնպէս տիրապետել իր բնական աշխուժութեանը, որ սկսեց աշխարհի ամենահեզ բնաւորութեան տէր մարդը թուալ: Երկրային անցուդարձերը տկարացնում էին նրան, բայց դիւրութեամբ էր պաշտպանւում ընդդէմ հակառակութիւնների, եւ վերջում Աստուած նրան ողողում էր իր մխիթարութիւններով: Ամենասուրբ Հաղորդութեանը տուած իր ամէնօրեայ այցելութիւնների ժամանակ նրա աչքերն յաճախ էին արցունքներով լցւում, իսկ երեսը երկնային երանութիւն էր ճառագայթում: Երբ Լէոնիան դուրս եկաւ վանքից, նա չտրամեց, յանդիմանութիւններ չուղղեց մարդասէրն Աստծուն, իր աղօթքներն ընդունած չլինելու եւ իր սիրելի դստերը համապատասխան կոչում տուած չլինելու համար. ընդհակառակն, որոշ ուրախութեամբ գնաց նրան տուն բերելու⁶:

Ահա թէ ինչպիսի հաւատքով հայրիկն ընդունեց բաժանումն իր փոքրիկ թագուհուց. Ալանսոնի իր ծանօթներից մէկին հետեւեալ տողերով հաղորդեց իմ մեկնումը. «Սիրելի բարեկամ, Թերեզան, փոքրիկ թագուհիս, երէկ Կարմեղոս մտաւ: Միայն Աստուած կարող է այսպիսի զոհողութիւն պահանջել ... : Բայց մի՛ ցաւակցէք ինձ, որովհետեւ իմ սիրտը ուրախութեամբ է միայն լի»:

202. Ժամանակն էր այլեւս, որ այդքան հաւատարիմ ծառան ընդունէր իր բոլոր յոգնութիւնների վարձը, եւ արդարացի էր, որ այդ վարձը Աստծուց Երկնքի Թագաւորին՝ իր Միածին Որդուն տրուածին նմանուէր: Հայրիկը ոչ շատ ժամանակից ի վեր մի խորան էր նուիրել Աստծուն⁷. հէնց ինքը եղաւ ընտրեալ զօհը,

¹ Նմանութիւն Յիսուս Քրիստոսի, Ա, Բ 3

² Նմանութիւն Յիսուս Քրիստոսի, Գ, ԽԹ 7

³ Ես 53, 3

⁴ Արեւմտեան Եկեղեցու ականդութեան մէջ Մայիս ամիսը նուիրուած է Տիրամօրը:

⁵ Պրն. Մարթինի հիւանդութեան առաջին նշաններն ի յայտ եկան 1887ի Մայիսի 1ին:

⁶ Տէ՛ս՝ հատ. 130: Սրբուհին այստեղ ի նկատի ունի Լէոնիայի դուրս գալը Քլարիսների վանքից:

⁷ Լիզէոյի «Սուրբ Պետրոս» եկեղեցու Աւագ Խորանը:

սահմանուած՝ Անարատ Գառան հետ միասին այդ խորանի վրայ խաչուելուն¹: Յիշում էք, Մայր իմ սիրելի, Յունիա ամսուայ մեր դառնութիւնները, յատկապէս ամսի 24ինը, 1888 թուականին². այդ յիշատակները չափազանց խոր կերպով են դրոշմուած մեր սրտերում, եւ կարծում եմ՝ թէ՛ դրանք թղթին յանձնելու կարիք չկայ: Ա՛հ, Մայր իմ, որքան տառապեցինք: Եւ դեռ միայն սկիզբն էր մեր վշտակրութիւնները: Հասել էր զգեստառութեան օրը, միանձնուհիների վանական ժողովն ինձ ընդունեց, բայց հնարաւոր էր արդեօք հանդիսաւոր արարողութեան մասին մտածել: Արդէն խօսուած էր այն մասին, որ կարող էին զգեստաւորել ինձ առանց դուրս գալու³, երբ որոշուեց դեռ մի քիչ եւս սպասել⁴: Ընդդէմ բոլոր ակնկալութիւնների, մեր սիրելի հայրիկը հիւանդութեան երկրորդ հարուածից նոյնպէս առողջացաւ¹, եւ Գերապայծառ Եպիսկոպոսը որպէս արարողութեան օր որոշեց Յունուարի 10ը:

203. Սպասումը շատ երկար եղաւ, բայց քանիցս գեղեցիկ էր հանդիսութիւնը: Ոչինչ չպակասեց, ոչինչ, եւ ոչ իսկ ձիւնը: Զգիտեմ, արդեօք արդէն խօսե՞լ եմ ձեան հանդէպ ունեցածս սիրոյ մասին: Երբ դեռ շատ փոքր էի, նրա փայլն ինձ հիացնում էր. մեծագոյն հաճոյքներիցս մէկը սպիտակ փաթիլների տակ զբօսնելն էր: Բայց որտեղի՞ց էր գալիս այդ ճաշակս: Թերեւս այն փաստից, որ ես նոյնպէս ձման ծաղիկ լինելով, բնութեան առաջին գեղեցկութիւնը, որ տարածուած տեսայ աչքերիս առաջ, իր սպիտակ վերարկուն էր: Անդադար երազանքս էր, որ զգեստառութեան օրը բնութիւնը նոյնպէս սպիտակ հագնուէր, ինչպէս ես: Նախորդ օրը տրամութեամբ էի դիտել մոխրագոյն երկինքը, որն երբեմն բարակ անձրեւ էր մաղում եւ օդը նոյնպէս այնքան խոնաւ էր, որ ձեան տեղումներ այլեւս չէի սպասում: Յաջորդ առաւօտեան երկինքը նոյնն էր. արարողութիւնը, սակայն, անպատմելի, որի ամենագեղեցիկ ծաղիկն իմ թանկագին թագաւորը եղաւ: Նրան երբեք այդքան գեղեցիկ չէի տեսել, այդքան վեհ ու արժանապատիւ: Բոլորի հիացման առարկան էր. այդ օրն իր յաղթանակը եղաւ, իր վերջին տօնն այստեղ ներքեւում: Իր բոլոր որդիներին Աստծուն էր նուիրել. այո՛, որովհետեւ Սելինը նոյնպէս յայտնել էր նրան իր կոչումը եւ նա ուրախութիւնից արտասուել էր, ապա գնացել էր իր երախտագիտութեան զգացումները մատուցելու Նրան՝ ով «մեծագոյն պատուի էր արժանացնում իրեն, վերցնելով իր բոլոր զաւակներին»:

204. Ծիսակատարութեան աւարտին, Գերապայծառ Եպիսկոպոսը սկսեց «Զքեզ Աստուած» երգել: Քահանաներից մէկը շտապեց յիշեցնել, որ այդ օրհներգը միայն ուխտադրութիւնների ժամանակ էր երգուած, բայց արդէն սկիզբ առած գոհաբանական տաղը շարունակուեց մինչեւ վերջ: Մի՞թէ ամբողջական չէր լինելու այդ տօնը, քանի որ նրանում են ամփոփուած միւս բոլորը: Սիրելի թագաւորիս հետ վերջին անգամ գրկախառնուելուց յետոյ վերադարձայ փակարան եւ առաջին բանը, որ տեսայ բակում, եղաւ «իմ փոքրիկ վարդագոյն Յիսուս Մանուկը», որ ժպտում էր

¹ Խոցուած սրտով պատկերուող Գառը խորհրդաւոր (այլաբանական) կերպով ներկայացնում է Յիսուսին, Աստուածային Փրկչին, որն իր արիւնը հեղեց մարդկութեան փրկութեան համար (տե՛ս՝ Յյտ 5, 1-14):

² 1888ի Յունիսի 23ին, շաբաթ օրը, Պրն. Մարթինը, որն արդէն բաւական հիւանդագին վիճակում էր, դուրս էր եկել տնից առանց որեւէ մէկին տեղեակ պահելու: Վերագտնուեց չորս օր յետոյ միայն, Յունիսի 27ին, Լը Աւուում:

³ Վանական զգեստաւորման օրը նորընծայուհին դուրս էր գալիս փակարանից եւ ընտանիքի հետ միասին՝ աղօթքներին մասնակցում էր դրսից, հարսնացուի սպիտակաճեմ հանդերձնեցով:

⁴ Նորընծայութեան սովորական տեւողութիւնը կարմեղոսում 6 ամիս էր. Թերեզան, հետեւաբար, պէտք է զգեստաւորուէր 1888ի Հոկտեմբերին:

ինձ ծաղիկները ու լոյսերը միջից², ապա հայեացքս իսկոյն ձեան փաթիլները վրայ հանգչեց. բակը իմ նման սպիտակ էր: Որքա՛ն բարի է Յիսուս: Նախատեսելով իր փոքրիկ նշանածի փափաքները, նրան ձիւն էր նուիրում ... : Զի՛ւն: Ո՞վ է, ուրեմն, այն մահկանացուն, որքան էլ հզօր լինի, որ կարող է երկնքից ձիւն տեղացնել՝ իր սիրելիին հաճոյք պատճառելու համար: Թերեւս աշխարհի մարդիկ իրենց առջեւ դրին այս հարցը, եւ անկասկած զգեստառութեանս ձիւնը նրանց մի փոքրիկ հրաշք թուաց ու զարմանք պատճառեց բոլորին: Նրանք մի տեսակ տարօրինակ էին գտնում ճաշակս, որովհետեւ ձիւնն ինձ հաճելի էր: Աւելի լաւ: Սա առաւել ցայտուն է դարձնում անսահմանօրէն մեծ զիջողութիւնը կոյսերի Փեսայի, որը սիրում է ձեան նման սպիտակ շուշաններին:

205. Արարողութեան աւարտին, ներս մտաւ նաեւ Գերապայծառ Եպիսկոպոսը³, որի բարութիւնն իմ հանդէպ յիրաւի հայրական էր: Հպարտ էր տեսնելով, որ յարատեւել էի կոչմանս մէջ, ասում էր բոլորին՝ թէ «իր դուստրն» էի: Այս գեղեցիկ տօնից յետոյ նոյնպէս, ամէն անգամ՝ որ Նորին Գերազանցութիւնը մեզ հիւր եկաւ, միշտ բարեհամբոյր եղաւ իմ հանդէպ, յիշում եմ յատկապէս նրա այցելութիւնը՝ կապուած Սուրբ Յովհաննէս Խաչի հարիւրամեակին: Գլուխս իր երկու ձեռքերի մէջ առաւ, ապա մեծագոյն քնքշութեամբ խօսեց հետս. երբեք այդքան պատիւներ չէի ընդունել: Միեւնոյն պահին մարդասէրն Աստուած մտածել տուեց ինձ այն բոլոր պատիւների շուրջ, որոնցով մեզ շուրջօրէն զարդարելու է Հրեշտակների ու Սրբերի առաջ, եւ որի մի տկար պատկերն էր տալիս ինձ այստեղ՝ երկրի վրայ: Այսպիսով, զգացածս մխիթարութիւնն իրօք մեծ եղաւ:

206. Արդէն ասացի, որ Յունուարի 10ը իմ թագաւորի համար յաղթական օր եղաւ, ես այն նմանեցնում եմ Յիսուսի մուտքին Երուսաղէմ. ինչպէս մեր Աստուածային Վարդապետի միօրեայ փառքին հետեւեցին տառապանքն ու խաչելութիւնը, եւ ինչպէս այդ տանջանքները միայն Ինքը չէ, որ կրեց: Յիսուսի տառապանքները երկսայրի սրի նման խօցեցին նաեւ Աստուածամօր սիրտը⁴. այո՛, մեր սրտերը նոյնպէս ապրում էին դառն վշտակրութիւնը նրա՝ ում ամէնից շատ էինք սիրում այս պանդուխտ աշխարհում: Յիշում եմ, որ 1888ի Յունիսին, մեր առաջին տառապանքների բովում, ասում էի. «Շատ եմ տառապում, բայց նաեւ զգում եմ, որ է՛լ աւելի մեծ վշտակրութիւնների կարող եմ համբերել»: Այն ժամանակ չէի կարող երեւակայել, թէ դեռ ինչպիսի վշտեր էին ինձ վերապահուել: Զգիտէի, որ Փետրուարի 12ին, քօղարկումիցս մի ամիս անց, մեր հայրիկը մինչեւ վերջին կաթիլը խմելու էր ամենադառն ու ամենանուստացուցիչ բաժակը⁵:

Ա՛հ, այդ օրն այլեւս չասացի՝ թէ կարող էի աւելի տառապել: Բառերն ի զօրու չեն արտայայտելու մեր տրտմութիւնը, այս իսկ պատճառով՝ այն չեմ ջանայ նկարագրել: Մի օր, Երկնքում, սիրով կը խօսենք մեր փառահեղ փորձերի շուրջ, մի՞թէ արդէն իսկ երջանիկ չենք՝ դրանք կրած լինելու համար: Այո՛, հայրիկի մարտիրոսութեան երեք տարիներն իմ ամենասիրելիներն են, ամենապտղառատներն

¹ Այս հերթական ճգնաժամը տեղի էր ունեցել 1888ի Նոյ. 3ին, շաբաթ օրը:

² Թերեզային էր յանձնուած այս արձանիկի խնամքը եւ նա այն զարդարում էր մեծագոյն հոգատարութեամբ:

³ Մեծ տօների օրերին եւ յատուկ ծիսական արարողութիւնների ժամանակ տուեալ թեմի Եպիսկոպոսն իրաւունք ունէր խախտելու փակարանի սահմանը եւ ներս մտնել:

⁴ Հմմտ. Ղկա 2, 35

⁵ 1889ի Փետր. 12ին Պրն. Մարթինը թողեց Լիզնոն, փոխադրուելով Քայնի "Bon-Sauveur" առողջարան:

իմ ամբողջ կեանքի. դրանք Սրբերի բոլոր յափշտակութիւնների ու յայտնութիւնների հետ անգամ չէի փոխանակի: Սիրտս անչափ երախտագիտութեամբ է լցւում, երբ խորհրդածուծ եմ այն անգին գանձի շուրջ, որը երկնային արքունիքի Հրեշտակների սուրբ նախանձն անգամ պէտք է որ շարժի:

207. Տառապելու ծարաւս լիուլի յագեցել էր, բայց վշտակրութեան հմայքը չէր նուազել ինձնում: Աւելին. հոգիս նոյնպէս քայլ առ քայլ մասնակից էր դառնում սրտիս տառապանքներին: Յամաքութիւնն էր իմ ամէնօրեայ հացը, եւ սակայն, ամէն տեսակ մխիթարութիւններից զուրկ լինելով հանդերձ, ամենաերջանիկ էակն էի, որովհետեւ բոլոր փափաքներս գոհացում էին գտել:

Ա՛հ, Մայր իմ սիրելի, քանիցս քաղցր եղաւ մեր մեծ փորձութիւնը, այո՛, որովհետեւ մեր բոլորի սրտերից միայն սիրոյ ու երախտագիտութեան հառաչանքներ դուրս եկան: Կատարելութեան արահետներում մենք այլեւս չէինք քայլում, սլանում էինք: Քայնի երկու խեղճ փոքրիկ աքսորեալները¹, դեռեւս աշխարհում լինելով հանդերձ, աշխարհինը չէին այլեւս²: Ա՛հ, ինչպիսի հրաշքներ գործեց այս փորձութիւնը սիրելի Սելինի հոգում: Այդ ժամանակաշրջանում գրած նրա նամակները համակամութիւն ու սէր են միայն ներշնչում: Եւ արդեօք ո՞վ կարող է նկարագրել մեր զրոյցները: Մեզ միմեանցից բաժանելու փոխարէն, Կարմեղոսի երկաթեայ վանդակապատը մեր հոգիներն աւելի էր զօդում իրար. նոյն մտածումներն ունէինք, նոյն իղձերը, Յիսուսի ու հոգիների հանդէպ միեւնոյն սէրը: Երբ Սելինն ու Թերեզան զրուցում էին, նրանց խօսակցութիւնների նիւթն ամբողջովին երկնային էր, երբեք նրանց երկխօսութիւններին չէին խառնուում երկրային իրողութիւններ: Ինչպէս երբեմն Բուխոնէի պատշգամում երազում էին հասնել յաւիտենութեանը, եւ այդ անվերջ երանութիւնը շուտով վայելել կարողանալու համար որպէս միակ բաժին ու ժառանգութիւն ընտրում էին այստեղ ներքեւում «տառապանքն ու մոռացումը»³:

208. Ահա այսպէս անցաւ հարսնախօսութեանս շրջանը. այն բաւական երկար տեւեց խեղճ Թերեզայի համար: Նորընծայութեանս տարուայ վերջում, մեր Մայրը պատուիրեց ինձ մտքիցս հանել ուխտադրութիւն խնդրելը, որովհետեւ Մեծաւորն անկասկած կը մերժէր խնդրանքս. պարտաւոր էի եւս ութ ամիս սպասել: Սկզբում շատ դժուար եղաւ այդպիսի վիթխարի զոհողութեան ընդունումը, բայց աստուածային լոյսը չուշացաւ, այլ շուտով ծագեց հոգուս խորքում: Այդ շրջանում, մտածական աղօթքիս նիւթն էի դարձրել հայր Սիւրէնի «Հոգեւոր Կեանքի Սկզբունքներ» գիրքը⁴: Մի օր, աղօթքի պահին հասկացայ, որ ուխտադրելու բոցավառ փափաքս մեծ անձնասիրութեան հետ էր խառնուած. քանի որ ինքս ինձ Յիսուսին էի նուիրել՝ Իրեն հաճոյք պատճառելու եւ Իր տառապանքներում Իրեն մխիթարելու համար, չպէտք է պարտադրէի Իրեն կատարել իմ կամքը, Իր կամքը կատարելու փոխարէն: Հասկացայ, որ հարսնացուն հարսանեաց հանդէսի օրը պէտք է զարդարուած լինի, մինչ ես ոչինչ էլ չէի արել այդ նպատակին հասնելու համար: Այնժամ ասացի Յիսուսին. «Ա՛հ, Աստուած իմ, այլեւս սուրբ ուխտադրութիւնս չէ, որ խնդրում եմ Քեզնից. կը սպասեմ այնքան՝ որքան Դու կը կամենաս: Միայն թէ չեմ

¹ Լէոնիան եւ Սելինը կամեցել էին բնակուել "Bon-Sauveur" առողջարանի մօտակայքում, այն է՝ "Saint Vincent de Paul" որբանոցում:

² Հմմտ. Յվհ 17, 14

³ Սրբուհին ակնարկում է Սուրբ Յովհաննէս Խաչի նշանաւոր արտայայտութեանը. «Տառապել եւ լինել արհամարհուած»:

⁴ P. SURIN S.J., *Les Fondaments de la Vie Spirituelle, tirés du livre de l'Imitation de Jésus Christ*, Paris 1732.

ուզում, որ իմ թերութիւնների պատճառով յետաձգուի Քո հետ միութիւնս: Այս իսկ պատճառով, ամենայն պարտաճանաչութեամբ առաջադրում եմ մի գոհարագարդ զգեստ պատրաստել այդ տօնի համար: Երբ այն բաւական զարդարուն կը գտնես, վստահ եմ, որ ոչ ոք չի կարողանայ արգելք հանդիսանալ Քեզ՝ իջնելու դէպի ինձ, որպէսզի ցմիշտ միանամ Քեզ, ո՛վ սիրելիդ իմ Աստուած»:

209. Վանական զգեստաւորութեանս օրից սկսած, մտքի առատ լոյսեր էի ընդունում վանական կատարելութեան շուրջ, յատկապէս՝ աղքատութեան ուխտի վերաբերեալ: Նորընծայութեանս ընթացքում գոհ էի, որովհետեւ գործածածս առարկաները գեղեցիկ էին եւ տրամադրութեանս տակ ունէի անհրաժեշտ ամէն բան: Սա «Հոգեւոր Առաջնորդս»¹ տանում էր մեծ համբերութեամբ, որովհետեւ իրեն հաճելի չէ հոգիներին ամէն բան միայն մի պահի մէջ հասկացնելը: Սովորաբար, նրանց մտքերը լուսաւորում է կամաց կամաց: Հոգեւոր կեանքիս սկզբում, գրեթէ տասներեք կամ տասնչորս տարեկան հասակում, զարմանքով էի ինքս ինձ հարցնում՝ թէ կատարելութեան ասպարէզում դեռ ի՞նչ ունէի աւելի լաւ ըմբռնելու, որովհետեւ կարծում էի՝ թէ այլեւս անհնարին էր որեւէ բան աւելի ձեռքբերելը: Շատ շուտով համոզուեցի, որ որքան աւելի ենք առաջադիմում այդ ճանապարհում, այնքան աւելի ենք մեզ նպատակից հեռու տեսնում: Այնպէս, որ այժմ այլեւս համբերութեամբ եմ դիտում տեւական անկատարութիւնս, բայց եւ որի մէջ եմ գտնում ուրախութիւնս: Վերադառնամ այն դասախօսութիւններին, որոնք տալիս էր ինձ «Հոգեւոր Առաջնորդս»: Մի երեկոյ, Հանգստեան ժամերգութիւնից յետոյ, ապարդիւն փնտռեցի լապտերս այն սեղանի վրայ, որի վրայ էին դրանք սովորաբար դրում. լուութիւն էր տիրում, անհնարին էր ձայն հանել²: Մտածեցի, որ թերեւս քոյրերից մէկը, կարծելով՝ թէ իրենն է վերցնում, վերցրել էր իմը, որի կարիքն այդ պահին շատ ունէի: Կորուստիս պատճառով տրտմելու փոխարէն, բաւական երջանիկ զգացի ինձ, հասկանալով, որ աղքատութիւնը կայանում է ոչ միայն հաճելի առարկաներից, այլ նաեւ անհրաժեշտներից զրկուելու մէջ: Այսպիսով, արտաքին խաւարի մէջ՝ լուսաւորուեցի ներքուստ: Այդ օրից ի վեր, իրական սէր փայփայեցի տգեղ ու նուազ յարմարաւէտ առարկաների հանդէպ, այնպէս՝ որ ուրախութեամբ տեսայ՝ թէ ինչպէս սենեակիցս խլեցին գեղեցիկ սափորս եւ փոխարինեցին կոպիտ ու ամբողջովին աւերակ դարձած կոժժով:

210. Բաւական ճիգեր էի գործադրում նաեւ անձս չարդարացնելու համար. սա ինձ դժուարագոյն էր թւում, յատկապէս վերակացու Մօր առաջ, որից ոչինչ չէի կամենում թաքցնել: Ահա առաջին յաղթանակս, որն այնքան էլ մեծ չէ, բայց թանկ արժեց ինձ: Պատուհանի ետեւում դրուած ծաղկամաններից մէկը կոտրուած գտնուեց, եւ մեր վերակացու Մայրը, կարծելով՝ թէ ես եմ այն վար նետել, պատուիրեց յաջորդ անգամ աւելի ուշադիր լինել: Առանց որեւէ խօսքի համբուրեցի յատակը, ապա խոստացայ աւելի զգաստ լինել ապագայում: Անբաւարար առաքինութեանս պատճառով, այդպիսի դէպքերը ծանր էին նստում վրաս եւ կարիքն էի զգում մտածելու, որ Վերջին Դատաստանի օրը ամէն բան յայտնի է դառնալու: Որովհետեւ նկատել էի մի իրողութիւն. երբ պարտականութիւնները կատարում են առանց սեփական անձը արդարացնելու, ոչ ոք չի տեսնում դրանք, մինչ ընդհակառակն՝ թերութիւններն ի յայտ են գալիս անմիջապէս:

¹ Ինչպէս թերեզյան արդէն նշել է, իր «Հոգեւոր Առաջնորդը» Յիսուս ինքն էր (տե՛ս՝ հատ. 196ի վերջին տողերը եւ հատ. 199):

² Կարմեղոսում Հանգստեան ժամերգութիւնից յետոյ մինչեւ յաջորդ օրուայ Առաւօտեան ժամերգութիւնը արգելուած է խօսել: Եթէ ինչ որ մի բան բացարձակապէս անհրաժեշտ է հաղորդել, դա կատարում է նշաններով կամ գրաւոր կերպով:

211. Բայց յատկապէս աշխատում էի գործադրել փոքրիկ առաքինութիւնները, որովհետեւ չափազանց տկար էի մեծերով զբաղուելու համար: Օրինակ, ինձ մեծագոյն հաճոյք էր պատճառում քոյրերի կողմից մոռացուած զգեստները ծալելը, ինչպէս նաեւ փոքրիկ ծառայութիւններ մատուցելը, ուժերիս ներածի չափով: Այդ չըջանում, բոցավառուեցի նաեւ մահացուցման հանդէպ սիրով եւ այդ սէրն այնքան աւելի մեծ էր, որքան արգելուած էր: Միակ փոքրագոյն մահացուցումը, որ կատարում էի այս աշխարհում եւ որ կայանում էր նստած ժամանակ չյենուելու մէջ, արգելուեց՝ կուզի գոյացումից խուսափելու պատճառով: Աւա՛ղ: Եռանդս անկասկած երկար չէր տեւի, եթէ բազում ապաշխարանքներ ինձ թոյլատրուէին: Այն ապաշխարանքները, որոնք ինձ շնորհում էին առանց իմ խնդրելու, կայանում էին անձնասիրութեանս ոտնահարման մէջ, եւ սրանք աւելի օգտակար էին հանդիսանում՝ քան մարմնաւոր ապաշխարանքները:

212. Սեղանատունը, ուր պաշտօնեայ նշանակուեցի զգեստառութիւնիցս անմիջապէս յետոյ, մէկից շատ աւելի առիթներ տուեց՝ անձնասիրութիւնս իրեն պատշաճ տեղը դնելու համար, այն է՝ ոտքերիս տակ: Ճիշտ է, որ մեծապէս միխիթարուած էի, որովհետեւ ձեր միեւնոյն պաշտօնն ունէի, Մայր իմ սիրելի, եւ կարողանում էի մօտիկից տեսնել ձեր առաքինութիւնները, բայց այս մօտեցումն իմ համար առիթ էր բազում տառապանքների. ինձ ազատ չէի զգում, ինչպէս երբեմն, ձեզ ամէն բան ասելու, պէտք է պահպանէի օրէնքը, չէի կարող հոգիս ձեր առաջ բացել, մի խօսքով՝ Կարմեղոսում էի եւ ոչ այլեւս Բուխսոնէում, հայրական յարկի տակ:

213. Այնուամենայնիւ, Ամենասուրբ Կոյան ինձ օգնում էր հոգեւոր զգեստներիս պատրաստման գործում. հազիւ դրանք պատրաստ եղան, խոչընդոտներն ինքնաբերաբար անհետացան: Գերապայծառ Եպիսկոպոսը ստորագրեց խնդրածս թոյլտուութիւնը, հասարակութիւնն ընդունեց ինձ եւ որպէս ուխտադրութեանս օր որոշուեց Սեպտ. 8ը:

Այն՝ ինչ գրեցի կարճառօտ խօսքերով, իրականում բազում էջեր կարող էր լցնել, եթէ շարադրէի մանրամասն կերպով, բայց այդ էջերը երբեք չեն կարողացուի երկրի վրայ: Շուտով, Մայր իմ սիրելի, այդ բոլորի մասին ձեր հետ կը խօսեմ մեր հայրական տանը, այն գեղեցկագոյն Երկնքում, դէպի որն են բարձրանում մեր սրտերի հառաչանքները:

Հարսանեկան զգեստս պատրաստ էր եւ հնագոյն գոհարներով զարդարուած, որոնք ինձ նուիրել էր Փեսաս, բայց դեռ արժանավայել չէր իր վեհութեանը: Կամենում էր անթիւ ու անհամար գունազեղութեամբ փայլփլող մի նոր աղամանդ նուիրել ինձ: Հայրիկի հետ կապուած տառապանքները, իրենց բոլոր վշտալի հետեւանքներով հանդերձ, հին գոհարներն էին, մինչ նորը տեսքով չափազանց փոքրիկ մի վիշտ եղաւ, որը սակայն բաւական տուայտանքներ պատճառեց հոգուս:

214. Որոշ ժամանակից ի վեր, քանի որ մեր սիրելի խեղճ հայրիկը մի քիչ աւելի լաւ էր զգում իրեն, նրան պտոյտների էին հանում անդամալոյծների համար պատրաստուած յատուկ սայլակով, ուստի նոյնիսկ մտածում էին գնացքով ճամփորդութիւն կազմակերպել մինչեւ Կարմեղոս: Բնականաբար, Սելինը իսկոյն մտածել էր, որ հարկաւոր էր ընտրել քօղարկմանս օրը: «Հայրիկին շատ չյոգնեցնելու համար, – ասում էր, – մասնակից չեմ դարձնի ամբողջ արարողութեանը, միայն վերջում կը բերեմ ու զգուշութեամբ կ'առաջնորդեմ մինչեւ վանդակապատը, որպէսզի թերեզան կարողանայ ստանալ նրա օրհնութիւնը»: Լաւ եմ ճանաչում Սելինի սիրտը:

Եւ ճիշտ է նաեւ, որ «սէրն անկարելիութեան մասին չի խորհում, որովհետեւ ամէն բան հնարաւոր եւ արտօնուած է համարում իր համար»¹: Իսկ մարդկային խոհեմութիւնը դողում է ամէն քայլափոխի եւ չի համարձակուում – այսպէս ասելու համար – ոտքը գետին դնել: Այսպիսով, մարդասէրն Աստուած, որ կամենում էր ինձ փորձել, ձեզ գործածեց որպէս հնազանդ գործիք եւ հարսանիքիս օրն իսկապէս որբ եղայ. այլեւս հայր չունէի երկրի վրայ, բայց կարող էի ամենայն վստահութեամբ դէպի Երկինք բարձրացնել հայեացքս եւ ասել լիուրի ճշմարտութեամբ. «Հայր մեր, որ Երկնքում ես ... »:

¹ Նմանութիւն Յիսուս Քրիստոսի, Գ, Ե 4

8. ՅԻՍՈՒՄ ՓՐԿՉԻ ՀԱՐՄՆԱՑՈՒՆ (1890–1896)

Քաշեր ցամաքութեան մէջ – Վանական ուխտադրութեան անամպ օրը – Քօղարկումը – Մի սրբուհու վերջին արցունքը – Համաճարակ Կարմեղոսում – Անճառելի միախորտութիւններ – Վստահութեան եւ սիրոյ արահետներում – Իրականացուած երազանքներ – Սելիմի մուտքը Կարմեղոս – Սուրբ Յովհաննէս Խաչի դպրոցում – Ողորմած Սիրոյ զոհը

215. Այդ փորձութեանս շուրջ խօսելուց առաջ, սակայն, կը պատմեմ, Մայր իմ սիրելի, օրերն այն հոգեւոր կրթութեան, որը նախորդեց վանական ուխտադրութեանս¹: Մխիթարութիւններ բերելուց շատ հեռու, ինձ այն բացարձակ ցամաքութիւն ընծայեց, կամ գրեթէ թողլքում: Ինչպէս միշտ, Յիսուս քնած էր նաւակիս մէջ: Ա՛հ, լաւ եմ տեսնում, որ հոգիները շատ հազուադէպ են Նրան թողնում խաղաղօրէն հանգստանալ իրենց սրտերում: Յիսուս այնքան յոգնած է տեւական պահանջներից ու նախաձեռնութիւններից, որ շտապում է օգտուել իրեն ընձեռածս հանգստից: Վստահ եմ, որ չի արթնանալու յաւիտենականութեան մեծ կրթութիւնիցս առաջ, բայց սա տրտմեցնելու փոխարէն՝ վիթխարի ուրախութիւն է ինձ պարգեւում:

Իրականում հեռու եմ սրբուհի լինելուց. այս միտքն ինքնըստինքեան արդէն իսկ վիշտ է: Ցամաքութեանս համար ուրախանալու փոխարէն՝ այն պէտք է սակաւ ջերմեռանդութեանս ու անբաւարար հաւատարմութեանս վերագրէի, պէտք է խորապէս վշտանայի, որովհետեւ մրափում եմ (ասա եօթ տարուց ի վեր) աղօթքներիս ու գոհաբանութիւններիս ժամանակ: Եւ սակայն, չեմ տրտմում: Մտածում եմ, որ փոքրիկ մանուկներն իրենց ծնողներին հաւասարապէս հաճելի են ե՛լ քնած, ե՛լ արթուն ժամանակ. մտածում եմ, որ վիրահատումներ կատարելու համար բժիշկները թմրեցնում են հիւանդներին: Մտածում եմ, վերջապէս, որ «Տէրը տեսնում է մեր դիւրաբեկութիւնը եւ յիշում, որ միայն հող ենք ու փոշի»²:

216. Ուխտադրութեանս հոգեւոր կրթութիւնն, ուրեմն, ինչպէս բոլոր նախորդները, մեծ ցամաքութեան մէջ անցկացրի: Եւ այնուամենայնիւ, մարդասէրն Աստուած, առանց իմ անդրադառնալու, շատ պարզ կերպով ցոյց էր տալիս իրեն հաճելի լինելու եւ ամենավսեմ առաքինութիւններն անգամ գործադրելու միջոցը: Նկատել եմ զանազան անգամներ, որ Յիսուս չի կամենում ինձ պաշարներով լիացնել, կազդուրում է ինձ վայրկեան առ վայրկեան, թարմ կերակուրներով, որոնք ինձնում գտնում եմ առանց իմանալու՝ թէ որտեղից են եկել կամ ինչպէս: Պարզապէս վստահ եմ, որ խեղճ սրտիս խորքում թաքնուած Յիսուս ինքն է, որ գործում է իմ մէջ եւ մտածել տալիս այն ամէնն, ինչ կամենում է՝ որ կատարեմ տուեալ պահին:

Ուխտադրութիւնիցս մի քանի օր առաջ, երջանկութիւնն ունեցայ ստանալու Սրբազան Քահանայապետի օրհնութիւնը. այն ձեռք էի բերել բարի եղբայր Սիմէոնի միջոցով, իմ ու հայրիկի համար: Մեծ մխիթարութիւն պատճառեց ինձ օրհնութեան այդ գիրը, որովհետեւ այդպիսով կարողացայ հատուցել հայրիկին՝ ինձ Հռոմ տանելու շնորհի փոխարէն:

217. Ուխտադրութեանս գեղեցիկ օրը վերջապէս հասաւ³, եղաւ անամպ, բայց նախորդ օրը հոգուս մէջ մի այնպիսի փոթորիկ բարձրացաւ, որի նմանը երբեք չէի

¹ Թերեզայի ուխտադրութեանը կապուած կրթութիւնը սկսուեց 1890ի Օգոստ. 29ին, ուրբաթ:

² Մղմ 102, 14

³ 1890ի Մեպտ. 8ը, երկուշաբթի:

զգացել: Մինչ այդ, մի կասկած անգամ չէի ունեցել կոչմանս շուրջ. այդ տառապանքն էլ պէտք է ունենայի: Երեկոյեան, «Ճանապարհ Խաչի» աղօթքը կատարելիս, վանական կոչումս աչքերիս առջեւ ուրուագծուեց իբրեւ երազ, պատրանք ... : Կարմեղոսի կեանքը հիացնում էր ինձ, բայց սատանան վստահութիւն էր ներշնչում՝ թէ այն իմ համար չէր, թէ խաբում էի մեծաւորներիս, քայլելով մի ճանապարհով, որին կանչուած չէի: Շրջապատող խաւարն այնքան թանձր էր, որ մի բան էի միայն տեսնում ու ըմբռնում. կոչում չունէի ... : Ա՛հ, ինչպէ՞ս նկարագրեմ հոգուս տուայտանքները: Թուում էր ինձ (մի անհետեւութիւն, որն ակնյայտ է դարձնում այդ փորձութեան սատանայածին լինելը), որ եթէ վախերս յայտնէի նորընծայութեանս Առաջնորդին, վերջինս կ'արգելէր ինձ ուխտադրել: Եւ սակայն, Աստուծոյ կամքն էի կամենում կատարել եւ աշխարհ վերադառնալ աւելի՝ քան Կարմեղոսում մնալ իմ կամքը կատարելով: Սենեակից դուրս հրաւիրեցի, հետեւաբար, նորընծայութեանս Առաջնորդին եւ ամօթահար կեցուածքով յայտնեցի նրան հոգուս վիճակը: Բարեբախտաբար, ինձնից աւելի լաւ գնահատեց իրադրութիւնը եւ ցրեց բոլոր կասկածներս: Խոնարհ քայլս նոյնպէս, որ կատարել էի, փախուստի էր մատնել սատանային, որը թերեւս կարծում էր՝ թէ չէի համարձակուի խոստովանել փորձութիւնս: Խօսելս հազիւ վերջացրի, կասկածներս անհետացան: Խոնարհութիւնս է՛լ աւելի կատարեալ դարձնելու համար, տարօրինակ փորձութիւնս յայտնեցի նաեւ մեր Մօրը, որը ժպտալով միայն գոհացաւ:

218. Սեպտ. 8ի առաւօտեան, խաղաղութեան հեղեղներով ողողուած զգացի ինձ եւ այդ խաղաղութեան մէջ, «որ գերիվեր է բոլոր զգացումներից»¹, կատարեցի իմ սուրբ ուխտերը: Յիսուսի հետ միութիւնս տեղի չունեցաւ ընդմէջ կայծակների ու շանթերի, այսինքն՝ արտակարգ շնորհների ընկերակցութեամբ, այլ աւելի՝ հանդարտ հովի գեփիւռով պատուած, որն յարեւմտան էր լեռան վրայ Եղիա մարգարէի զգացածին²: Քանի՛ քանի՛ շնորհներ խնդրեցի այդ օրը: Ինձ իրօք Թագուհի էի զգում եւ այս տխրոսս օգտագործում էի բանտարկեալներին ազատ արձակելու, բոլոր ապերախտ հպատակների համար Թագաւորի ողորմութիւնը հայցելու համար: Վերջապէս, կամենում էի ազատագրել Քաւարանի բոլոր հոգիներին, ինչպէս նաեւ դարձի բերել մեղաւորներին: Շատ աղօթեցի սիրելի Մօրս համար, չմոռացայ նաեւ թանկագին քոյրերիս, ամբողջ ընտանիքը, բայց յատկապէս աղաչանքներս դէպի Երկինք բարձրացրի հայրիկի համար, որն այնքա՛ն տառապանքներ կրեց ու սրբացաւ դրանց մէջ: Իսկ ինչ վերաբերում է ինձ, ամբողջովին Յիսուսին նուիրուեցի, որպէսզի ինձնում լիովին իրագործի իր ամենասուրբ կամքը, առանց արարածների կողմից որեւէ արգելքի հանդիպելու³:

Այդ գեղեցիկ օրն էլ անցաւ, նոյնպէս՝ ինչպէս անցնում են տխուրները, որովհետեւ ամենասուրբ օրերն անգամ իրենց յաջորդող «վաղը» ունեն. բայց առանց որեւէ տրտմութեան վարդահիւս պսակս դրի Սուրբ Կոյսի ոտքերի առաջ. զգում էի, որ ժամանակն ի վիճակի չէր երջանկութիւնս ինձնից խլելու: Ի՛նչ գմայլելի տօն. Աստուածամօր ծնունդը: Միօրեայ մանուկ Սուրբ Կոյսն էր, որ իր փոքրիկ ծաղիկն էր նուիրում Մանուկ Յիսուսին: Այդ օրն այնտեղ ամէն բան փոքր էր, բացառութեամբ այն շնորհների ու խաղաղութեան, որոնք ստացայ, բացառութեամբ այն ջինջ գոլարթութեան, որ զգացի երեկոյեան, աստղերի կայծկլտմանն ի տես եւ

¹ Փլպ 4, 7

² Հմմտ. 1Թգ 19, 12-13

³ Վանական ուխտադրութեան օրը Թերեզան կրօնի վրայ կրում էր մի թղթի կտոր, որի վրայ նամակի ձևով իր աստուածային Փեսային էր յայտնում իր սուրբ բաղձանքները, որոնցով այրում էր ու սպառում:

մտածելով, որ շատ շուտով գեղեցիկ Երկինքը կը բացուի նաեւ իմ յափշտակուած աչքերի առաջ, եւ որ միայն այնժամ կը կարողանամ անբաժանելիօրէն միաւորուել Փեսայիս, անսահման ուրախութեամբ ու յաւիտենական սրբութեամբ:

219. Նոյն ամսուայ 24ին, տեղի ունեցաւ քօղարկմանս արարողութիւնը¹. ամբողջ օրն արցունքներով քօղարկուեց: Հայրիկը ներկայ չէր եւ իր Թագուհին չկարողացաւ ստանալ նրա օրհնութիւնը: Հոգեւոր Հայրս² Կանադայում էր: Գերապայծառ Եպիսկոպոսը, որ մասնակցելու էր արարողութեանը եւ ապա ճաշելու էր մօրեղբօրս տանը, յանկարծ հիւանդացաւ ու չկարողացաւ գալ: Մի խօսքով, ամէն բան տրտմութեամբ ու դառնութեամբ օծուեց: Սակայն խաղաղութիւնը, տեւական խաղաղութիւնն էր տիրում բաժակի խորքում: Այդ օրը Յիսուս թոյլատրեց, որ չկարողանամ զսպել արցունքներս: Եւ արցունքներս չհասկացուեցին: Իրականում, է՛լ աւելի մեծ տառապանքներ էի կրել, առանց երբեւէ լալու, բայց դրանց մէջ օգնութեան էր հասնում ինձ աստուածային զօրեղ շնորհը: Իսկ ամսի 24ին Յիսուս ամէն բան իմ ուժերին թողեց եւ ապացուցեց՝ թէ դրանք որքան չնչին էին:

220. Քօղարկումիցս ութ օր անց, տեղի ունեցաւ Յովհաննայի ամուսնութիւնը³: Անհնարին է բառերով յայտնել, Մայր իմ սիրելի, թէ որքան դաստիարակիչ եղաւ իմ համար նրա օրինակը, այն խնամքների վերաբերեալ՝ որոնք հարսնացուն պարտաւոր է շուայել իր փեսային: Անձկութեամբ էի ունկնդրում այն ամէնն՝ ինչ կարող էի սովորել նրանից, որովհետեւ չէի կամենում նուազ հոգատար լինել Յիսուսի հանդէպ՝ քան Յովհաննան էր Յրանսուայի հանդէպ, որն անկասկած կատարեալ մարդ էր, բայց եւ միշտ՝ մարդ:

Չուարճացայ նաեւ մի հրաւիրատոմս շարադրելով, համեմատելու համար իրենինի հետ: Ահա այն.

«Յիսուս Մանկան եւ Սուրբ Դէմքի քոյր Թերեզայի
Հարսանեաց հանդէսի հրաւիրատոմսը.

Ամենակարողն Աստուած, Արարիչը երկնքի ու երկրի, Միապետ Տիրակալն աշխարհի. եւ փառահեղ Կոյս Մարիամը, երկնային Արքունիքի Թագուհին. մասնակցում են իրենց վսեմափայլ Որդու՝ Յիսուսի, Թագաւորների Թագաւորի եւ տէրերի Տիրոջ ամուսնութեանը օրիորդ Թերեզա Մարթինի հետ, որ ներկայիս Տիկինն է ու Իշխանուհին իր աստուածային Փեսայի կողմից իրեն նուիրուած երկու տէրութիւնների, այսինքն՝ Յիսուսի Մանկութեան ու Խաչելութեան, քանի որ իր ազնուականութեան տիտղոսներն իսկ են՝ Յիսուս Մանկան եւ Սուրբ Դէմքի:

Պարոն Լուիջի Մարթինը, Սեփականատէրն ու Ժառանգորդը Տառապանքի ու Նուաստացման կալուածքների. եւ Տիկին Մարթինը, Իշխանուհին երկնային Արքունիքի փառքի. մասնակցում են իրենց դստեր՝ Թերեզայի ամուսնութեանը Յիսուսի՝ Աստուածորդու հետ, որ Ամենասուրբ Երրորդութեան երկրորդ Անձն է եւ որ Սուրբ Հոգու միջոցով մարդացաւ եւ եղաւ Որդի Մարիամի, երկնքի Թագուհու:

¹ Քօղարկումը արտաքին մեծաշուք արարողութիւնն է, որ տեղի է ունենում ուխտադրութիւնից մի քանի օր յետոյ, մինչ այս վերջինը աւելի ներքին ու քաջուած բնոյթ ունի, քանի որ կատարւում է միայն վանական տուեալ ընտանիքի ներկայութեան, Մեծաւորուհու դիմաց:

² Հայր Փիլոնը՝ Թերեզայի հոգեւոր առաջնորդը (տե՛ս՝ հատ. 199ի [գլուխ 7] թիւ 9 ծանօթագրութիւնը):

³ Յովհաննա Գէրէնը, Թերեզայի զարմուհին, ամուսնացաւ 1890ի Հոկտ. 1ին:

Չկարողանալով հրաւիրել Ձեզ հարսանեաց օրհնութեանը, որը նրանց տրուեց Կարմեղոսի լեռան վրայ, 1890 թուականի Սեպտ. 8ին (քանի որ միայն երկնային Արքունիքն էր այնտեղ ներկայ), հրաւիրուեալ էք այժմ Հարսանեաց Տարեդարձին, որ տեղի է ունենալու Վաղը՝ Յաւիտենականութեան Օրը, որում Յիսուս, Աստուծոյ Միածին Որդին, գալու է երկնքի ամպերի վրայով, Իր Վեհութեան փառքի շողարձակմամբ, դատելու համար Ողջերին ու Ննջեցեալներին:

Քանի որ ժամը դեռեւս ճշգրտուած չէ, խնդրուեալ է պատրաստ լինել եւ հսկել»:

221. Այժմ, Մայր իմ, աշխատուեալ եմ մտաբերել՝ թէ ուրիշ ի՞նչ ունեմ աւելացնելիք մինչ այժմ պատմածներս: Ա՛հ, կարծում էի՝ թէ վերջացրել եմ, բայց դեռ ոչինչ չասացի մեր սուրբ Մայր Ձենովէֆֆային ճանաչելու հետ կապուած երջանկութեանս մասին: Դա անգին պարզեւ էր. մարդասէրն Աստուած, որն արդէն իսկ անթիւ ու անհամար շնորհներ էր հաղորդել ինձ, կամեցաւ՝ որ ապրէի ոչ թէ այնպիսի սրբուհու հետ, որին անհնարին է նմանուել, քանի որ շատ բարձր է, այլ մի սրբուհու՝ որն այդպիսին է դարձել թաքուն ու բնական առաքինութիւնների միջոցով: Շատ ու շատ անգամներ մեծագոյն միխիթարութիւններ ստացայ այդ Մօրից, յատկապէս մի կիրակի: Սովորութեանս համաձայն, գնացի փոքրիկ այցելութիւն տալու նրան, բայց երկու ուրիշ քոյրեր գտայ իր մօտ. ժպտացի եւ կամենում էի դուրս գալ, որովհետեւ չի կարելի հիւանդի մօտ լինել երեք հոգիով, բայց նա, ներշնչուած դէմքով ինձ նայելով, ասաց. «Սպասիր, աղջիկս, մի բան եմ միայն կամենում ասել: Ամէն անգամ, որ այցելում ես ինձ, հոգեւոր փոքրիկ ծաղկեփունջ ես խնդրում ինձնից: Այսօր ասա սա եմ քեզ ասում. ծառայիր Աստուծոյ խաղաղութեամբ եւ ուրախութեամբ, մի՛ մոռացիր, աղջիկս, որ ”մեր Աստուածը խաղաղութեան Աստուածն է”¹»: Պարզօրէն շնորհակալութիւն յայտնելուց յետոյ, սենեակից դուրս ելայ արցունքներ հեղելու չափ յուզուած, նաեւ համոզուած՝ որ բարին Աստուած յայտնել էր նրան հոգուս վիճակը: Այո՛, որովհետեւ այդ օրը ծայրայեղ տառապանքի մէջ էի, գրեթէ տխուր, այնպիսի խաւարով պատուած, որ այլեւս չգիտէի՝ թէ ողորմածն Աստուած սիրում էր ինձ կամ ոչ: Բայց զգացածս ուրախութիւնն ու միխիթարութիւնը, անշուշտ կուհուեմ էք, Մայր իմ սիրելի, թէ որքան մեծ էին:

Յաջորդ կիրակի, կամեցայ իմանալ՝ թէ ինչպիսի յայտնութիւն էր ստացել Մայր Ձենովէֆֆան. վստահեցրեց, որ ոչ մի յայտնութիւն էլ չէր ունեցել: Յայնժամ հիացումս է՛լ աւելի մեծ եղաւ, տեսնելով՝ թէ Յիսուս ինչպէս էր ապրում նրա մէջ եւ մղում ասելու այն՝ ինչ կամենում էր Ինքը: Ա՛հ, այդօրինակ սրբութիւնն է ինձ ամենաիրականը թւում, ամենակատարեալը, եւ ես նոյնպէս ձգտում եմ դրան, որովհետեւ գերծ է հնարաւոր ամէն տեսակի խաբկանքներից:

222. Ուխտադրութեանս օրը շատ միխիթարուեցի նաեւ իմանալով, որ Մայր Ձենովէֆֆան նոյնպէս իր ուխտադրութիւնից առաջ անցել էր նամանօրինակ փորձութեան միջով: Մեր մեծագոյն վշտերի բովում, յիշո՞ւմ էք, Մայր սիրելի, այն միխիթարութիւնները, որ գտնում էինք իր մօտ: Մայր Ձենովէֆֆայի սրտիս մէջ թողած յիշատակը շատ խնկելի է ինձ: Իր Երկինք մեկնելու օրը² իւրայատուկ կերպով յուզուած զգացի ինձ, առաջին անգամ էի մասնակցում որեւէ մէկի մահուանը, եւ այդ տեսարանն իրօք սքանչելի էր³: Սրբակեաց մահամերձի անկողնու ոտքերի մօտ էի կանգնած եւ տեսնում էի նրա բոլոր շարժումները, ամենաթեթեւներն անգամ: Թւում էր, նրա մօտ անցկացրած այդ վերջին երկու

¹ 1Կր 14, 33

² 1891ի Դեկտ. 5ին, շաբաթ:

³ Տե՛ս՝ հատ. 43:

ժամերի ընթացքում, թէ հոգիս պէտք է ջերմեռանդութեամբ լցուէր, մինչ ընդհակառակն՝ տարօրինակ անզգայութիւն էր տիրում վրաս: Միայն այն պահին, որում Մայր Զենովէֆֆան ծնւում էր Երկնքի համար, ներքին տրամադրութիւններս յանկարծ փոխուեցին, մի ակնթարթում անասելի եռանդով ու երջանկութեամբ ողողուած զգացի ինձ, կարծես Մայր Զենովէֆֆան ինձ նոյնպէս մասնակից էր դարձնում այն երանութեանը, որ վայելում էր արդէն, որովհետեւ վստահ եմ, որ նա ուղղակի Երկինք է գնացել: Մի օր, նրա երկրային կեանքի ընթացքում, ասացի. «Ա՛հ, Մայր իմ, դուք քաւարան չէք գնայ»: «Յուսով եմ», – եղաւ նրա մեղմ պատասխանը: Ա՛հ, մարդասէրն Աստուած չէր կարող ամօթով թողնել մի յոյս, որն այդքան լի էր խոնարհութեամբ: Այս են ապացուցում այն բոլոր շնորհները, որ ստացել ենք իր բարեխօսութեամբ: Իւրաքանչիւր քոյր շտապեց մի որեւէ մասունք խնդրել: Դուք գիտէք, Մայր իմ սիրելի, թէ որն է այն մասունքը, որ ես երջանկութիւնն ունեմ ստացած լինելու: Մայր Զենովէֆֆայի հոգեվարքի ժամանակ, արցունքի մի կաթիլ նկատեցի, որ աղամանդի նման փայլփլում էր նրա թարթիչների վրայ. այս աքսորի ու պանդխտութեան հովտում հեղած նրա վերջին արցունքն էր դա, եւ աչքերից վար չընկաւ, նրա փայլելը տեսայ նաեւ եկեղեցիում: Ոչ ոքի մտքով չէր անցնում հաւաքել այն: Այնժամ, նուրբ գործուածքի մի կտոր վերցնելով, համարձակուեցի մօտենալ նրան երեկոյեան, առանց որեւէ մէկից տեսնուելու, եւ որպէս մասունք վերցրի սրբուհու վերջին արցունքը: Եւ պահում եմ այն նոյն ծրարում, ուր պահում եմ նաեւ ուխտերս:

223. Ես սովորաբար կարեւորութիւն չեմ տալիս երազներին, մանաւանդ որ շատ հազուադէպ եմ որեւէ իմաստ պարունակող երազ տեսնում: Նաեւ զարմանում եմ՝ թէ ինչպէ՞ս եմ ամբողջ օրը Տիրոջ մասին մտածում, բայց երազներում Նրանով չգբաղուում: Ընդհանուր առմամբ տեսնում եմ անտառներ, ծաղիկներ, առուակներ, ծովեր. գրեթէ միշտ տեսնում եմ գեղադէմ մանուկներ, որսում եմ թիթեռնիկներ ու թռչուններ, եւ այնքան գեղեցիկ՝ որոնց նմանը իրականում երբեք չեմ տեսել: Տեսնում էք, Մայր իմ, որ եթէ երազներս բանաստեղծական նկարագիր ունեն, շատ հեռու են հոգեգմայլ յափշտակութիւն լինելուց: Եւ այնուամենայնիւ, Մայր Զենովէֆֆայի մահուան յաջորդ գիշերուայ ընթացքում մի միսթարական երազ տեսայ. ահա նա կանգնած էր կենտրոնում եւ ժառանգութիւն էր բաժանում իր միաբանակից քոյրերին, իւրաքանչիւրին տալով իրեն պատկանած իրերից մէկը: Երբ հասաւ իմ հերթը, չէի սպասում այլեւս ոչինչ, որովհետեւ չունէր այլեւս ոչինչ: Նա, սակայն, դէպի ինձ նայեց ու հոգեթափանց շեշտով երեք անգամ կրկնեց. «Քեզ, աղջիկս, սիրտս եմ թողնում»:

224. Մեր սուրբ Մօր մահից մի ամիս անց, հասարակութեան մէջ տարածուեց ջերմախտը¹. միայն ես էի ոտքի վրայ, երկու ա՛յլ քոյրերի հետ: Երբեք չեմ կարողանայ արտայայտել այն ամէնն՝ ինչ տեսայ, եւ թէ ինչ կարծիք կազմեցի երկրային կեանքի ու իր վաղանցուկ բոլոր իրողութիւնների շուրջ:

Մննդեանս տասնիններորդ տարեդարձը տօնախմբուեց մահով¹, որին յաջորդեցին երկու ուրիշ մեկնումներ աշխարհից: Այդ շրջանում միայն ես էի զբաղւում եկեղեցու աւանդատան գործերով. մայրապետը, որին օգնում էի, ծանրօրէն հիւանդ էր, եւ ես էի պատրաստում յուղարկաւորմանը հարկաւոր առարկաները, բացում դասի դռները Պատարագի համար, եւ այլն: Մարդասէրն Աստուած զօրութեան մեծագոյն շնորհներ էր հաղորդում ինձ այդ օրերին, այժմ գարմանքով եմ հարցնում ինքս ինձ՝ թէ

¹ Զերմախտի համաճարակը կարմեղոսում սկսուեց 1891ի Դեկտ. վերջերին:

ինչպէս եմ կարողացել անվախ կերպով անել այն ամէնն՝ ինչ արել եմ: Մահը տիրում էր ամէնուր, ծանր հիւանդները խնամուում էին նրանց կողմից, ովքեր դեռ կարողանում էին մի կերպ քաշքշել իրենց ոտքերը: Հագիւ էր քոյրերից մէկն իր վերջին շունչն արձակում, ստիպուած էինք լինում նրան միայնակ թողնել: Մի առաւօտ, արթնանալիս նախագգացումն ունեցայ, որ քոյր Մագդաղինէն մահացել էր: Սրահում խաւար էր, ոչ ոք դուրս չէր գալիս խուցերից, բայց վերջապէս որոշեցի մտնել քոյր Մագդաղինէի սենեակ, որի դուռը բաց էր: Տեսայ նրան, իրօք, հագնուած ու անկողնու վրայ տարածուած: Չվախեցայ: Տեսնելով, որ սենեակում մոմ չունէր, գնացի նրա համար մոմ փնտուելու, ինչպէս նաեւ վարդերի պսակ:

Այն երեկոյեան, որում մահացաւ մեր Փոխմեծաւորուհի Մայրը², մենակ էի հիւանդապահուհու հետ: Անհնարին է նկարագրել հասարակութեան այդ ժամանակաշրջանի թախծոտ հոգեվիճակը, միայն նրանք՝ որոնք ոտքի վրայ էին, կարող են մօտաւոր գաղափար կազմել դրա շուրջ: Բայց ես այդ կատարեալ թողլքման մէջ շարունակում էի գգալ, որ Աստուած հսկում էր մեր վրայ: Մահամերձներն առանց որեւէ ճիգի էին անցնում դէպի լաւագոյն կեանք, մահից անմիջապէս յետոյ նրանց դէմքերի վրայ տարածուում էին ուրախութեան ու խաղաղութեան արտայայտութիւններ: Թւում էր՝ թէ քաղցրանուշ քունի մէջ էին: Եւ այդպէս էր իրականում, որովհետեւ այս աշխարհի խաբուսիկ երեւոյթների անխնայութիւն յետոյ նրանք կրկին արթնանալու են, վայելելու համար ընտրեալներին վերապահուած յաւերժական երանութիւնները:

225. Այն ամբողջ ժամանակաշրջանում, որի ընթացքին հասարակութիւնը փորձուեց այսպիսի ծանր հիւանդութեամբ, ես անճառելի մխիթարութիւնն ունեցայ ամէնօրեայ Սուրբ Հաղորդութեան: Ա՛հ, քանիցս հոգենորոգ էր այն: Յիսուս ինձ աւելի զարդարեց իր պարզեւներով՝ քան իր միւս հաւատարիմ հարսներին, որովհետեւ թոյլատրեց, որ իր Մարմինն ու Արիւնը ընդունել կարողանայի, մինչ միւսներն ի վիճակի չէին այդ անելու: Ինչպէս նաեւ երջանկագոյն էի, եկեղեցու սրբազան իրեղէններին հպուելու եւ Յիսուսին իրենց մէջ ընդունելուն սահմանուած սպասները պատրաստելու հնարաւորութեանս համար: Գիտակցում էի, որ պարտաւոր էի շատ եռանդուն լինել եւ յաճախ էի մտաբերում սուրբ սարկաւազներից մէկին ուղղուած այս խօսքը. «Սուրբ եղէք դուք, որ հպուում էք Տիրոջ սպասներին»¹:

Չեմ կարող ասել՝ թէ յաճախ էի մխիթարուում գոհութեան աղօթքներիս ժամանակ. թերեւս ճիշտ սրանք են այն պահերը, որոնց ընթացքում մխիթարութիւններ եմ ընդունում ամենանուազ չափով: Բայց սա բնական եմ համարում, որովհետեւ ինքս ինձ Յիսուսին եմ նուիրել որպէս մէկը, որ կամենում է Նրա այցելութիւնը ստանալ ոչ թէ իր իսկ անձի մխիթարութեան, այլ մանաւանդ հաճոյք պատճառելու համար Նրան՝ ով իր Անձը նուիրում է ինձ: Հոգիս պատկերացնում եմ որպէս ընդարձակ հողատարածք եւ Սուրբ Կոյսին խնդրում եմ արտաքսել այնտեղից այն բոլոր աւերակները, որոնք արգելք են հանդիսանում նրա կատարելապէս ազատ լինելուն. ապա աղաչում եմ Երկնքի փառքին պատշաճ տաղաւար կանգնեցնել այնտեղ եւ իր իսկ արժանիքներով զարդարել այն. եւ վերջում, հրաւիրում եմ բոլոր Սրբերին ու Հրեշտակներին, որպէսզի մի սքանչելի նուագահանդէս կազմակերպեն այնտեղ: Թւում է ինձ, որ երբ Յիսուս իջնում է սրտիս մէջ, գոհ է մնում, ընդունելութիւնն այսքան լաւ պատրաստած լինելուս համար: Ես նոյնպէս գոհ եմ այս ամէնից: Սա, սակայն, չի խանգարում, որպէսզի

¹ 1892ի Յունուարի 2ին մահացաւ վանքի կարգերէց մայրապետը:

² 1892ի Յունուարի 4ին:

ցրուածութիւնն ու թմրութիւնը այցելեն ինձ: Բայց, վերջացնելով գոհութիւնս եւ տեսնելով թէ որքան վատորակ էր աղօթքս, առաջադրում եմ օրուայ մնացած մասն ապրել շնորհակալութեան աղօթքներով:

226. Տեսնում էք, Մայր սիրելի, որ բաւական հեռու եմ սարսափներով լի արահետներով առաջնորդուած լինելուց. հնարամտութիւնս շարունակ կարողանում է գտնել երջանիկ լինելու եւ խեղճութիւններս անգամ ի շահ իմ օգտագործելու միջոցը: Սա իրականում տհաճ չէ Յիսուսին, որովհետեւ թւում է՝ թէ քաջալերում է ինձ այս ճանապարհի վրայ: Մի օր, սովորութեանս հակառակ, մի քիչ խռովուած էի Պատարագի ընթացքում, մտքումս միայն մի բան էր պտտւում. «Աստուած գոհ չէ ինձնից», եւ հետեւեալ խօսքերն էի ուղղում ինքս ինձ. «Եթէ այսօր էլ նշխարի կէսը միայն ստանամ, կը վշտանամ, որովհետեւ այդպիսով կ'ապացուցուի, որ Յիսուս գրեթէ դժկամութեամբ է սիրտս գալիս»: Մօտեցայ ... ա՛հ երջանկութիւն: Առաջին անգամ լինելով կեանքիս ընթացքում, քահանան ամբողջական երկու նշխար տուեց ինձ: Կարծում եմ թէ հասկանում էք ուրախութիւնս եւ այն քաղցր արցունքները, որ հեղեցի այդքան մեծ ողորմութեանն ի տես:

227. Ուխտադրութեանս յաջորդող տարուայ ընթացքում, Մայր Զենովէֆֆայի մահից երկու ամիս առաջ, մեծ շնորհներ ստացայ հոգեւոր կրթութեան ժամանակ²: Քարոզուող կրթութիւններն իմ համար սովորաբար աւելի ցաւ պատճառող են, քան նրանք՝ որ կատարում եմ մենակ, սենեակում փակուած: Բայց այս անգամ ա՛յլ կերպ եղաւ: Նախապատրաստական իննօրեայ էի կատարել մեծ ջերմեռանդութեամբ, որ բաւական զարմանալի է, եթէ ի նկատի առնենք ներքին այն հողմակոծ վիճակը, որում գտնուում էի այդ շրջանում, որովհետեւ գրեթէ համոզուած էի, որ քարոզիչը չէր հասկանալու ինձ, քանի որ սահմանուած էր թւում աւելի մեծ մեղաւորներին բարեգործելու՝ քան միանձնուհիւների հոգիներին: Բարին Աստուած, սակայն, կամենալով փաստել, որ միայն ու միայն ինքն է իմ հոգու առաջնորդը, ճիշտ այդ վարդապետին գործածեց, որն արժանի գնահատանք ստացաւ միայն ինձնից: Այդ օրերին, ամէն տեսակ ահաւոր ներքին տառապանքների էի ենթարկւում (մինչեւ իսկ այն աստիճան, որ երբեմն հարցնում էի ինքս ինձ՝ թէ գոյութիւն ունե՞ր արդեօք յաւիտենական կեանքը): Ինձ աւելի տրամադիր էի զգում չիօսելու ներքին անցուդարձերիս շուրջ, որովհետեւ չգիտէի՝ թէ ինչպէս կարող էի դրանք արտայայտել, բայց հագիւ մտայ խոստովանարան, զգացի՝ թէ ինչպէս հոգիս ընդարձակուեց: Մի քանի սակաւաթիւ խօսքերից յետոյ, հասկացուեցի զարմանահարաչ կերպով, եւ նոյնիսկ գուշակուեցի: Հոգիս կարծես գիրք էր, որ Վարդապետն ընթերցում էր աւելի լաւ՝ քան ես ինքս: Նաւակս փքուած առագաստներով վարեց վստահութեան ու սիրոյ ալիքների վրայով, որոնք այո՛՛ ճգում էին ինձ ուժգին կերպով, բայց որոնց վրայով այլեւս չէի համարձակւում յառաջանալ: Վստահեցրեց, որ թերութիւններս չէին վշտացնում Տիրոջը, եւ վերջում նաեւ աւելացրեց, որպէս Իր ներկայացուցիչ եւ յանուն Իր, որ Աստուած շատ գոհ էր ինձնից:

228. Ա՛հ, որքան երջանիկ զգացի ինձ այդ միսիթարիչ խօսքերին ի լուր: Երբեք չէի լսել, որ թերութիւնները կարող են նաեւ չվշտացնել Տիրոջը: Այդ վստահացումն ինձ երանութեամբ լցրեց, օգնեց համբերութեամբ կրելու այս կեանքի աքսորը: Սրտիս խորքում զգում էի, որ ճիշտ էր, որովհետեւ Աստուած աւելի գորովագութ է՝

¹ Հմմտ. Ես 52, 11

² Այս հոգեւոր կրթութիւնը, որ աւանդւում էր հայր Ալէքսի Փոռու Փրանչիսկեան վարդապետի կողմից, տեւեց Հոկտ. 8ից մինչեւ 15ը:

քան որեւիցէ մայր երկրի վրայ: Օրինակ դուք, Մայր սիրելի, միշտ պատրաստ չէ՞ք ներելու այն փոքր անփափկանկատութիւններս, որ ձեր հանդէպ գործում եմ ակամայ կերպով: Այս վերջինի փորձառութիւնը բազում անգամներ եմ ունեցել: Ոչ մի յանդիմանութիւն ինձ չէր նախատի այնքան՝ որքան ձեր քնքշանքներից միայն մէկը: Այնպիսի բնաւորութիւն ունեմ, որին վախը յուսահատութեան է առաջնորդում, մինչդեռ սիրոյ օգնութեամբ ո՛չ միայն քայլում եմ, այլ աւելին՝ սաւառնում:

Ա՛հ, Մայր իմ, յատկապէս ձեր ընտրութեան օրից ի վեր էր¹, որ սաւառնել սկսեցի սիրոյ երկնակամարի ներքոյ: Այդ օրը Փօլինը դարձաւ իմ առջեւ ապրող Յիսուսը ... նա երկրորդ անգամ դարձաւ մայրիկ ... :

229. Գրեթէ երեք տարի է՝ ինչ երջանկութիւնն ունեմ տեսնելու այն սքանչելիքները, որոնք Յիսուս գործում է իմ սիրելի Մօր միջոցով: Հասկանում եմ այլեւս, որ միայն տառապանքը կարող է հոգիներ ծնել, եւ առաւել քան երբեք՝ Յիսուսի խօսքերն առջեւ քողազերծում են իրենց ամբողջ խորութիւնը. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. եթէ ցորենի հատիկը հողի մէջ ընկնելով չմեռնի, ինքը միայն կը մնայ. իսկ եթէ մեռնի, բազում արդիւնք կը տայ»²: Ինչպիսի առատ հունձք, ուրեմն, պէտք է հաւաքած լինէք դուք: Սերմանեցիք ընդմէջ արցունքների, բայց շուտով տեսնելու էք ձեր յոգնութիւնների արդիւնքը, վերադառնալու էք ուրախութեամբ լի, հասկերի որաներ ձեր գրկում պահած³: Ա՛հ, Մայր իմ սիրելի, այդ որաների մէջ սպիտակ փոքրիկ ծաղիկն այժմ թաքնում է, բայց Երկնքում նա մի ձայն է ունենալու, որով երգելու է այն հեզութիւնն ու առաքինութիւնները, որ գործադրում էք օրէցօր այս աքսորի ստուերների ու լուծեան մէջ:

Այո՛, արդէն երեք տարի է, ինչ սկսել եմ հասկանալ շատ ու շատ խորհուրդներ, որոնք մինչ այժմ ծածկուած էին տեսողութեանս առաջ: Մարդասէրն Աստուած իմ հետ վարուեց այն նոյն ողորմութեամբ, որն ունէր Սողոմոն արքայի հանդէպ: Հաճելի եղաւ Նրան անվճար չթողնել փափաքներիցս եւ ոչ իսկ մէկը. ոչ միայն նրանք, որոնք վերաբերում էին կատարելութեանը, այլ նաեւ նրանք՝ որոնց ունայնութիւնն ըմբռնում էի առանց նրանց փորձառութիւնն ունենալու անգամ:

230. Ձեզ, Մայր իմ սիրելի, իմ համար միշտ որպէս գաղափարական նկատելով, ձգտում էի նմանուել ձեզ ամէն ինչում: Տեսնելով, որ շնորհալի պատկերներ էիք նկարում եւ գեղահիւս բանաստեղծութիւններ յօրինում, ասում էի. «Որքան երջանիկ կը լինէի, եթէ ես նոյնպէս կարողանայի գծագրել, եթէ ես նոյնպէս ունակ լինէի մտքերս յանգերով արտայայտելու եւ այդպիսով հոգիներին բարեգործելու»: Բայց եւ այնպէս, խոսափում էի գործադրել այդ բնական ձիրքերս եւ իղձերս թաքնուած էին մնում սրտիս խորքում: Սակայն Յիսուսին օգտակար թուաց (որը նոյնպէս թաքնուած է այս խեղճուկրակ սրտի ներսում) ցոյց տալ՝ թէ ինչպէս ամէն բան ունայնութիւն է եւ հոգու տառապանք այս երկրի վրայ¹: Ի մեծ զարմացումն քոյրերի, նկարելու հրաման ստացայ եւ բարին Աստուած թոյլատրեց, որ մեծապէս օգտուէի սիրելի Մօրս կողմից ինձ տրուող դասախօսութիւններից:

Կամեցաւ նաեւ, որ յաջողութեամբ կարողանայի ոտանաւորներ շարագրել – ըստ ձեր օրինակի – որոնք քոյրերը բաւական հաճելի էին գտնում: Բայց ինչպէս Սողոմոնը, դիտելով իր ձեռքերի բոլոր գործերը՝ որոնց համար աշխատել էր ապարդիւն կերպով, տեսաւ՝ որ ամէն բան ունայնութիւն էր ու հոգու տառապանք,

¹ Քոյր Ագնէս Յիսուսին վանքի մեծաւորուհի ընտրուեց 1893ի Փետր. 20ին, երկուշաբթի:

² Յվհ 12, 24-25

³ Հմմտ. Սղմ 125, 5-6

այնպէս էլ ես փորձառութեամբ համոզուեցի, որ երջանկութիւնը միմիայն թաքնուելու մէջ է կայանում, ինչպէս նաեւ՝ ստեղծուած բաների անգիտացման մէջ: Հասկացայ, որ առանց սիրոյ՝ բոլոր գործերն էլ ոչինչ են, ներառեալ ամենավեհ գործերը, ինչպիսիք են մեռելներին յարութիւն տալն ու ժողովուրդներին քրիստոնեայ դարձնելը:

Հոգուս վրայ վատ ազդեցութիւն թողնելու եւ մտքերս ունայնութեան մէջ հաստատելու փոխարէն, պարզեւները՝ որ մարդասէրն Աստուած շոյալեց ինձ առանց իմ դրանք խնդրելու, աւելի մղեցին ինձ դէպի Ինքը: Տեսնում եմ, որ միայն Ինքն է անփոփոխ, որ միայն Ինքը կարող է գոհացում տալ վիթխարի փափաքներին:

231. Կան նաեւ ուրիշ տեսակի իղձեր, որոնք Յիսուս կամեցաւ բաւարարել մանկական փափաքներս, նման՝ քողարկմանս օրուայ ձեան նուէրին:

Գիտէք, Մայր սիրելի, թէ որքան եմ ծաղիկներ սիրում: Տասնհինգամեայ հասակում կամովին բանտարկուելով, մէկընդմիջտ հրաժարուեցի գարնան գոյնզգոյն գանձերով գեղազարդուած դաշտերի միջով քայլելուց: Բայց երբեք աւելի շատ ծաղիկներ չունեցայ՝ քան Կարմեղոսում: Սովորութիւն է, որ նշանածն իր հարսնացուին յաճախակի ծաղկեփնջեր նուիրի: Յիսուս չմոռացաւ սա, ուղարկեց ինձ փնջեր մեծամեծ. շուշաններ, մարգարտածաղիկներ, կակաչներ, մի խօսքով՝ ինձ հաճելի բոլոր ծաղիկներից: Վերջապէս մի փոքրիկ ծաղիկ, որը սոնիճ էր կոչում եւ որը չէի տեսել, ինչ տեղափոխուել էինք Լիզէոյ: Շա՛տ էի կամենում կրկին տեսնել մանկութեանս օրերի այդ ծաղիկը, որը միշտ հաւաքում էի Ալանսոնի դաշտերում: Եւ ճիշտ Կարմեղոսում գտայ այն. ինչը ցոյց տուեց, որ ինչպէս մեծ՝ այնպէս էլ փոքրիկ բաներում, ողորմածն Աստուած հարկւրապատիկն է հատուցում այն հոգիներին, որոնք յանուն Իր սիրոյ՝ հրաժարում են ամէն ինչից²:

232. Բայց իղձերիցս ամենամեծն ու ամենահոգեհարազատը, որը չէի հաւատում թէ կարող էր իրականանալ, Սելինի մուտքն էր մեր իսկ Կարմեղոս: Այս երազանքս ինձ անհաւանական էր թւում. ապրել միեւնոյն յարկի ներքոյ, ուրախութիւններ ու վշտեր կիսել մանկութեանս ընկերուհու հետ: Այսպիսով, ամբողջական էի դարձրել գոհաբերումս, Յիսուսին էի յանձնել սիրելի քրոջս ապագան, ինչպէս նաեւ առաջադրել էի խաղաղութեամբ ընդունել նրա մեկնումը հեռաւոր երկրներ, եթէ անհրաժեշտ լինէր նաեւ դա: Միակ բանը, որ չէի կարողանում ընդունել, այն էր՝ որ նա Յիսուսի հարսը չլինէր, որովհետեւ սիրում էի նրան որքան ինքս ինձ եւ իմ համար անկարելի էր տեսնել նրան, որ իր սիրտը մի մահկանացուի տար: Արդէն իսկ բաւական տառապում էի նրան աշխարհում տեսնելով, ուր ենթակայ էր բազում վտանգների, վտանգներ՝ որոնք ինձ անծանօթ էին: Կարող եմ ասել, որ Կարմեղոս մտնելուցս յետոյ, Սելինի հանդէպ ունեցածս հակումը աւելի մօր սէր էր՝ քան քրոջ:

Մի օր նա պէտք է երեկոյթի մասնակցէր, իսկ սա ինձ այնպիսի վիշտ էր պատճառում, որ Տիրոջը պաղատում էի չթոյլատրել նրան պարել: Մինչեւ իսկ, սովորութեանս հակառակ, հեղեղանման արցունքներ թափեցի: Յիսուս կամեցաւ գոհացնել ինձ: Չթոյլատրեց, որ Իր փոքրիկ հարսը կարողանար պարել այդ երեկոյեան (թէեւ Սելինը չէր շփոթւում եւ, երբ հարկաւոր էր լինում, շնորհալի կերպով պարում էր): Հրաւիրուած լինելով պարելու, առանց մերժել կարողանալու, իր ասպետն էր պարելու ամբողջական անկարողութեան մատնուել: Մեծ ամօթով դատապարտուել էր պարզապէս քայլելու, իր տեղը առաջնորդելով Սելինին: Ապա խոյս էր տուել եւ այլեւս չէր երեւցել ամբողջ երեկոյթի ընթացքում: Այս

¹ Ժող 2, 11

² Հմմտ. Մտթ 19, 29

պատահարը, որ եզակի է իր տեսակի մէջ, ինձ անել տուեց վստահութեան եւ սիրոյ մէջ Նրա՝ ով իր նշանը ճակատիս վրայ դնելով, միաժամանակ դրոշմել էր նաեւ իմ սիրելի Սելինի ճակատին:

233. Անցեալ տարուայ Յուլիսի 29ին, մարդասէրն Աստուած, խզելով շղթաներն իր անհամեմատելիօրէն հաւատարիմ ծառայի¹, կանչեց նրան ժառանգելու յաւիտենական վարձատրութիւնը, եւ միեւնոյն ժամանակ արձակեց նաեւ այն կապը, որը տակաւին աշխարհում էր պահում իր հարսնացուին: Վերջինս արդէն կատարել էր իր առաջին առաքելութիւնը: Ստանձնած լինելով մեզ բոլորիս ներկայացնել մեր այնքա՛ն սիրելի հօր մօտ, առաջադրանքն ի կատար էր ածել հրեշտակի նման, իսկ հրեշտակները չեն մնում երկրի վրայ, այլ երբ գործադրում վերջացնում են Աստուծոյ կամքը, իսկոյն վերադառնում են իր մօտ, եւ ճիշտ սրա համար է՝ որ թեւեր ունեն: Մեր հրեշտակը նոյնպէս տարածել էր իր սպիտակ թեւերը, Յիսուսին գտնելու համար պատրաստ էր թռչելու հեռո՛ւ հեռո՛ւ, բայց Յիսուս շատ մօտ տեղ թռչել տուեց նրան: Գոհացաւ մեր կողմից մի մեծ գոհի համակամ ընդունմամբ, որը բաւական ցաւալի էր եղել փոքրիկ Թերեզայի համար: Այսինքն, երկու տարիների ընթացքում, իր Սելինը թաքցրել էր մի գաղտնիք²: Ա՛հ, նա նոյնպէս շատ էր տառապել: Բայց վերջիվերջոյ, իմ սիրելի Թագաւորը, որին հաճելի չեն երկրային քաջքշուկները, երկնային բարձունքներից շտապեց կարգաւորել իր Սելինի խճճուած գործերը, եւ Սեպտ. 14ին նա կարողացաւ միանալ մեզ:

234. Մի օր, մինչ դժուարութիւններն այլեւս անյաղթահարելի էին թւում, աղօթքի պահին ասացի Յիսուսին. «Գիտես, Աստուած իմ, որքան եմ կամենում իմանալ՝ թէ հայրիկն ուղղակի Երկինք է եկել կամ ոչ: Չեմ խնդրում յայտնել ինձ խօսքերով, բայց մի նշան տուր ինձ: Եթէ քոյր Ա. Յ.ն³ համաձայնուի Սելինի Կարմեղոս մտնելուն, կամ գէթ խոչընդոտներ չյարուցանի, սա կը նշանակի՝ որ հայրիկն ուղղակի Քո մօտ է եկել»: Այդ մայրապետը, գիտէք, Մայր իմ, գտնում էր՝ թէ արդէն իսկ շատ էինք մենք երեքս եւ, հետեւաբար, չէր կամենում թոյլատրել չորրորդի մուտքը: Բայց Աստուած, որ իր բռունցքում է պահում արարածների սրտերը եւ ղեկավարում դրանք ըստ իր կամքի, շուտով փոխեց այդ կրօնաւորուհու դիրքորոշումը: Ճիշտ նա եղաւ այն առաջին անձը, որին հանդիպեցի աղօթքիցս յետոյ: Կանչեց ինձ սիրալի շեշտով, խնդրեց բարձրանալ իր մօտ եւ արտասուալի աչքերով խօսեց Սելինի մասին:

Ա՛հ, քանի՛ քանի՛ պատճառներ ունեմ Յիսուսին փառաբանելու, որ կամեցաւ գոհացնել բոլոր բաղձանքներս:

235. Այժմ միայն մի փափաք ունեմ. սիրել Յիսուսին խենթի նման: Մանկական իղձերս անհետացել են: Անշուշտ, դեռ սիրում եմ ծաղիկներով զարդարել Յիսուս Մանկան խորանը, բայց այն բանից յետոյ՝ ինչ ինձ տուեց անձկութեամբ փափաքուած ծաղիկը, իմ թանկագին Սելինը, չեմ ցանկանում ուրիշ ոչ մի ծաղիկ: Նրա՛ն եմ նուիրում Իրեն իբրեւ ծաղկեփունջն իմ ամենադիւթիչ:

Չեմ տենչում այլեւս ո՛չ տառապել, եւ ո՛չ իսկ մեռնել, թէեւ հմայում են ինձ երկուսն էլ, այլ միայն սէրն է՝ որ ձգում է ինձ: Երկա՛ր ժամանակ փնտուցի դրանք. տառապեցի եւ կարծում էի՝ թէ հասել եմ Երկնքի խաղաղ նաւահանգիստ, կարծում

¹ Պրն. Մարթինը մահացաւ 1894ի Յուլ. 29ին, Musse գիւղաքաղաքում (Eure):

² Թերեզան ակնարկում է Կանադայում առաքելական գործունէութիւն ծաւալելուն, որը Սելինին առաջարկուել էր հայր Փիլիպի կողմից:

³ Քոյր Ամատա Յիսուսի:

էի՝ թէ փոքրիկ ծաղիկը քաղուելու է իր դարունը միայն ապրած: Այժմ Աստծոյ ձեռքերի մէջ սեփական անձի վստահասիրտ յանձնումն է միայն առաջնորդում ինձ, չունեմ ա՛յլ կողմնացոյց: Չեմ կարողանում այլեւս ջերմեռանդութեամբ խնդրել ոչինչ, եթէ ոչ միայն անձիս մէջ Տիրոջ կամքի կատարեալ կատարումը, առանց որ արարածները կարողանան խոչընդոտել դրան: Կարող եմ կրկնել մեր սուրբ հայր Յովհաննէս Խաչի հոգեւոր գովերգի այս խօսքերը. «Իմ սիրելիի գինու շտեմարանում արբեցի, եւ երբ դուրս եկայ, այս ամբողջ հարթավայրում չէի ճանաչում այլեւս ոչինչ, կորցրել էի նաեւ այն հօտը, որին նախապէս հետեւում էի: Հոգիս իր ամբողջ կարողութեամբ ի սպաս դրեց իրեն Նրա ծառայութեանը. չունեմ հօտ, չունեմ ա՛յլ պարտականութիւններ, որովհետեւ այժմ իմ միակ առաջադրանքը սիրելն է»¹: Եւ կամ այս միւսը. «Այն օրից ի վեր՝ ինչ ճաշակեցի իրեն, Սէրն այնքան հզօր է իր գործերում, որ շահի է վերածում ամէն բան, ե՛ւ բարին, ե՛ւ չարը, որ գտնում է ինձնում, գոյափոխելով հոգիս իրեն»²: Ա՛հ, Մայր իմ, քանիցս քաղցր է սիրոյ ուղին: Անկասկած, հնարաւոր են անկումները, անհաւատարմութիւնները, բայց Սէրը, կարողանալով շահի վերածել ամէն բան, անէացնում է իսկոյն այն՝ ինչ կարող է տհաճ լինել Յիսուսին, հոգու խորքում խոնարհ ու հաստատուն խաղաղութիւն միայն թողնելով:

236. Քանի՛ քանի՛ խորհուրդների լուսաբանումներ գտայ մեր սուրբ հայր Յովհաննէս Խաչի գործերում: Տասնեօթ ու տասնութ տարեկան հասակում չունէի հոգեւոր ուրիշ սնունդ, բոլոր գրքերը ցամաքութեան մէջ էին գցում ինձ, եւ այժմ նոյնպէս, այո՛, նոյն վիճակում եմ: Եթէ բացում եմ հոգեւոր հեղինակների կողմից գրուած գրքերը (նոյնիսկ ամենագեղեցիկները, ամենայուզիչները), իսկոյն զգում եմ, որ սիրտս սեղմւում է եւ կարդում եմ գրեթէ առանց հասկանալու, իսկ եթէ հասկանում եմ, հոգիս կանգ է առնում առանց խորհրդածել կարողանալու:

Այս լիակատար տկարութեանս մէջ, օգնութեան են հասնում ինձ Աստուածաշունչն ու Նմանութեան գիրքը: Նրանցում եմ գտնում կազդուրիչ ու ամբիժ սնունդս: Բայց յատկապէս Աւետարանն է գրաւում ինձ աղօթքներիս պահին, նրանում եմ գտնում խեղճ հոգու կարիքների բաւարարումը: Բացայայտում եմ նրանում միշտ նորանոր պարզաբանումներ, նորանոր իմաստներ թաքուն ու գաղտնածածուկ խորհուրդների:

Լաւ եմ հասկանում եւ գիտեմ փորձառութեամբ, որ «Աստծոյ Արքայութիւնը մեր մէջ է»³: Յիսուս, հոգիներին կրթելու համար, կարիք չունի ո՛չ գրքերի, ո՛չ էլ ուսուցիչների: Նա, ուսուցիչների Ուսուցիչը, սովորեցնում է առանց խօսքերի ժխորի⁴: Երբեք չեմ լսել Նրա ձայնը, բայց զգում եմ, որ իմ մէջ է, ամէն վայրկեան, եւ առաջնորդում է ինձ, նաեւ ներշնչում այն՝ ինչ պարտաւոր եմ ասել կամ անել: Բացայայտում եմ (ճիշտ այն պահին, երբ դրանց կարիքն ունեմ) իմաստներ, որոնք մինչ այդ չէի ըմբռնել, եւ յաճախ աղօթքի պահին չէ՝ որ դրանք առատօրէն հոսում են սրտիս մէջ, այլ աւելի՛ աւօրեայ գործերի ընթացքում:

237. Մայր սիրելի, այսքան շնորհներից յետոյ մի՞թէ չեմ կարող բացականչել սաղմոսերգուի հետ. «Աստուած բարի է, յաւիտեան է Նրա ողորմութիւնը»⁵: Թւում է ինձ, որ եթէ բոլոր մարդիկ ընդունէին այն նոյն շնորհները, որ ստացել եմ ես,

¹ SAN GIOVANNI DELLA CROCE, *Cantico Spirituale*, str. 26-28.

² SAN GIOVANNI DELLA CROCE, *Poesie*, Chiosa sul divino, 8.

³ Հմմտ. Ղկա 17, 21

⁴ Նմանութիւն Յիսուս Քրիստոսի, Գ, ԽԳ 3

⁵ Հմմտ. Սղմ 117, 1

նրանցից ոչ ոք չէր սարսափի Տիրոջից, այլ բոլորն էլ կը սիրէին Նրան խենթի նման եւ բոլորն էլ կը խուսափէին Նրան վշտացնելուց, յանուն սիրոյ, եւ ո՛չ թէ սարսափի ազդեցութեամբ: Եւ սակայն հասկանում եմ, որ բոլոր հոգիները չեն կարող նմանուել միմեանց, պէտք է որ գոյութիւն ունենան տարբեր խմբեր, իւրօրինակ կերպով մեծարելու համար Աստուծոյ ստորագելիներից իւրաքանչիւրը¹: Ինձ Նա տուեց Իր անսահմանօրէն մեծ ողորմութիւնը, որի միջով եմ դիտում ու պաշտում Նրա միւս յատկութիւնները: Այսպիսով, դրանք բոլորն էլ իմ առաջ ուրուագծւում են որպէս շողարձակներ սիրոյ. արդարութիւնն անգամ (եւ թերեւս աւելի՛ քան միւսները) թւում է սիրով պատուած: Ինչպիսի բերկրանք է մտածելը, որ մարդասէրն Աստուած արդար է, այսինքն՝ որ հաշուի է առնում մեր տկարութիւնները, որ լիովին ճանաչում է մեր մարդկային բնութեան դիւրաբեկութիւնը: Ինչի՞ց, ուրեմն, պիտի սարսափեմ: Ա՛հ, անչափօրէն արդարն Աստուած, որ այնքա՛ն բարութեամբ ներեց անառակ որդու յանցանքները, արդար չի՞ գտնուի նաեւ իմ հանդէպ, իմ՝ որ «միշտ Իր հետ եմ»²:

238. Այս տարի, Յունիսի 9ին, Ամենասուրբ Երրորդութեան տօնի օրը, շնորհուեց ինձ հասկանալ առաւել քան երբեք, թէ Յիսուս որքան է կամենում սիրուել³:

Մտածում էի այն հոգիների մասին, որոնք իբրեւ զոհ էին նուիրում Աստուծոյ արդարութեանը, նպատակ ունենալով իրենց վրայ հրաւիրել եւ ընդունել մեղաւորներին վերապահուած պատիժները: Այս նուիրումը գտնում էի մեծ ու վեհանձն, բայց ինձ բաւական հեռու էի զգում այդ անձանց հետեւելուց: «Ա՛հ, Աստուած իմ, – ասացի սրտիս խորքից, – մի՞թէ արդարութիւնդ միայն պիտի ընդունի իբրեւ զոհ նուիրող հոգիներ: Ողորմած Սէրդ մի՞թէ դրանց կարիքը չունի: Ամէն կողմից մոռացուած է ու մերժուած. սրտերը, որոնց կամենում ես շուայլել այն, չըջւում են դէպի արարածները, նրանցից երջանկութիւն մուրալով, իրենց խղճուկ ողորմելի կրքերով, փոխանակ բազուկներիդ մէջ նետուելու ու ընդունելու անսահմանօրէն մեծ սէրդ: Ա՛հ, Աստուած իմ, մի՞թէ սէրդ, որ այսքան թերագնահատուած է մարդկանց կողմից, մնալու է Սրտիդ մէջ արգելափակուած: Ինձ այնպէս է թւում, որ եթէ գտնէիր հոգիներ, որոնք որպէս ողջակէզ նուիրուէին սիրոյդ, նրանց կ'այրէիր ու կը սպառէիր ակնթարթային արագութեամբ. թւում է ինձ, որ երջանիկ կը լինէիր սանձարձակելով վիհերն այն անսահման գորովի, որ կուտակուած է Քեզնում, իր ակունքի մէջ: Եթէ արդարութեանդ հաճելի է լիցքաթափումը, նրան՝ որ տարածւում է միայն երկրի վրայ, ուրեմն որքա՛ն աւելի ողորմած սէրդ է կամենում հրդեհել հոգիներին, քանի որ ողորմութիւնդ հասնում է մինչեւ երկինք⁴: Ա՛հ, Յիսուս իմ, թող ե՛ս լինեմ այդ երջանիկ զոհը, սպառիր ինձ աստուածային սիրոյդ կրակով»:

Մայր իմ սիրելի, դուք՝ որ արտօնեցիք ինձ այսպէս նուիրուել մարդասէր Աստուծուն, գիտէք՝ թէ շնորհի ինչպիսի գետեր, կամ աւելի ճիշտ՝ օվկիանոսներ ողողեցին հոգիս: Ա՛հ, այդ երջանիկ օրից ի վեր թւում է ինձ՝ թէ սէրը ներթափանցում է ամբողջ հոլութեամբս մէկ եւ պատում է ինձ, վերանորոգում ու մաքրագործում հոգիս, չթողնելով մեղքի որեւէ փոքրիկ հետք անգամ, այնպէս՝ որ

¹ Աստուծոյ ստորագելիներ աւելով հասկանում ենք Նրա արդարութիւնը, ողորմածութիւնը, անսահմանութիւնը, բարութիւնը, ամենակարողութիւնը, իմաստութիւնը, պարզութիւնը, կատարեալ ազատութիւնը, ճշմարտութիւնը, սրբութիւնը, յաւիտենականութիւնը՝ անսկիզբ եւ անվերջ լինելը. մի խօսքով, գոյութիւն ունեցող դրական բոլոր յատկանիշները:

² Տե՛ս՝ Ղկս 15, 11-32

³ 1895ի Յունիսի 9ին Թերեզան իրեն որպէս անմնացորդ զոհ է նուիրում Աստուծոյ ողորմած Սիրոյն: Թերեզայի կողմից շարադրուած նուիրման աղօթք-բանաձեւը տե՛ս՝ Յաւելուած Ա.:

⁴ Սղմ 35, 6

չեմ սարսափում քաւարանից: Քաջ գիտեմ, որ իմ ուժերով չէի կարող արժանանալ այդ քաւութեան վայրը մտնելուն անգամ, քանի որ արդար հոգիները միայն կարող են մուտք գործել այնտեղ: Բայց նաեւ գիտեմ, որ Սիրոյ կրակն աւելի սրբագործող է՝ քան քաւարանի կրակը: գիտեմ, որ Յիսուս մեր համար չի կամենում ու չի պատրաստում անօգուտ տառապանքներ, ինչպէս նաեւ՝ որ չէր ներշնչի ինձ փափաքներ, որոնք զգում եմ, եթէ չկամենար գոհացնել դրանք:

Ա՛հ, քանիցս քաղցր է սիրոյ ուղին: Որքա՛ն եմ կամենում նուիրուել՝ կատարելու միշտ, Աստուծոյ ձեռքերի մէջ սեփական անձի հնարաւոր ամենամեծ յանձնումով, Տիրոջ կամքը¹:

239. Ահա, Մայր իմ, այն ամէնը, որ կարող եմ պատմել ձեզ ձեր փոքրիկ Թերեզայի կեանքի վերաբերեալ: Դուք ինքներդ ինձնից շատ աւելի լաւ էք ճանաչում ինձ եւ այն՝ ինչ Յիսուս արեց իմ համար: Հետեւաբար յուսով եմ՝ թէ կը ներէք ինձ, կեանքիս վանական շրջանի պատմութեան կրճատման համար²:

Ինչպէ՞ս կ'աւարտուի «սպիտակ փոքրիկ ծաղկի պատմութիւնը»: Թերեւս խոնարհ ծաղիկը կը քաղուի իր գարնան օրերի՞ն, կամ կը փոխադրուի ա՞յլ ծովեզրեր³: Չգիտեմ: Բայց մի բանում վստահ եմ. որ Աստուծոյ ողորմութիւնը կ'ընկերակցի նրան միշտ եւ ամէնուր, եւ որ նա երբեք չի դադարի օրհնել այն սիրելի Մօրը, որը նուիրեց նրան Յիսուսին: Յաւիտեան նա ցնծալու է՝ այդ Մօր դափնեպսակի ճիւղերից մէկը լինելու համար: Յաւիտեան նա երգելու է, այդ գորովալի Մօր հետ, Սիրոյ միշտ նոր երգը:



¹ Բնագիրը «վստահութիւն» բառի փոխարէն օգտագործում է «թողլքում» բառը, որոնք, սակայն, տուեալ դէպքում դիտում ենք իբրեւ հոմանիշներ, որովհետեւ որեւէ մէկը կարող է թողլքել իր անձը Աստուծոյ կամքին այն բանից յետոյ միայն, երբ կը համոզուի (կը վստահանայ), Սուրբ Յովհան Ոսկեբերանի հետ, որ «ինչ կամենում է Աստուած, այն օգուտ է մեզ, եւ ինչ օգուտ է մեզ, այն է կամենում Աստուած»:

² Կատակով կարելի է ասել, որ մայր Ագնէս Յիսուսին չկամեցաւ ներել Թերեզային: Երբ 1896ի Մարտի 21ին վանքի մեծաւորուհի վերընտրուեց մայր Մարիամ Գոնձական, մայր Ագնէս Յիսուսին նրան մղեց Թերեզային հրամայելու ամբողջացնել իր յուշերը, գրի առնելով նաեւ վանական կեանքի տարիներին տեղի ունեցած իրադարձութիւնները: Թերեզան ի կատար ածեց հրամանը, մեզ պարզեւելով իր ինքնակենսագրական երրորդ ձեռագիրը:

³ Թերեզան ակնարկում է իր առաքելութեան մեկնելու հնարաւորութեանը: Սայգոնի Կարմեղոսը, որ հիմնուել էր Լիզեոյի Կարմեղոսի կողմից, իր հերթին պատրաստում էր կարմեղական նոր վանք հիմնել Հանոյում, որի համար էլ անձեր էր փնտռում: